



21-րդ դար

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏ

1 (23)

ԵՐԵՎԱՆ

2009

21-րդ դար

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից

1 (23), 2009

ՆԱԲԱԳՐԱԿԱՆ խորհուրդ

Գագիկ Հարությունյան
(համակարգող)
Սուշեղ Լալայան
Մերգեյ Գրիգորյան
Սպարտակ Մելքոնյան
Սևակ Սարգսյան
Տիգրան Սարգսյան

ՆԱԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
(գլխավոր խմբագիր)
Սևակ Սարգսյան
(գլխ. խմբագրի տեղակալ)
Էդուարդ Դանիելյան
Թամարա Վարդանյան
Լուսինե Բաղդասարյան
(պատասխանատու քարտուղար)
Խոնարհիկ Քարառուղյան
(պատասխանատու խմբագիր)
Սարգիս Հարությունյան

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Գագիկ Հարությունյան (координатор)
Тигран Саркисян
Мушег Лалаян
Севак Саруханян
Сергей Гриняев
Спартак Сейранян

РЕДАКЦИЯ

Գագիկ Հարությունյան (главный редактор)
Севак Саруханян
(заместитель гл. редактора)
Лусине Баграмян
(ответственный секретарь)
Саргис Арутюнян
Тамара Варданян
Хонарик Караугланиян
(ответственный редактор)
Эдуард Даниелян

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գարեն Գարսեպետյան

Հայաստանը և տարածաշրջանային էներգետիկ
գործընթացները տեղեկատվական
ապահովման համատեքստում 3

Արմեն Մանվելյան

ԱՄՆ էներգետիկ քաղաքականության կասսյան
բաղկացուցիչը և հարաբերությունները
տարածաշրջանի երկրների հետ 9

Աշոտ Թավադյան

Տնտեսության առանցքային հիմնախնդիրները 28

Մերգեյ Գրիգորյան

Ռուսաստանը գլոբալ տեղեկատվական
հասարակությունում. սպառնալիքները, ռիսկերը
և դրանց չեզոքացման հնարավոր ուղիները 38

Գարեն Բաբաջանյան

Կրթությունը՝ պետության բրենդի
ձևավորման գործոն 62

Հայկ Սուքիասյան

Տեղեկատվական հասարակություն. «Էլեկտրոնային
կառավարություն» և «Էլեկտրոնային կառավարում» 74

Հարություն Մարության

Հայրենադարձության և աբսորբցիայի
իսրայելական փորձից 88

Վաչե Քալաշյան

ՀՀ պետական պաշտոնյաների էթիկայի կանոնները
և կիրարկումը կոռուպցիայի կանխարգելման
գործընթացում 103

Հուշագիր հեղինակին 122

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Կարեն Կարապետյան

Հարավային Կովկասի և նրա հարևան պետությունների տարածաշրջանն այսօր գտնվում է խոշոր միջազգային, հիմնականում՝ նավթագազային էներգետիկ նախագծերի հատման կետում: Տարածաշրջանի մի շարք երկրներում սեփական ածխաջրածնային ռեսուրսների զգալի պաշարների առկայությունը և մերձավորությունն այդ ռեսուրսների սպառման խոշոր շուկաներին ու տնտեսական կենտրոններին տարածաշրջանը չափազանց գրավիչ են դարձնում միջազգային կապիտալի համար:

Ի՞նչը պետք է ընկած լինի տարածաշրջանային էներգետիկ անվտանգության հիմքում: Ի՞նչը պետք է Հայաստանի համար կողմնորոշիչ հանդիսանա ռեսուրսների համար զուբալ մրցակցությունում, որում առավել ակտիվ են ներգրավվում այն երկրների ընկերությունները, որոնք իրենց տնտեսական զարգացման ապահովմանն անհրաժեշտ բավարար ածխաջրածնային հումքի պաշարներ չունեն: Ի՞նչ տեղ կարող է զբաղեցնել Հայաստանը տարածաշրջանի էներգետիկ քարտեզին: Եվ, վերջապես, ի՞նչ դեր կարող է և պետք է խաղա տեղեկատվական աջակցությունն այս կամ այն էներգետիկ նախագծի մշակման և առաջնության գործում:

Այս հարցերի պատասխաններն առանցքային են էներգետիկայի բնագավառում տարածաշրջանի երկրների իրական ինտեգրմանը հասնելուն ուղղված՝ Հայաստանի արդյունավետ քաղաքականության մշակման առումով:

1. Տեղեկատվական պատերազմները էներգետիկայում և մի շարք նախագծերի քաղաքականացվածությունը

Ներկայիս տարածաշրջանային էներգետիկ նախագծերը քաղաքական պատճառներով տարանջման սխեմաների սահմանափակվածությամբ են «տառապում» և տարածաշրջանային բազմակողմանի համագործակցության օրինակ

չեն հանդիսանում: Նման իրավիճակի առաջին պատճառը քաղաքական մրցակցությունն է, էներգետիկ «ծանրքաշայինների» մրցակցությունը հանքավայրի, հորատանցքի, խողովակի համար: Նման մրցակցությունը Հարավկովկասյան տարածաշրջանում նենգափոխում է իրական համագործակցությունը և երկրները ներքաշում անիմաստ ու անհեռանկար բանավեճի մեջ քաղաքականապես, այլ ոչ թե տնտեսապես հիմնավորված նախագծերի շուրջ:

Այսօր շատ է խոսվում աշխարհում և, մասնավորապես, Հարավային Կովկասում, անվտանգության նոր կառուցվածքի անհրաժեշտության մասին: Կարծում եմ՝ ճիշտ ու տեղին կլինե՞ր խոսել նաև տարածաշրջանի էներգետիկ անվտանգության նոր հայեցակարգի ձևավորման անհրաժեշտության մասին:

Պետք է փաստել, որ տարբեր, այդ թվում և ազգային մակարդակներում խիստ անբավարար և հաճախ միակողմանի է լուսաբանվում տարածաշրջանի էներգետիկ իրավիճակը: Գաղտնիք չէ, որ հարավկովկասյան էներգետիկ նախագծերի քաղաքականացվածությունը խփում է տարածաշրջանի յուրաքանչյուր բնակչի գրպանին: Այնինչ, տարածաշրջանի երկրների բնակչության տեղեկացվածության ցածր աստիճանը հանգեցնում է նրան, որ ընտրանիները կենսագործում են անհրաժեշտ տնտեսական հիմնավորում չունեցող քաղաքական նախագծեր՝ դրանով իսկ «դանդաղ գործողության ական» դնելով էներգետիկայի տակ և առաջ բերելով սպեկուլյատիվ երևույթներ էներգակիրների միջազգային շուկաներում, ինչը, միանգամայն հնարավոր է, հերթական գլոբալ ֆինանսական և տնտեսական ճգնաժամի պատճառ է հանդիսանում:

Ուստի, անհրաժեշտ է քաղաքական և բիզնես-էլիտայի նախաձեռնությունների ապահովմանն ուղղված որակյալ տեղեկատվական աջակցություն էներգետիկայի ոլորտում: Անհրաժեշտ է ապահովել «իշխանություն-բիզնես» կայուն հակադարձ կապը, այնպիսի իրավիճակ, որում բիզնես-էլիտայի կերտիչ ծրագրերն ու նախագծերն օբյեկտիվ և բարձրպրոֆեսիոնալ տեղեկատվական աջակցություն ունենան՝ դրանով իսկ տարածաշրջանի քաղաքական առաջնորդների համար անհրաժեշտ ֆոն ու շարժառիթ ստեղծելով, որպեսզի այդ նախագծերը կենսունակ ու կարևոր համարվեն երկրի զարգացման համար: Նշված փոխգործակցությունը պետք է ծառայի հարմար միջավայրի ստեղծմանը տարածաշրջանում էներգետիկ ծրագրերի փոխադարձ ինտեգրման համար:

Ներկայումս, ցավոք, իրավիճակը հեռու է նշված կողմնորոշիչների ապահովումից: Երկրներից յուրաքանչյուրը, անկասկած, ինքն է ընտրում էներգետիկ անվտանգության ապահովման իր համակարգն ու մոդելը, և, սակայն, գրեթե հաշվի չեն առնվում հարևան երկրներում զարգացող միտում-

ներն ու նախագծերը (որտեղ, մեր կարծիքով, փոխգործակցության ազգային էներգետիկ սեկտորների օպտիմալացման լայն հնարավորություններ կան): Դա տեղի է ունենում.

- տարածաշրջանի երկրների քաղաքական և տնտեսական ինտեգրման հնարավորության նկատմամբ վստահության բացակայության պատճառով, ինչից ելնելով՝ երկրներից յուրաքանչյուրը որդեգրում է առավել լազույն էներգետիկ անկախության և ինքնաբավության ապահովման հայեցակարգ,
- բոլոր էներգետիկ, ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային, նախագծերի տեղեկատվական ուղեկցման գրեթե լիակատար քաղաքականացվածության պատճառով:

Ըստ իս, այսօր անհրաժեշտ է.

1. տեղեկատվական հարթությունում համատեղ ջանքերով մշակել «վարքականոն», հատկապես տարածաշրջանային էներգետիկ նախագծերի լուսաբանման առումով: Այդ վարքականոնի հիմքում պետք է ընկած լինեն ազնվության և օբյեկտիվության սկզբունքները, պրագմատիզմը և համագործակցության նպատակամիտվածությունը,
2. օգտագործել առկա տեղեկատվական ռեսուրսները էներգետիկայի կառավարման առաջադեմ ձևերի ու մեթոդների տարածման և մեր տարածաշրջանի երկրների ու մասնավորապես Հայաստանի էներգետիկ անվտանգության խնդիրների քննարկումներին բնակչության ակտիվ մասնակցության համար,
3. մշտապես բարձրացնել տեղեկատվական գործընթացի մասնակիցների պրոֆեսիոնալ մակարդակը: Տեղեկատվությունը պետք է լինի պրոֆեսիոնալ և որակյալ: Այսօր, ցավոք, հազվադեպ կարելի է հանդիպել էներգետիկ նախագծերի և զարգացման մոդելների բարձրորակ և օբյեկտիվ վերլուծության [1]:

Տարածաշրջանի երկրներում մարդկանց կենսամակարդակի բարելավման գլխավոր պայմաններից մեկը Հարավային Կովկասում էներգառեսուրսների ազատ շուկայի ստեղծումն է ազգային էներգետիկ համակարգերի, հաղորդակցային միջանցքների և երկրների ունեցած գիտատեխնիկական ողջ պոտենցիալի միավորման միջոցով: Սա միջազգային դիվանագիտության կարևորագույն խնդիրներից մեկն է [2]: «*Էներգիա՝ առանց սահմանների*». սա՝ պետք է կարգախոս լինի:

2. Նոր որակ Հայաստանի քաղաքականության մեջ

Այսօր կարելի է փաստել, որ Հայաստանը, սեփական ածխաջրածնային պաշարներ և դեպի ծով ելք չունենալով, տարածաշրջանի պետություններում առկա բարդ ու ոչ միանշանակ քաղաքական-տնտեսական գործընթացների ֆոնին անգամ, երկրի էներգետիկ անվտանգության անհրաժեշտ մակարդակը պահելու խնդրի հաջող լուծման վառ ու հզոր օրինակ է ցույց տալիս:

Հայաստանի էներգետիկ անվտանգության աստիճանի հետագա բարձրացման գործիքներից մեկը պետական մակարդակով որակապես նոր արտահանական քաղաքականության մշակումն է, որը պետք է ուղղված լինի նրան, որ ստեղծվեն ունիկալ և խիստ արդյունավետ հնարավորություններ հարևան երկրների հետ Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական փոխանակման ակտիվացման համար, ինչի միջոցով կարելի կլինի էապես բարձրացնել երկրի էներգետիկ անվտանգության աստիճանը: Հայաստանը պետք է չափազանց ակտիվ դիրք գրավի մեր տարածաշրջանի երկրների համար ընդհանուր «գուգամիտման կետ» ունեցող տարածաշրջանային նոր նախագծերի մշակման և դրանց հետևողական իրականացման գործում: Ներկայիս գլոբալ ֆինանսական և տնտեսական ճգնաժամերի պայմաններում տարածաշրջանային համագործակցությունը, հատկապես էներգետիկայում, պարզապես այլընտրանք չունի:

Երկու գազատար և գազի ստորգետնյա պահուստավորման հզորություններ, ինչպես նաև լրացուցիչ մրցունակ արտադրահզորություններ ունենալով՝ Հայաստանը բոլոր հնարավորություններն ունի դառնալու տարածաշրջանային մասշտաբի յուրատեսակ ազատական էներգետիկ հարթակ: Այս ոչ պարզ խնդրի լուծումը ենթադրում է մոտ ապագայում ինչպես Հայաստանի տնտեսությունում ընդհանրապես, այնպես էլ էներգետիկայում՝ մասնավորապես, իրագործել հավակնոտ ծրագրեր, որոնց նպատակներն ու խնդիրները կարելի է ներկայացնել հետևյալ առանցքային թեզիսներով.

- Հայաստանի էներգետիկ անվտանգության բարձրացում մրցունակ արտահանական շուկայի ձևավորման միջոցով,
- արտահանական կողմնորոշում ունեցող էներգետիկ նախագծերի իրականացմանն ուղղված ՀՀ պետական քաղաքականության մշակում և իրագործում, որի հիմքում պետք է լինի գնային ճկուն քաղաքականությունը,
- ռազմավարական գործընկերների՝ տարածաշրջանային էներգետիկ համագործակցության ընդլայնմանն ուղղված համաձայնեցված դիրքորոշումների մշակում. համագործակցությանը ներգրավված պետք է լինեն ոչ միայն Հայաստանի մերձավոր հարևանները, այլև Թուրքմենստանը, Իրաքը և այլ երկրներ:

Ահա այն գլխավոր պայմանները, որոնց ապահովման պարագայում Հայաստանը կարող է վերածվել տարածաշրջանի էներգետիկ «բազայի». արտաքին տնտեսական փոխանակման հետագա ազատականացում, նորարարական ձեռքբերումների, առաջավոր տեխնիկական ստանդարտների ու տնտեսության պետական և կորպորատիվ կառավարման մեթոդների յուրացման ընդլայնում, անցում արտահանական քաղաքականության նոր որակի: Անշուշտ, խիստ մեծ է պրոֆեսիոնալ տեղեկատվական աջակցության դերը նշված հավակնոտ ծրագրի իրականացման գործում:

Թվարկվածը չի կարող լիարժեք իրագործվել, եթե տարածաշրջանի բոլոր երկրները չըմբռնեն էներգետիկ համագործակցության միավորիչ հեռանկարի, իրավական ռեժիմի (որը համաձայնեցված է միջազգային նորմերին և կամայական, միակողմանի փոփոխության չի ենթարկվել) ընդունման և դրան հետևելու կարևորությունը: Հայաստանն այսօր տարածաշրջանում առկա նոր էներգետիկ իրավիճակը գնահատում է որպես իր համար շատ դրական փաստ և խիստ իրական է համարում իր ներգրավված լինելը տարածաշրջանային խոշոր էներգետիկ նախագծերին, որոնցում ունի բոլոր հնարավորությունները դառնալու Հարավային Կովկասի էներգետիկ քարտեզի կարևոր խաղացողներից մեկը:

Եվ վերջում, կարծում ենք, որ այս ծավալուն խնդիրն իրագործելը շատ ավելի հեշտ կլինի, եթե մեր նախաձեռնություններն ու նախագծերն ունենան անհրաժեշտ մակարդակի տեղեկատվական աջակցություն, ինչի հույսը մենք ունենք մեր գործունեության մեջ:

Դեկտեմբեր, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Կարապետյան Կ.*, Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության հեռանկարները, Եր., Էդիթ Պրինտ, 2008:
2. *Կարապետյան Կ.*, Տարածաշրջանային համագործակցության և էներգետիկ անվտանգության հիմնախնդիրները Հարավային Կովկասում, Եր., Էդիթ Պրինտ, 2008:

АРМЕНИЯ И РЕГИОНАЛЬНЫЕ ЭНЕРГЕТИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В КОНТЕКСТЕ ИНФОРМАЦИОННОГО ОБЕСПЕЧЕНИЯ

Карен Карапетян

Резюме

Что должно лежать в основе региональной энергетической безопасности? Что должно быть для Армении ориентиром в условиях глобальной конкуренции за ресурсы, в которую все более активно включаются компании из стран, не располагающих запасами углеводородного сырья, достаточными для обеспечения их экономического развития? Какое место может занимать Армения на энергетической карте региона? И, наконец, какую роль может и должна играть информационная поддержка в разработке и продвижении тех или иных проектов в энергетике?

Ответы на эти вопросы являются ключевыми для выработки эффективной политики Армении, нацеленной на достижение реальной интеграции стран региона в области энергетики.

Сегодня можно констатировать, что Армения, не обладая собственными запасами углеводородных ресурсов и выходом к морю, на фоне сложных и неоднозначных политико-экономических процессов, имеющих место в государствах региона, демонстрирует яркий и мощный пример успешного решения задачи по поддержанию необходимого уровня энергетической безопасности страны.

ԱՄՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՍՊՅԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉԸ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

Արմեն Մանվելյան

ԽՍՀՄ փլուզումը ԱՄՆ-ին հնարավորություն տվեց ակտիվացնել քաղաքականությունը Կասպից ծովի ավազանում, որն արդեն այդ շրջանում նրա համար կարևոր նշանակություն էր ձեռք բերում: Եթե անցած դարի 90-ականների սկզբին ԱՄՆ-ը առանձնապես ակտիվ չէր այս տարածաշրջանում, ապա հետագայում Վաշինգտոնը վերանայեց իր քաղաքականությունը և սկսեց ակտիվորեն զբաղվել ողջ տարածաշրջանով՝ շեշտը հատկապես դնելով էներգետիկ բաղկացուցիչ վրա:

Հոդվածում փորձ է արվել ներկայացնել տարածաշրջանի գործերին ԱՄՆ ակտիվ ներգրավման ձգտումները նորանկախ պետությունների ի հայտ գալու և տարածաշրջանում ընթացող էթնիկ հակամարտությունների համատեքստում:

1. Նոր նավթամուղի կառուցման քաղաքական նշանակությունը

Կասպից ծովի շուրջ նորանկախ պետությունների ձևավորմանը զուգընթաց առաջացավ նաև նոր նավթամուղի ստեղծման գաղափարը: Սկզբնական շրջանում այս հարցով զբաղվում էին մասնավոր ընկերությունները, որոնք քննարկում էին Ռուսաստանը շրջանցող նոր խողովակաշարի կառուցման գաղափարը: Դա բացատրվում էր նրանով, որ դեռ ԽՍՀՄ օրոք կառուցված բոլոր խողովակաշարերը, սկիզբ առնելով Ադրբեյջանից, Ղազախստանից կամ Թուրքմենստանից, անցնում էին Ռուսաստանի տարածքով: Վերջինս էլ ստեղծված մենաշնորհային վիճակն օգտագործում էր սեփական քաղաքական և տնտեսական նպատակների համար:

1990-ականների առաջին կեսին տարածաշրջանում բավական ակտիվ էին ամերիկյան նավթային ընկերությունները և այն պետությունները, որոնք ցանկանում էին անկախանալ Ռուսաստանից: Վերջինները փորձում էին ակտիվացնել հարաբերություններն ԱՄՆ-ի հետ: Ամերիկյան նավթային ընկերությունների հետաքրքրությունը տարածաշրջանի նկատմամբ աճում էր, և դա զգում էին նաև տարածաշրջանի երկրները: Մասնավորապես, 1993թ. Թուրքմենստանի նախագահ Սափարուրադ Նիյազովը «վարձեց» ԱՄՆ

նախկին պետքարտուղար Ա. Հեյգին (1981-82թթ. Ռոնալդ Ռեյգանի նախագահության օրոք ԱՄՆ պետքարտուղար- *հեղ.*), որը պետք է զբաղվեր Նիյագովի «լոբբինգով» և մասնավորապես առաջ մղեր Թուրքմենստանից Աֆղանստանով դեպի Պակիստան կառուցվող գազամուղի և Իրանի տարածքով կառուցվելիք հնարավոր նավթամուղի շինարարության հարցը [1]: Չնայած Հեյգի առաքելությունը ձախողվեց, այդ շրջանում Սպիտակ տունը խուսափում էր համագործակցել Թուրքմենբաշու բռնատիրական համակարգի հետ, սակայն կասպյան երկրները շարունակում էին քննարկել նոր, Ռուսաստանը շրջանցող նավթամուղի կառուցման գաղափարը: Այդ շրջանում Սպիտակ տունը սկսել էր լրջորեն վերանայել հարաբերությունները Կրեմլի հետ, և արդեն 1994թ. սեպտեմբերին ԱՄՆ նախագահ Բիլ Բլինթոնը հայտարարեց, որ Ռուսաստանը պետք է հարգի նորանկախ պետությունների ինքնիշխանությունը [2, p. 133]: Ամերիկահայ քաղաքագետներ Դոքմեջյանը և Սիմոնյանն այդ հայտարարությունը համարում են ԱՄՆ ռուսական քաղաքականության նոր շրջան, երբ Վաշինգտոնը սկսեց ավելացնել իր ցուցաբերած օգնությունը տարածաշրջանի երկրներին՝ արդեն հաշվի չառնելով Ռուսաստանի շահերը [2]: Այս պայմաններում նոր նավթամուղի կառուցման հարցը Քլինթոնի վարչակազմի համար քաղաքական նշանակություն ստացավ: Վերջինը հստակորեն նշում է, որ Կասպից ծովի ավազանը միջազգային նավթային շուկայի հետ կապող նավթամուղը պետք է շրջանցի թե՛ Ռուսաստանը և թե՛ Իրանը: Այսինքն՝ այդ շրջանում արդեն Սպիտակ տանը հստակորեն ձևավորվեց այն կարծիքը, թե կառուցվելիք Բաքու-Ջեյհան նավթամուղն ունի նաև քաղաքական ուղղվածություն և հենց այդ առումով էլ այն ձեռնտու է Վաշինգտոնին: Ընդհանրապես, կասպյան նավթը որպես առաջնահերթություն հայտարարելով՝ ԱՄՆ-ը հայտարարում էր, որ այն նաև դիտարկում է որպես այլընտրանք արաբական նավթին: Կասպիցի հարցերով պատասխանատու Սթրոք Թելբորթը նույնիսկ հայտարարում էր, որ այստեղ կենտրոնացած է ընդհանուր առմամբ մոտ 200 մլրդ բարել նավթ [3]: Նման հայտարարություններն արվում էին տարածաշրջանի քաղաքական և տնտեսական նշանակությունն ԱՄՆ-ին ցույց տալու համար: Ավելի ուշ այս թվերը (Կասպիցի ավազանում նավթի ապացուցված պաշարների քանակը) կրճատվեցին մոտ 2 անգամ: Սակայն այդ շրջանում հարկավոր էր արդարացնել ԱՄՆ ակտիվ հետաքրքրությունը տարածաշրջանով և հատկապես կարևորել Բաքու-Ջեյհանի կառուցման անհրաժեշտությունը, հետևաբար տեղական մամուլը հեքիաթային թվեր էր ներկայացնում նավթի և գազի պաշարների մասին, իսկ ամերիկյան մամուլը տպագրում էր դրանք:

Քլինթոնի վարչակազմը, կարևորելով Կասպից ծովի ավազանը և իր

շահերի առաջնության նպատակով, հայտարարեց, որ աջակցում է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի՝ որպես կասպյան նավթի հիմնական արտահանման խողովակաշարի, կառուցմանը (*Main Export Pipeline - MEP*) [4]: Ըստ Սպիտակ տան, Բաքու-Ջեյհանի կառուցմամբ նրանք նախ՝ թուլացնում են նախկին խորհրդային երկրների կախվածությունը ռուսական խողովակաշարային համակարգից, երկրորդ՝ ուժեղացնում են իրենց ազդեցությունը տարածաշրջանում, քանի որ այլընտրանքային նավթամուղը պետք է լիներ ամերիկյան քաղաքական վերահսկողության ներքո: Սկսվեց հարաբերությունների և քաղաքական ազդեցությունների պայքարի մի ժամանակաշրջան, որը որոշ քաղաքագետներ անվանեցին «Նոր մեծ խաղ» (*New Great Game*): Այսպիսով, ԱՄՆ-Ռուսաստան հարաբերություններում 1990-ական թթ. կեսերին ձևավորվում է նոր որակ: ԱՄՆ-ը այլևս չի կարևորում Ռուսաստանի դերակատարումը Հարավային Կովկասում, Կասպից ծովի ավազանում և Կենտրոնական Ասիայում՝ դրա փոխարեն ձգտելով էլ ավելի հզորացնել իր ազդեցությունը նշված տարածաշրջաններում:

2. ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունների ձևավորումը և 907 ուղղումը

Ըստ Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Բրենդա Շիֆերի, քլինթոնյան վարչակազմն իր ազդեցության ուժեղացման իրական քայլեր չէր կատարում: Շիֆերը նշում է, որ ԱՄՆ քաղաքական շահերի առաջնության հարցում խանգարում էին Կովկասում առկա հակամարտությունները, Ռուսաստանի ակտիվ դիմադրությունն ամերիկյան խողովակաշարային քաղաքականությանը և 907 բանաձևը, որը խոչընդոտում էր Ադրբեջանին իրական օգնություն տրամադրելուն: Շիֆերն Ադրբեջանը համարում է տարածաշրջանում ԱՄՆ իրական դաշնակիցը, որն ակտիվորեն առաջ էր մղում Վաշինգտոնի քաղաքականությունը Հարավային Կովկասում և Կասպից ծովի ավազանում: Սակայն հայտնի օրինագծի պատճառով Վաշինգտոնը զրկված էր Ադրբեջանին պետական մակարդակով օգնություն տրամադրելու հնարավորությունից:

Անդրադառնալով «Ազատության աջակցության ակտի» 907 ուղղմանը՝ նկատենք, որ այն ընդունվեց հայկական լոբբիստական կառույցների ամենաակտիվ աշխատանքի շնորհիվ: 1992թ. ԱՄՆ Կոնգրեսը, արձագանքելով Ադրբեջանի ակտիվ մասնակցությանը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ շրջափակման քաղաքականությանը, «Ազատության աջակցության ակտի» մեջ կատարեց 907 ուղղումը, որով արգելեց ցանկացած տիպի օգնության տրամադրում Ադրբեջանի կառավարությանը [5]: «Ազատության աջակցության ակտը» ստեղծված էր կանոնակարգելու համար ԱՄՆ օգնու-

թյունը ԽՍՀՄ նախկին հանրապետություններին: Այն պետք է կարևոր դեր կատարեր այս տարածաշրջանում Վաշինգտոնի ազդեցության հզորացման համար, և հասկանալի էր, որ Ամերիկայի հայկական կառույցները պետք է իրենց ազդեցությունն օգտագործեին օրենքում հայանպաստ փոփոխություններ կատարելու նպատակով՝ 1992թ. ամռանը Լեռնային Ղարաբաղում ընթացող պատերազմական ծանր իրադրության պայմաններում: ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում օրենքի քննարկման ժամանակ առաջարկվեց 907 ուղղումը մտցնել նաև օրենքի մեջ, դեմ արտահայտվեց միայն սենատոր Ռիչարդ Լուգարը, սակայն բանաձևն ընդունվեց ձայների մեծամասնությամբ, այն հաստատվեց նաև Սենատի լիազումար նիստում, իսկ 1992թ. հոկտեմբերին Ջորջ Բուշ ավագը ստորագրեց «Ազատության աջակցության ակտ» կոչվող օրենքը՝ փաստորեն, որոշակի տնտեսական պատժամիջոցներ սահմանելով Ադրբեյջանի համար:

Ըստ ամերիկացի շատ վերլուծաբանների, 907 ուղղումը հետագայում խանգարել է ԱՄՆ-ին Ադրբեյջանի հետ ռազմավարական համագործակցության իրականացման և լայնածավալ օգնություն տրամադրելու գործում: Ամերիկյան փորձագետներն այն կարծիքին էին, որ Բաքու-Ջեյհանը կարող է դառնալ այն գործիքը, որի միջոցով Վաշինգտոնը առաջ կմղի իր քաղաքականությունը տարածաշրջանում [4]: 1990-ականների կեսերին 907 ուղղումը շրջանցելու ձևեր էին փնտրում: 1996թ., երբ քննարկվում էր 1997թ. ամերիկյան բուջեն և ԱՊՀ երկրներին օգնություն տրամադրելու հարցը, Իլինոյս նահանգից դեմոկրատ կոնգրեսական Ջոն Փորթերը հանդես եկավ օրենսդրական նախաձեռնությամբ, որով նախատեսվում էր որոշակի փոփոխություն մտցնել «Ազատության աջակցության ակտում»՝ Ադրբեյջանին համապատասխան օգնություն տրամադրելու վերաբերյալ: Այս նոր նախաձեռնությամբ ԱՄՆ-ը ուղղակի օգնություն կարող էր տրամադրել և՛ Ադրբեյջանին, և՛ միաժամանակ Լեռնային Ղարաբաղին: Այսինքն՝ Ադրբեյջանին տրամադրվելիք ցանկացած օգնության 1/7 մասը պետք է տրամադրվեր Ղարաբաղին: Այս առաջարկն առաջացրեց պաշտոնական Բաքվի դժգոհությունը: Ըստ վերջինի, այս օրենսդրական նախաձեռնությամբ կասկածի տակ էր դրվում Ադրբեյջանի տարածքային ամբողջականությունը: Ադրբեյջանի նախագահ Հեյդար Ալիևը ստիպված էր հանդիպել Բաքվում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Կոզլարիչիի հետ և բողոք հայտնել այդ օրինագծի առնչությամբ՝ հայտարարելով, որ դրա ընդունման դեպքում ամերիկա-ադրբեյջանական հարաբերությունները լրջորեն կխաթարվեն [6]: Ադրբեյջանական կողմի բողոքներից հետո Քլինթոնի վարչակազմը ձեռնամուխ եղավ Փորթերի ուղղման մեջ փոփոխություններ մտցնելուն, որից հետո «Ադրբեյջան և Լեռնային Ղարաբաղ» տերմիններն անհետացան, իսկ Բաքուն

հենց նման ձևակերպումների դեմ էր բողոքում՝ նշելով, որ այդպիսով Ղարաբաղին Ադրբեջանի տարածքից դուրս միավոր է համարվում: Այս փոփոխություններով նոր օրինագիծը 1996թ. սեպտեմբերի 30-ին ստորագրեց ԱՄՆ նախագահ Բիլ Կլինթոնը [6]: Այսպիսով, ԱՄՆ-ը հնարավորություն էր ստանում որոշակի օգնություն տրամադրել Ադրբեջանի մասնավոր և, մասամբ, պետական սեկտորին:

Ադրբեջանը հետագայում ևս ակտիվ ջանքեր էր գործադրում 907 ուղղումը փոփոխելու կամ այն ամբողջովին վերացնելու համար: 1990-ականների վերջին, երբ ընդունվեց ռազմավարական որոշում Բաքու-Ջեյհանի կառուցման մասին, Քլինթոնի վարչակազմը լուրջ ջանքեր էր գործադրում Կոնգրեսին համոզելու, որ բանաձևը կասեցվի: Կոնգրեսում ակտիվորեն աշխատում էին նաև նավթային լոբբիստական կառույցները: 1998թ. Ներկայացուցիչների պալատի ղեկավար Ռոբերտ Լեվինգսթոունի ակտիվ ջանքերով Կոնգրեսի քննարկմանը ներկայացվեց մի օրինագիծ, որը չեղյալ էր հայտարարում Ադրբեջանին օգնություն տրամադրելու սահմանափակումները, սակայն հայկական լոբբիստական կառույցների ակտիվ ջանքերի շնորհիվ օրինագծին կողմ քվեարկեց 182 կոնգրեսական, դեմ՝ 231-ը, այսպիսով՝ բանաձևը տապալված էր [6]: Հետագայում Ադրբեջանի պետական մարմինների բազում հարցումներին ամերիկյան կողմը պատասխանում էր, որ 907 ուղղման փոփոխությունը հնարավոր կլինի հայադրբեջանական հարաբերությունների բարելավումից հետո: Ադրբեջանում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար Լիսա Փիասեկը նշել է, որ «մինչև Հայաստանի հետ խաղաղության պայմանագրի կնքումը, այդ բանաձևի փոփոխությունը քիչ հավանական է», իսկ կասպյան հարցերով ԱՄՆ նախագահի խորհրդական Ռիչարդ Մորնինգսթարը նկատել է, որ այն «Կոնգրեսն է ընդունել, նա էլ թող չեղյալ հայտարարի» [6]:

Մինչև 2001թ. սեպտեմբերի նյույորքյան հայտնի ահաբեկչությունը, 907 ուղղման փոփոխությունը քիչ հավանական էր համարվում:

3. Ջորջ Բուշի վարչակազմը և Ադրբեջանը

2000թ. ԱՄՆ նախագահական նոր ընտրությունների ընթացքում ձևավորված Ջորջ Բուշ-կրտսեր - Դիք Չեյնի տանդեմը սկսեց մեծ ուշադրություն դարձնել կասպյան էներգետիկ ռեսուրսների հարցին և հատկապես Ադրբեջանին: Վերջիններս սուր քննադատության էին ենթարկում Քլինթոնի վարչակազմին, որը բավարար ուշադրություն չէր դարձնում այդ տարածաշրջանին և չէր զարգացնում էներգետիկ քաղաքականությունը:

Նախընտրական շրջանում փոխնախագահների հեռուստաբանավեճի ժամանակ Դիք Չեյնին նշեց. «Իմ գնահատականն այն է, որ ներկայումս չկա

մշակված ամբողջական էներգետիկ քաղաքականություն, ինչն անհանգստացնում է, քանի որ վարչակազմը ոչինչ չի անում այդ խնդրի շուրջ» [7]: Բուշի և նրա շրջապատի հետաքրքրությունն էներգետիկ խնդիրներով բացատրվում էր ոչ միայն ԱՄՆ քաղաքական շահերով, այլ նաև նրա և փոխնախագահ Դիք Չեյնիի անձնական հետաքրքրությամբ: Հայտնի է, որ Չեյնին ԱՄՆ նավթային ամենամեծ ընկերություններից մեկի՝ *Halliburton-ի* գործադիր տնօրենն էր, իսկ վերջինս իր հերթին հետաքրքրված էր կասպյան նավթով և արդեն աշխատանքներ էր տանում այդ տարածաշրջանում: ԱՄՆ-Ադրբեջան համաժողովի ժամանակ Դիք Չեյնին հայտարարեց. «Ադրբեջանը մեծ կարևորություն ունի ոչ միայն այդ տարածաշրջանի ապագայի, այլ նաև նավթային շուկայում գլոբալ հավասարակշռության պահպանման և նավթի դիվերսիֆիկացման առումով» [7]: Չեյնին նաև չէր թաքցնում, որ Ադրբեջանի նավթային պոտենցիալը ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական հետաքրքրություն է ներկայացնում: Այսպիսով, Ջորջ Բուշի վարչակազմը սկսեց առաջնային հետաքրքրություն դրսևորել ընդհանրապես Կասպից ծովի ավազանի և մասնավորապես՝ Ադրբեջանի հանդեպ: Սակայն 2000-2001թթ. փորձագետները նշում էին, որ Ադրբեջանը չունի համապատասխան քանակությամբ նավթ, հետևաբար այս նավթամուղը տնտեսական առումով իրեն չի արդարացնի: Ուշանում էր նաև Ադրբեջանի հիմնական նավթադաշտի՝ Ազերի-Չիրաք-Գյունեշլիից նավթի արդյունահանումը: Այս հարցի շուրջ կար նաև լուրջ տարաձայնություն Բաքվի և Աշգաբադի միջև: Այդ պատճառով էլ մասնավոր ընկերությունները և նավթային հսկաներն առանձնապես մեծ հետաքրքրություն չէին դրսևորում Բաքու-Ջեյհան ծրագրի նկատմամբ՝ այն համարելով մեռելածին: Այս իրավիճակի պատճառը նաև միջազգային հումքային բորսաներում նավթի ցածր գներն էին:

Կասպյան նավթի նկատմամբ Սպիտակ տան հետաքրքրությունն այնքան մեծ էր, որ Ջորջ Բուշ-կրտսերը նույնիսկ հրավիրեց Ազգային անվտանգության խորհրդի նիստ՝ ստեղծված իրավիճակը քննարկելու և նախագիծը ֆինանսավորելու ելքեր գտնելու համար: Այս նախագծի նկատմամբ ակտիվ հետաքրքրություն էր ցուցաբերում նաև Ջորջ Բուշ-կրտսերի այն ժամանակվա ազգային անվտանգության հարցերով խորհրդական Քոնդոլիզա Ռայսը: Այդ շրջանում պարզ դարձավ, որ ԱՄՆ նոր վարչակազմը հստակ քաղաքականություն է տանում՝ ուղղված Կասպից ծովի ավազանից և Կենտրոնական Ասիայից էներգակիրների առաքման վրա սեփական վերահսկողություն սահմանելուն. Բաքու-Ջեյհանը ռազմավարական նշանակություն է ստանում Վաշինգտոնի համար:

2001թ. նոյոբրյան հայտնի ահաբեկչությունից հետո Սպիտակ տունը

կարողացավ համոզել Կոնգրեսին կասեցնել 907 ուղղման գործունեությունը, ինչը նրան հնարավորություն էր տալիս լայնամասշտաբ օգնություն տրամադրել Ադրբեյջանին: 2001թ. հոկտեմբերի 10-ին Կոնգրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում տեղի ունեցած քննարկման ժամանակ շատ կոնգրեսականներ բարձրացրին այդ ուղղումը չեղյալ հայտարարելու հարցը՝ այն պայմանավորելով Ադրբեյջանի կարևոր դերով Աֆղանստան օդային միջանցք ունենալու հարցում: Մակայն հայկական լոբբիստական կառույցների և հայամետ կոնգրեսականների ելույթներից հետո որոշում ընդունվեց 907 ուղղումը ժամանակավորապես «սառեցնելու» մասին [8]: Այս ուղղումից հետո Ջորջ Բուշի վարչակազմն ազատ էր Ադրբեյջանին լայն տնտեսական օգնություն տրամադրել և ակտիվորեն ներգրավվել նոր նավթամուղի կառուցման գործում:

Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարը հայտարարվում է ռազմավարական նշանակություն ունեցող և նույնիսկ կոչվում է արտահանման հիմնական խողովակաշար (*Main Export Pipeline - MEP*) [4]: Այսպիսով, սկսվում է ԱՄՆ-Ադրբեյջան ռազմավարական հարաբերությունների նոր շրջան, որի առանցքը կարելի է համարել Բաքու-Ջեյհան նավթամուղը: Այս խողովակաշարի նշանակությունը քաղաքական իմաստով կարևոր էր ԱՄՆ-ի համար, քանի որ, ըստ ամերիկացի վերլուծաբանների, այն թուլացնում էր տարածաշրջանի երկրների կախվածությունը Ռուսաստանից և թույլ չի տալիս օգտագործել Իրանի տարածքը կասպյան նավթը միջազգային շուկա դուրս բերելու համար [4]:

4. Վրաստանը՝ առանցքային երկիր ԱՄՆ-ի համար

ԱՄՆ-ը ակտիվ քաղաքականություն էր վարում նաև հարավկովկասյան մեկ այլ պետությունում՝ Վրաստանում: Նշենք, որ Վրաստանը ԱՊՀ վերջին երկիրն էր, որի անկախությունը ճանաչեց և որի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց ԱՄՆ-ը: Գամսախուրդիայի իշխանությունը չէր վայելում Վաշինգտոնի վստահությունը, վերջինս երկրում սանձազերծել էր քաղաքացիական պատերազմ:

1992թ. մայիսի 10-ին վրացական ընդդիմությունը Շևարդնաձեի գլխավորությամբ և Ռուսաստանի ակտիվ աջակցությամբ կարողացավ տապալել Գամսախուրդիային և վերցնել իշխանությունը [9]: Նշենք, սակայն, որ ի տարբերություն Գամսախուրդիայի վարչակազմի, Շևարդնաձեն վայելում էր Սպիտակ տան բարեհաճությունը, և ամերիկացիներն ամեն ինչ անում էին՝ շահելու համար թբիլիսյան նոր իշխանությունների համակրանքը, մանավանդ որ վերջինս լուրջ խնդիրներ ուներ իր տարածքային ամբողջականությունը

պահպանելու հարցում: Վաշինգտոնը ցանկանում էր Վրաստանը դուրս բերել Ռուսաստանի ազդեցության ոլորտից, ինչը համընկնում էր նաև Շևարդնաձեի վարչակազմի շահերի հետ, որը հենց Ռուսաստանին էր մեղադրում օսերի և արխագների անջատողական շարժումներին աջակցելու մեջ և դա գնահատում էին որպես իրենց ներքին գործերին խառնվելու փորձ:

1992թ. հոկտեմբերին Ջորջ Բուշ-ավագը ստորագրեց «Ազատության աջակցության ակտ» հայտնի օրենքը, որով ԱՄՆ-ը սկսում էր ֆինանսական օգնություն տրամադրել ԱՊՀ երկրներին: Օրենքի ընդունումը Վաշինգտոնին հնարավորություն տվեց ընդլայնել գործունեությունը Վրաստանում, որին արդեն ընդունում էր որպես տարածաշրջանում իր քաղաքականությունն առաջ մղելու համար կարևոր երկիր [9]: 1993թ. սեպտեմբերին Արխագիայում հակամարտության սրման պայմաններում Ռուսաստանում ԱՄՆ դեսպան Թոմաս Փիկերինգը հայտարարեց, որ «ԱՄՆ-ը աջակցում է և կշարունակի աջակցել Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեին... Վրաստանի ղեկավարը պետք է վստահ լինի, որ մենք պատրաստ ենք նրան օգնելու» [10]: Սա, թերևս, առաջին բացահայտ հայտարարությունն էր հոգուտ Շևարդնաձեի և Վրաստանի իշխանությունների՝ ընդդեմ Ռուսաստանի: Ամերիկացիներն իրենց հսկողության տակ վերցրին նույնիսկ Վրաստանի նախագահի անձնական անվտանգության խնդիրները: Բիլ Բլինթոնի հրամանով ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչությունը վերապատրաստեց Շևարդնաձեի թիկնազորին՝ նրան տրամադրելով նաև անհրաժեշտ գույք և տեխնիկա: Վրաստանի նախագահին իր հերթին դիմեց Վաշինգտոնին խնդրանքով՝ վերապատրաստել վրացական բանակը և պատրաստել ռազմական նոր կադրեր [10]: 1990-ական թթ. Վրաստանում ռուս-ամերիկյան հարաբերությունների սրումը, ըստ ամերիկացի քաղաքագետ Արիել Քոհենի, կապված էր Կասպից ծովից դեպի վրացական նավահանգիստներ էներգակիրների առաքման խնդրի և այդ հարցում ԱՄՆ հետաքրքրությունների հետ:

Չնայած Շևարդնաձեի Ռուսաստանի ճնշման տակ ստիպված էր մտնել ԱՊՀ կազմ, սակայն նրա մերձեցումը ԱՄՆ-ի հետ շարունակվում էր: Քոհենը գրում է, որ արխագական պատերազմը Ռուսաստանն օգտագործում էր, որպեսզի հնարավորինս մոտ լինի Վրաստանի հիմնական նավահանգիստներին՝ Փոթիին և Սուփսային, որտեղից Արևմուտքը ծրագրում էր դուրս տանել կասպյան նավթը [9]: 1995թ., գրում է Քոհենը, Ռուսաստանը ճնշում էր գործադրում Վրաստանի վրա՝ արգելելու համար դեպի Սուփսա նավթամուղ կառուցելու ամերիկյան ծրագրերը: Սակայն Վրաստանի ղեկավարությունը շարունակում էր արևմտամետ քաղաքականությունը և չմիացավ նույնիսկ Մոսկվայի կողմից ձևավորվող ռազմական նոր դաշինքին՝ ՀԱՊԿ-ին, այսպիսով

«վտանգելով հարաբերությունները Ռուսաստանի հետ» [9]: Վրաստանի շուրջ ԱՄՆ-Ռուսաստան նոր մրցակցության նպատակը այդ երկիրը վերահսկելն էր, որպեսզի հնարավոր լինի կառուցել դեպի Սուփսա ձգվող նոր նավթամուղը, իսկ հետագայում օգտագործել այդ երկրի տարածքը դեպի Թուրքիա նոր խողովակաշարերի անցկացման համար: Այսինքն՝ ԱՄՆ-ին Վրաստանը հարկավոր էր որպես իր կողմից վերահսկվող տարածք, որտեղով կկարողանա Կասպիցի նավթը և գազը տեղափոխել Արևմուտք՝ առանց Ռուսաստանի միջնորդության:

Էներգետիկ քաղաքականության հարցում ամերիկյան տարածաշրջանային քաղաքական շահերի պաշտպանությունը Վրաստանի ղեկավարությունը դիտարկում էր որպես գլխավոր նախապայման սեփական իշխանության և Վրաստանի անվտանգության պահպանման ու Ռուսաստանից կախվածության նվազեցման համար: Էներգետիկ միջանցքի հարցերն էին հիմնական այն խնդիրները, որոնց լուծման համար ԱՄՆ-ը կարևորում է Վրաստանի դերը տարածաշրջանում: Նշանակում է՝ Վրաստանը ոչ թե ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականության նպատակն էր, այլ ընդամենը միջոց տարածաշրջանից Ռուսաստանի դուրսմղման և վերջինս շրջանցող, Կասպից ծովից ձգվող նոր ռազմավարական նավթամուղի ու գազամուղի կառուցման հարցում:

2001-ի հոկտեմբերին տարածաշրջանում ԱՄՆ քաղաքականության մասին զեկույցով հանդես գալով ԱՄՆ Կոնգրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում՝ հայտնի փորձագետ Ջեյնո Բարանը կարևորում էր Վրաստանի տարանցիկ նշանակությունը Վաշինգտոնի շահերի համար: 2001-ի սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո սկսված ԱՄՆ-Ռուսաստան հակաահաբեկչական միասնական քաղաքականությունը և կասպյան տարածաշրջանից ու Կենտրոնական Ասիայից էներգակիրների տարահանման հարցերը նույն նժարի վրա դնելով՝ Բարանը գրում է. «Այժմ վտանգ կա, թե ԱՄՆ-Ռուսաստան հակաահաբեկչական պայքարը կարող է նվազեցնել Վրաստանի կարևորությունը, սակայն ես կարծում եմ, որ Վրաստանը կդառնա առավել նշանակալի ԱՄՆ ազգային անվտանգության հետաքրքրությունների տեսանկյունից»: Խոսելով կասպյան տարածաշրջանում Վրաստանի դերի մասին՝ Ջեյնո Բարանը նշում է, որ կայունությունը Վրաստանում հատկապես կարևոր է ԱՄՆ շահերի համար, քանի որ վերջինս ձգտում է ուժեղացնել տարածաշրջանի նորանկախ երկրների ինքնիշխանությունը, խրախուսում է նրանց համագործակցությունը հատկապես Էներգետիկ բնագավառում, նոր ինքնուրույն խողովակաշարերի կառուցման հարցում, որոնք կասպյան նավթը և գազը դուրս կբերեն միջազգային շուկա և կբարձրացնեն ամերիկյան ընկերությունների՝ այդ երկրներում նոր ներդրումներ կատարելու հնարավորությունը,

հատկապես էներգետիկ բնագավառում [11]: Այսպիսով նյույորքյան հայտնի ահաբեկչությունից հետո ձևավորվող տարածաշրջանային նոր քաղաքականության մեջ ԱՄՆ-ի համար Վրաստանը կարևորվում էր որպես իր կողմից վրահսկվող միջանցք կասպյան նավթի արտահանման համար: Նման քաղաքականությունը Ջեյնո Բարանը հակառուսական չէր համարում: Այն «ընդդեմ ռուսական մենաշնորհի է», գրում է քաղաքագետը: «Մի բան պարզ է, եթե Վրաստանը ձախողվի, ապա Ռուսաստանը կկարողանա վերականգնել ազդեցությունը միջանցքի վրա»:

Այս քաղաքականության մեջ ԱՄՆ-ը կարևորում էր ամերիկյան նավթային ընկերությունների դերակատարումը, որոնք ակտիվորեն ներդրումներ էին կատարում տարածաշրջանի երկրների նավթային սեկտորում: Մասնավորապես, ամերիկյան *Chevron* ընկերությունն առաջինն էր, որ սկսեց ներդրում կատարել Արևմուտք-Արևելք տրանսպորտային միջանցքում: *Chevron*-ը սկսեց Ղազախստանում արդյունահանված նավթի մի մասը միջազգային շուկա առաքել Բաքու-Բաթում երկաթգծով, իսկ մինչև Բաքու այն առաքվում էր Կասպից ծովով՝ նավթատարների միջոցով: Նավթային ընկերություններն ամերիկացիների աջակցությամբ արագ ֆինանսավորեցին նաև Բաքու-Սուփսա և Բաքու-Ջեյհան խողովակաշարերի կառուցումը: Ավելի ուշ սկսվեց Բաքու-Էրզրում գազամուղի կառուցումը, որը Շահ-Ղենիզ հանքավայրից գազը պետք է առաքեր Թուրքիա, իսկ այնտեղից էլ՝ Եվրոպա: Այսինքն՝ պարզ էր, որ պաշտոնական Վաշինգտոնը Հարավային Կովկասը դիտում էր որպես կասպյան նավթի արտահանման կարևոր միջանցք, իսկ այդ միջանցքի առանցքային երկիրը, ըստ նրա, Վրաստանն էր, առանց որի սևծովյան նավահանգիստների և տարածքի՝ անհնար կլինի լիակատար վերահսկողություն սահմանել Արևելքից Արևմուտք հոսող էներգակիրների նկատմամբ:

5. Կենտրոնական Ասիան ԱՄՆ քաղաքականության շրջանակներում

ԽՍՀՄ փլուզումից հետո ԱՄՆ-ը սկսեց դիվանագիտական հարաբերություններ հաստատել նախկին ԽՍՀՄ պետությունների հետ: Այդ շրջանում ԱՄՆ-ը հատկապես ուշադրություն էր դարձնում այն երկրներին, որոնց հետ հարաբերությունները, ըստ նրա, ուղղակիորեն առնչվում էին իր երկրի ազգային անվտանգության շահերի հետ: Այդպիսի երկրներից էր Ղազախստանը, որի մոտ առկա միջուկային զենքը՝ նախկին ԽՍՀՄ-ից ժառանգած, ԱՄՆ-ը դիտում էր որպես սպառնալիք իր ազգային շահերին: Ջորջ Բուշ-ավագի համար Ղազախստանի հետ նոր ձևավորվող հարաբերություններում կարևոր էր վերջինիս՝ որպես միջուկային զենքի չտիրապետող երկրի, կարգավիճակի հաս-

տատումը և նրա կողմից այդ գենքի չտարածման մասին պայմանագրի կնքումը: 1992թ. մայիսին Ղազախստանը կնքեց Լիսաբոնյան հայտնի համաձայնագիրը՝ միանալով ռուս-ամերիկյան միջուկային գենքի չտարածման պայմանագրին [10]: Ի պատասխան այս քայլի՝ ԱՄՆ-ը Ղազախստանն ընդգրկեց ԱՊՀ երկրները ֆինանսավորող մի շարք ծրագրերում՝ «Վտանգների համատեղ նվազեցում», «Ազատության աջակցության ակտ» և այլն: Ըստ որոշ վերլուծաբանների, այդ շրջանում կենտրոնաասիական իր քաղաքականության մեջ ԱՄՆ-ը շեշտը դնում էր տարածաշրջանի երկրներին Ռուսաստանի ազդեցությունից հնարավորինս հեռու պահելու քաղաքականության վրա [10]: Այս առումով Վաշինգտոնում որպես տարածաշրջանի առավել առանցքային երկրներ հատկապես կարևորում էին Ղազախստանը և Ուզբեկստանը: Այս փաստը բացատրվում էր երկու երկրներում առկա նավթի և գազի հսկայական պաշարներով: Մյուս երկրները՝ Ղրղզստան, Տաջիկստան և Թուրքմենստան, իրենց քաղաքացիական պատերազմներով, թույլ տնտեսությամբ և բռնատիրական համակարգերով, 1990-ականների սկզբին հետաքրքիր չէին ԱՄՆ-ին: 1994թ. Կենտրոնական Ասիայում ազդեցությունն ուժեղացնելու համար ԱՄՆ-ը սկսեց Ղազախստանի հետ համագործակցել նաև ռազմական ոլորտում՝ կարևորելով այդ երկրի ընդգրկումը ՆԱՏՕ «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրին: Ավելի ուշ այս ծրագրին միացան Ղազախստանի մյուս հարևանները՝ Ղրղզստանը, Թուրքմենստանը և Ուզբեկստանը [12, pp. 133-153]: Մեկ տարի անց, 1995թ., ՆԱՏՕ այս ծրագրի հետ սկսեց համագործակցել նաև Տաջիկստանը: Բացի ՆԱՏՕ-ի միջոցով միջնորդավորված ռազմական քաղաքականությունից, Վաշինգտոնը կարևորում էր նաև ուղղակի կապերն այդ երկրների հետ: Այդ պատճառով էլ 1999թ. ԱՄՆ Կոնգրեսն ընդունեց օրենք՝ ֆինանսական օգնությունը Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի երկրներին «Մետաքսի ճանապարհ» ծրագրի շրջանակներում մեծացնելու մասին [12]: Այս ծրագրում, սակայն, հատուկ ուշադրություն էր դարձվում ռազմական համագործակցությանը: Կարևորվում էր այդ երկրների բանակների պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացումը, արևմտյան ռազմական ստանդարտների կիրառումը, ռազմաքաղաքական կայունության հաստատումը տարածաշրջանի երկրներում: Սակայն Վաշինգտոնի հետաքրքրություններն այս երկրների հանդեպ առաջին հերթին բացատրվում էին նավթի և գազի խոշոր պաշարների առկայությամբ:

2000թ. գալով իշխանության՝ Ջորջ Բուշ-կրտսերի վարչակազմը սկսեց հատկապես մեծ ուշադրություն դարձնել էներգետիկ խնդիրներին և Կասպից ծովի ավազանի նավթով հարուստ Ղազախստանին: Դեռ քլինթոնյան վարչակազմի օրոք սկսված Բաքու-Ջեյհան նախագիծը հայտնվեց ոչ միայն նոր վար-

չակագմի ուշադրության կենտրոնում, այլև կարևորվեց այս նախագծին Ղազախստանի միացումը: Նախագահ Նուրսուլթան Նազարբայևին ուղղած իր նամակում ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը համոզում էր, որ իր գործընկերն աջակցի Ադրբեջան-Թուրքիա նավթամուղի ծրագրին. «ԱՄՆ-ը պատրաստակամ է բարձրացնել համագործակցության մակարդակը Ղազախստանի հետ տնտեսական և էներգետիկ բնագավառներում» [7]: Աստանայում ԱՄՆ դեսպան Բեթ Ջոնսը հանդիպեց նախագահ Նազարբայևին՝ առաջարկելով, որ Ղազախստանի ամենամեծ՝ Քաշագանի նավթահորի նավթի առաջին քանակությունն առաքվի հենց Բաքու-Ջեյհանով: Չնայած համագործակցության այս բարձր թվացող մակարդակին՝ Վաշինգտոնը շարունակում էր թե՛ Ղազախստանի, թե՛ Ուզբեկստանի իշխանություններին քննադատել մարդու իրավունքների ոտնահարման և ընդդիմության նկատմամբ քաղաքական ճնշումներ բանեցնելու համար [10]: Քաղաքական գիծ, որը միշտ չէ, որ հասկանալի էր Աստանայի կամ Տաշքենդի համար: Սակայն ռուսական ազդեցությունը թոթափելու ցանկությունն այնքան մեծ էր, որ չնայած այս քննադատությանը՝ պաշտոնական Տաշքենդը 1990-ականներին վարում էր ընդգծված ամերիկամետ և հակառուսական քաղաքականություն: Ըստ որոշ վերլուծաբանների, երկկողմ հարաբերությունները Տաշքենդի և Վաշինգտոնի միջև այնքան սերտ էին, որ Իսլամ Քարիմովը որոշում ընդունեց դուրս գալ ՎՈւՈւԱՄ-ից՝ կարևորելով ԱՄՆ-ի հետ ուղղակի, այլ ոչ թե միջնորդավորված քաղաքականությունը [13]: Ուզբեկստանի արտաքին քաղաքականության փոփոխությունները հանգեցրին այն բանին, որ 1996թ. հունիսին Բիլ Բլինթոնը համաձայնեց հանդիպել Իսլամ Քարիմովի հետ: Մինչ այդ ԱՄՆ նախագահը խուսափում էր այդ հանդիպումից, քանի որ Քարիմովը բռնապետի համբավ ուներ: Բիլ Բլինթոնն արդեն հանդիպել էր ԱՊՀ մյուս երկրների ղեկավարների հետ, բացառությամբ Թուրքմենստանի նախագահի [10]:

Եվ այսպես, ի տարբերություն Ղազախստանի, Ուզբեկստանը վարում էր ընդգծված հակառուսական քաղաքականություն, ինչն արժանանում էր ԱՄՆ հավանությանը: 1999թ. ԱՄՆ-ը նույնիսկ ընդգրկեց Ուզբեկստանի ընդդիմադիր՝ Ուզբեկստանի իսլամական շարժում կուսակցությունը արտասահմանյան ահաբեկչական կազմակերպությունների ցանկում: Սա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ այդ կազմակերպությունն ամերիկյան մի քանի քաղաքացիների պատանդ վերցրեց [12]: Այդ շրջանում ԱՄՆ քաղաքականության ուշադրության կենտրոնում հայտնվեց նաև Տաջիկստանը, ուր 2001թ. մայիսին պաշտոնական այց կատարեց ԱՄՆ Կենտրոնական հրամանատարության ղեկավար, գեներալ Թոմի Ֆրանկսը: ԱՄՆ որոշմամբ, փաստորեն, ողջ Կենտրոնական Ասիան հայտարարվեց ամերիկյան բանակի Կենտրոնական հրա-

մանատարության վերահսկողության և պաշտպանության գոտու շրջան:

2001թ. նյույորքյան հայտնի ահաբեկչությունից հետո երկկողմ հարաբերությունները Կենտրոնական Ասիայի երկրների և հատկապես Ուզբեկստանի ու ԱՄՆ-ի միջև էլ ավելի սերտացան: Հակաահաբեկչական քաղաքականություն իրականացնելու համար 2002թ. մարտին ԱՄՆ-ի և Ուզբեկստանի միջև կնքվեց նոր պայմանագիր, որով վերջինս Պենտագոնին վարձակալության հանձնեց Քարշիի (Խանաբադի) նախկին խորհրդային ավիաբազան \$16 մլն տարեկան գումարով [12]: Այսպիսով, ԱՄՆ-Ուզբեկստան հարաբերությունները կարճես թե ստանում էին ռազմավարական բնույթ: Ըստ որոշ ռուս վերլուծաբանների, ԱՄՆ խելամիտ դիվանագիտական քայլերի արդյունքում Սպիտակ տունը ռազմավարական ազդեցություն ձեռք բերեց Կենտրոնական Ասիայում՝ իր համար լուծելով միանգամից մի քանի խնդիր: Նախ՝ ռազմակայան ձեռք բերելով, արդեն ի վիճակի էր իր վերահսկողության տակ պահել ոչ միայն Աֆղանստանը (հիշենք, որ հակաահաբեկչական գործողությունները պաշտոնապես հենց այս կերպ էին բացատրվում), այլ նաև վերահսկել Կենտրոնական Ասիայում գտնվող բոլոր էներգետիկ ռեսուրսները և այստեղով անցնող խողովակաշարերը: Բացի այդ, այս ռազմակայանը մոտ էր ԱՄՆ միանգամից երկու հիմնական հակառակորդների տարածքներին՝ Ռուսաստանի և Չինաստանի [13]: Տարածաշրջանի երկրների ղեկավարությունը՝ հատկապես Ուզբեկստանի, Ղրղզստանի, ամերիկյան հանգրվանների հայտնվելը գնահատում էին որպես սեփական քաղաքական իշխանության պահպանման գրավական: Սակայն 2002թ. օգոստոսին ԱՄՆ Պետքարտուղարությունը հրապարակեց տարածաշրջանի նկատմամբ իր նոր քաղաքականության հայեցակարգը, որից հասկանալի էր դառնում, որ վերջինս որակապես փոխում է քաղաքականությունն այդ երկրների նկատմամբ [10]: Պարզ էր դառնում, որ և՛ Ղրղզստանը, և՛ Ուզբեկստանը հայտնվում են ԱՄՆ Պետքարտուղարության ժողովրդավարության և մարդու իրավունքների հարցերի բյուրոյի ուշադրության կենտրոնում: Մա նշանակում էր, որ Վաշինգտոնը պատրաստվում էր այս երկրներում քաղաքական լուրջ փոփոխություններ անցկացնել, ֆինանսավորել ընդդիմադիր կուսակցություններին, լրատվամիջոցներին և այլն: Կենտրոնական Ասիայի մյուս երկրներն այս բյուրոյի ուշադրության կենտրոնում չէին: ԱՄՆ-ը առաջին հերթին ուշադրություն էր դարձնում այն երկրներին, որոնց տարածքում տեղաբաշխված էին իր ռազմակայանները: 2004-ին, չնայած ԱՄՆ-Ուզբեկստան թվացյալ ռազմավարական համագործակցությանը, Պետքարտուղարությունը հայտարարեց, որ չի պատրաստվում Տաշքենդին տրամադրել \$18 մլն գումարը, որը նախատեսված էր որպես օգնություն Ուզբեկստանի ռազմական և տնտեսական բարեփոխումների հա-

մար: Պատճառը մարդու իրավունքների խախտումներն էին, որոնք տեղի էին ունենում այդ երկրում: Երկկողմ հարաբերություններում նկատվող սառնությունը վերածվեց թշնամության 2005թ. մայիսին, երբ ուզբեկական Անդիջան քաղաքում տեղի ունեցան բռնություններ, ինչի հետևանքով, ըստ ամերիկյան կողմի, սպանվեցին հարյուրավոր անմեղ քաղաքացիներ: ԱՄՆ և միջազգային հանրության պահանջը՝ ՄԱԿ հովանու ներքո ստեղծել միջազգային հետաքննող հանձնաժողով՝ տեղի ունեցածը հետաքննելու և մեղավորներին պատժելու համար, հանդիպեց պաշտոնական Տաշքենդի բուռն դիմադրությանը: Արդյունքում՝ ԱՄՆ-Ուզբեկստան հարաբերությունները վերջնականապես վատացան, և 2005թ. հուլիսին Իսլամ Քարիմովը Վաշինգտոնից պահանջեց 6 ամսվա ընթացքում լքել Քարշիի (Խանաբադ) ռազմակայանը: Ինչպես գրում է ամերիկահայ քաղաքագետ Ռիչարդ Գիրագոսյանը, ամերիկացի պաշտոնյաների համար Ուզբեկստանի նախագահի որոշումն այնքան անսպասելի էր, որ նրանցից շատերը չէին հավատում դրան և համոզված էին, որ այն բլեֆ է և Քարիմովը շուտով կփոխի որոշումը, սակայն դա տեղի չունեցավ [12]:

Ամերիկյան զինվորականների հեռանալով ավարտվեց ԱՄՆ-Ուզբեկստան հակաահաբեկչական համագործակցությունը, թուլացավ նաև ԱՄՆ ազդեցությունը տարածաշրջանում: Քարիմովի նման արձագանքը բացատրվում է նաև ԱՊՀ-ում սկիզբ առած գունավոր հեղափոխություններով, որոնք ամերիկացիները ցանկանում էին տարածել նաև Ղրղըզստանում և Ուզբեկստանում: Եվ եթե Ղրղըզստանում Վաշինգտոնին դա հաջողվեց, ապա Ուզբեկստանը ակտիվ կերպով դիմադրեց՝ թույլ չտալով ամերիկյան ազդեցության ուժեղացումն իր երկրում: Փաստորեն, Կենտրոնական Ասիայում ամերիկյան քաղականության ձախողումը նպաստեց Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը, և շուտով, 2005թ. հուլիսին, Ուզբեկստանը, Ղրղըզստանը և Տաջիկստանը միացան Շանհայի համագործակցության կազմակերպությանը [12]: Ռուսաստանը, օգտվելով տարածաշրջանում ամերիկյան ազդեցության թուլացումից, ակտիվացրեց իր էներգետիկ քաղաքականությունը, որպեսզի տարածաշրջանի երկրներին էլ ավելի ամուր կապի ռուսական խողովակաշարային ցանցին:

2007թ. մայիսի 11-ին երեք երկրների՝ Ռուսաստանի, Ղազախստանի և Թուրքմենստանի նախագահները ստորագրեցին նոր՝ Մերձկասպյան գազամուղի կառուցման մասին համաձայնագիրը [14]: Ըստ համաձայնագրի, կողմերը որոշել են Կասպից ծովը շրջանցող նոր գազամուղ կառուցել, որը Թուրքմենստանի ափամերձ շրջանով պետք է հասնի Ղազախստան և միանա արդեն գոյություն ունեցող Միջին Ասիա-Կենտրոն կոչվող ռուս-ղազախական գազամուղին: Բացի դրանից, այս համաձայնագրի շրջանակներում նախատեսվում է արդիականացնել դեռ 1967-ից գործող գազամուղը, որով թուրքմենական գազը

հասնում է Ռուսաստան: Այս ծրագրի իրագործմամբ հարվածի տակ կհայտնվի տրանսկասպյան գազամուղը: Կենտրոնական Ասիայի գազի համար պայքարում Ռուսաստանը նոր, լրացուցիչ խաղաթուղթ է ձեռք բերում հանձին Մերձկասպյան գազամուղի: Հասկանալի է, որ դեպքերի նման զարգացումը ոչ մի կերպ չի կարող բավարարել Տրանսկասպյան գազամուղի գլխավոր հովանավորին՝ ԱՄՆ-ին, որի ներկայացուցիչը՝ էներգետիկայի նախարար Սամուել Բոդմանը, համաձայնագրի կնքումից 3 օր անց հայտարարեց, թե «Թուրքմենստանի և Ռուսաստանի միջև հնարավոր գազամուղը լավագույն որոշումը չէ Եվրոպայի համար» [15]: Եռակողմ համաձայնագիրը չի համապատասխանում նաև Եվրոպայի շահերին: Վերջինիս համար կարևոր է գազի մատակարարման նոր, այլընտրանքային ուղղությունների ստեղծումը, ինչը հնարավորինս կկրճատի Եվրոպայի կախվածությունը ռուսական մատակարարումներից, իսկ Ռուսաստանը ապահովում է եվրոպացիների գազի պահանջարկի 1/3-ը՝ այսպիսով լուրջ քաղաքական լծակ պահելով իր ձեռքում: Սակայն Թուրքմենստանում գործող քաղաքական համակարգի համար կապը Ռուսաստանի հետ ունի ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական կարևոր նշանակություն, որովհետև թուրքմենական ռեժիմը գործում է Մոսկվայից ստացվող գումարների հաշվին, իսկ ԱՄՆ-ը առանձնապես չէր արձագանքում Ազգաբաղից եկող ահազանգերին, և Թուրքմենստանի իշխանություններին ոչինչ չէր մնում, բացի Մոսկվայի հետ կապերն ընդլայնելուց: Նկատենք, որ Թուրքմենստանը բացի գազից ոչինչ չունի աշխարհին առաջարկելու, իսկ այդ էներգակրի արտահանման և ֆինանսական մատակարարման միակ ուղղությունն անցնում է Ռուսաստանով: Ազգաբաղի համար ռուսական ուղղությունից հրաժարվելը հավասարազոր է ինքնասպանության: Թուրքմենստանը ռուսական ուղղությամբ արտահանում է տարեկան 40-50 մլրդ մ³ գազ, իսկ երկրի նախկին նախագահ Սափարմուրադ Նիյազովի երկարատև բանակցությունների արդյունքում «Գազպրոմը» համաձայնեց 2009-ից թուրքմենական գազը ձեռք բերել 1000 մ³-ը \$100 գնով՝ նախկին 65-ի փոխարեն [16]: Ռուսաստանը համաձայնեց գազի համար նման զին վճարել միայն այն բանից հետո, երբ Թուրքմենստանը հրաժարվեց այլընտրանքային՝ Ռուսաստանը շրջանցող գազամուղի կառուցման ամերիկյան ծրագրերից, այսպիսով հարվածի տակ դնելով Թուրքմենստանից ու ընդհանրապես Կենտրոնական Ասիայից Կասպիցի ընդերքով գազի արտահանման անդրկասպյան գազամուղի կառուցման նախագիծը:

Կարող ենք ասել, որ այս քաղաքականության մեջ դժվար թե էական փոփոխություններ լինեն, քանի որ այդ երկրում գործող քաղաքական ցանկացած ռեժիմ ուղղակի կախվածություն ունի «Գազպրոմ» ընկերությունից, որը

վերահսկում է Թուրքմենստանից գազի առաքման հիմնական ուղին և կառուցում է նորը: Այստեղ, թերևս, բացառություն է չինական ուղղությունը, որի հետ դեռ պայմանավորվածություն ունենալիս նախագահ Նիյազովը: Վերջինս ռուսական կողմին հավաստիացնում էր, որ դեպի Չինաստան գազամուղի կառուցումը ոչ մի կերպ չի անդրադառնա երկու երկրների՝ Ռուսաստանի և Թուրքմենստանի միջև կնքված պայմանագրերի կատարման վրա: Ինչևէ, Թուրքմենստանի ղեկավարն Արևմուտքի հետ շատ զգույշ էր, քանի որ լավ էր հասկանում, որ միակ կազմակերպությունը, որին ֆինանսավորում է այդ երկիրը, «Գազպրոմ» է, և եթե պաշտոնական Աշգաբադը դադարի համագործակցել «Գազպրոմի» հետ, ապա վերջինս էլ կարող է կանգնեցնել ֆինանսական հոսքերն այդ երկիր, իսկ դեպի Արևմուտք նոր գազամուղ մեկ ամսում կառուցել հնարավոր չէ, հետևաբար նաև հնարավոր չի լինի այդ ընթացքում գոյատևել առանց գազից ստացվող եկամուտների: ԱՄՆ-ը փորձում է Թուրքմենստանը դուրս բերել ռուսական ազդեցությունից: Նրա բանազնացները փորձում են համոզել Թուրքմենստանին և Ադրբեյջանին ընդհանուր հայտարարի գալ ծովի կարգավիճակի հարցում, ինչը թույլ կտա կառուցել գազամուղ ծովի ընդերքով և թուրքմենական գազն ուղղել դեպի Եվրոպա:

2008թ. փետրվարին Բաքու էին ժամանել Աշգաբադի պաշտոնական ներկայացուցիչները՝ փորձելով ընդհանուր եզրեր գտնել Ադրբեյջանի հետ Կասպից ծովի կարգավիճակի հարցում [17]: Չնայած այդ բանակցությունների արդյունքում, ինչպես և սպասվում էր, էական առաջընթաց չգրանցվեց, սակայն երկկողմ հանդիպումը Բաքու և Աշգաբադ ամերիկյան բարձրաստիճան հյուրերի այցելությունից հետո նույնպես հատկանշական է: Պարզ է, որ ամերիկացի ազդեցիկ սենատոր Ռիչարդ Լուգարի այցելությունը երկու երկրների մայրաքաղաքներ և ամենաբարձր մակարդակի հանդիպումները հուշում են, որ պաշտոնական Վաշինգտոնը շահագրգռված է երկու երկրների միջև ծովի կարգավիճակի շուրջ բանակցություններում լուրջ առաջընթաց գրանցելու հարցում [18]: Սակայն Ադրբեյջանի և Թուրքմենստանի միջև ծովի կարգավիճակի շուրջ ընդհանուր հայտարարի գալու հարցում լուրջ խոչընդոտ կա՝ ծովի կենտրոնական մասում գտնվող նավթի հանքավայրը, որը Բաքուն կոչում է «Քյափազ», իսկ Թուրքմենստանը «Մերդար»: Նշված հանքավայրում, ըստ որոշ աղբյուրների, կենտրոնացած են մինչև 150 մլն բարել նավթ և գազի կոնդենսատ, ինչը լուրջ պատճառ է, որ Բաքուն և Աշգաբադը չցանկանան միմյանց զիջել «Քյափազ» կամ «Մերդար» կոչվող հանքավայրը [17]: ԱՄՆ հետաքրքրությունը երկկողմ պայմանագիր կնքելու հարցում անդրկասպյան գազամուղն է, որի կառուցումը, ըստ Վաշինգտոնի ղեկավարության, լրջորեն կթուլացնի Ռուսաստանի դիրքերը տարածաշրջանում և այլընտրանք կստեղծ-

ծի դեպի Եվրոպա հոսող ռուսական գազին: Ամերիկյան ծրագրերում ադրբեյջանա-թուրքմենական համաձայնությունները դառնում են ռազմավարական, հետևաբար՝ մեկը մյուսի հետևից Աշգաբադ են ժամանում ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյաներ: Մենատոր Լուգարից հետո Թուրքմենստանի մայրաքաղաք են այցելել ԱՄՆ Կենտրոնական հրամանատարության ղեկավար, ծովակալ Ֆոլինը, հետո՝ Պետդեպարտամենտի Կասպից ծովի հարցերով հասուկ բանագնաց Սթիվեն Մանը [17]: Հիշեցնենք, որ Մանը երկար տարիներ է, ինչ զբաղվում է Կասպիցի հարցերով և նույնիսկ եղել է ԱՄՆ դեսպանը Թուրքմենստանում, ինչպես նաև Ղարաբաղյան հարցի կարգավորմամբ զբաղվող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահը: Թուրքմենստանը դեռ Նիյագովի օրոք փորձում էր նորմալ հարաբերություններ հաստատել Վաշինգտոնի հետ, բայց դա նրան չհաջողվեց: Վերջինիս մահից հետո Վաշինգտոնը նկատելիորեն փոխել է դիրքորոշումը և ցանկանում է երկխոսություն ծավալել արդեն նոր նախագահ Բերդիմուխամեդովի հետ, որի քաղաքական «արժեքը» անդրկասպյան գազամուղի կառուցման դեպքում էականորեն աճում է Արևմուտքի և հատկապես ԱՄՆ-ի համար: ԱՄՆ-ը շահագրգռված է, որ Ադրբեյջանը և Թուրքմենստանը ծովի կարգավիճակի հարցում որքան հնարավոր է շուտ գան ընդհանուր հայտարարի, ինչը, ըստ նրանց, կարող է նպաստել ծովի ընդերքով նոր գազամուղի կառուցմանը: Սակայն ծովի կարգավիճակի հարցում կան նաև շահագրգիռ այլ կողմեր՝ Ռուսաստան և Իրան: Իսկ այս երկու երկրները միանշանակ դեմ են ծովի ընդերքով գազամուղների և խողովակաշարերի կառուցման ցանկացած ծրագրի: Հասկանալի է, որ հարցն այստեղ ոչ միայն բնապահպանական խնդիրներն են, այլ նաև այդ երկրի քաղաքական հետաքրքրությունները, որոնք ցանկանում են, որ Կենտրոնական Ասիայից դուրս եկող էներգակիրներն անցնեն իրենց տարածքներով: Այսինքն, եթե նույնիսկ Թուրքմենստանը և Ադրբեյջանը գան ընդհանուր հայտարարի, դա դեռ չի նշանակում, թե անդրկասպյան գազամուղը կկառուցվի, որովհետև ծովի կարգավիճակի վերջնական լուծման համար հարկավոր է բոլոր 5 կողմերի համաձայնությունը, իսկ Թեհրանը համառում է: Բացի դրանից, Աշգաբադն արդեն կնքված պայմանագրեր ունի Ռուսաստանի և Չինաստանի հետ: Եվ այսպես, Թուրքմենստանի կախվածությունը ռուսական գազամուղից ու ֆինանսներից, ինչպես նաև Կասպից ծովի կարգավիճակի անորոշությունը թույլ են տալիս եզրակացնել, որ անդրկասպյան գազամուղի կառուցումը քիչ հավանական է դառնում Արևմուտքի համար:

Այսպիսով, Կասպից ծովի ավազանի երկրների հանդեպ ԱՄՆ էներգետիկ քաղաքականության ձևավորմանը լուրջ հարված հասցրեց 2008թ. հնգօրյա պատերազմը Հարավային Օսիայում: Ռուսաստանը, փաստորեն,

կասկածի տակ դրեց Կասպից ծովից Հարավային Կովկասով Էներգակիրների առաքման ԱՄՆ ծրագրերը: Տարածաշրջանն այլևս ապահով չի համարվում նավթի և գազի առաքման համար, իսկ Վրաստանն անկայունության աղբյուր է: Կարող ենք փաստել, որ տարիներ շարունակ ձևավորվող քաղաքականությունը ձախողվել է, և ԱՄՆ նորընտիր վարչակազմը ստիպված է մեծ ջանքեր գործադրել տարածաշրջանի երկրներում նախկին քաղաքական հեղինակությունը վերականգնելու և էներգետիկ հոսքերը վերահսկելու համար:

Ղեկավար, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Рашид А.*, Талибан: Ислам, нефть, и новая Большая игра в Центральной Азии, часть 2-я, 08.01.2005 <http://centrasia.org/newsA.php4?st=1105151280>
2. *R.Hrair Dokmejian & Hovann H. Simonian*, Troubled Waters..., New York, 2001.
3. Черные земли в «Большой игре-2», 2008-04-04, <http://geopolitica.ru/Articles/195/>
4. *Brenda Shaffer*, *U.S. Policy toward the Caspian Region: Recommendations for the Bush Administration*, July 2001 1. Caspian Studies Program at Harvard University's John F. Kennedy School of Government.
5. Section 907 of the Freedom Support Act http://www.anca.org/hill_staff/position_papers.php?ppid=6
6. *Фариз Рзаев*, 907-я поправка: история и перспективы. http://www.ca-c.org/journal/cac-04-1999/st_21_rzayev.shtml
7. Graham Allison and Emily Van Buskirk. U.S. Policy on Caspian Energy Development and Exports. Caspian Studies Program. Harvard University John F. Kennedy School Of Government, May 2001.
8. Hearing. Before The Subcommittee On Europe Of The Committee On International Relations. House Of Representatives One Hundred Seventh Congress. The Caucasus And Caspian Region: Understanding U.S. Interests And Policy. October 10, 2001 <http://www.house.gov/international—relations>
9. *Ariel Cohen*, The 'New Great Game': Pipeline Politics in Eurasia. Caspian Crossroads Magazine. V. 2, Issue No.1, Spring-Summer 1996 <http://ourworld.compuserve.com/HOMEPAGES/USAZERB/213.htm>
10. *Барабанов О.Н.*, Политика США в Центральной Азии и Закавказье. <http://www.riss.ru/library/US-SRAZ.pdf>
11. *Zeyno Baran*, Director, Georgia forum, Center for Strategic and International Studies. The Caucasus and Caspian Region: Understanding U.S Interests and Policy. Hearing before the Subcommittee on Europe of the Committee on International Relations. House of Representatives. October 10, 2001 <http://www.house.gov/international—relations>.

12. *Richard Giragosian*, The Strategic Central Asian Arena. China and Eurasia Forum Quarterly, Volume 4, No. 1 (2006). © Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program
13. *Жильцов С.С., Ушков А.М.*, Политика США в Каспийском регионе: основные итоги и тенденции (после сентября 2001г.). Кафедра политических наук, Российский Университет дружбы народов <http://www.humanities.edu.ru/db/msg/50960>
14. ИА REGNUM «., Россия, Казахстан и Туркменистан договорились о строительстве Прикаспийского газопровода. www.regnum.ru/news/826354.html 12.05.2007.
15. ИА REGNUM «Новости», США не довольны решением о строительстве прикаспийского газопровода. www.regnum.ru/news/827155.html 14.05.2007.
16. *Арсюхин Е.*, Связанные одним газом, «Российская газета». 22.12.2006.
17. *Сигов Ю.*, К разделу Каспия все готово?, «Деловая неделя», 19/02/2008 <http://www.newsazerbaijan.ru/analytics/20080219/42165349.html>
18. ИА REGNUM «Новости», Азербайджан и Туркмения делят Каспий в Баку, www.regnum.ru/news/953309.html, 06.02.2008

КАСПИЙСКИЙ ФАКТОР ЭНЕРГЕТИЧЕСКОЙ ПОЛИТИКИ США И ОТНОШЕНИЯ СО СТРАНАМИ РЕГИОНА

Армен Манвелян

Резюме

Серьезный удар по формированию энергетической политики США в отношении стран бассейна Каспийского моря нанесла пятидневная война 2008г. в Южной Осетии. Фактически, Россия поставила под сомнение программы США по транспортировке энергоносителей из Каспийского бассейна по территории Южного Кавказа. Регион больше не считается безопасным для транспортировки нефти и газа, а Грузия рассматривается как источник нестабильности. Можем констатировать, что формируемая годами политика провалилась, и новоизбранная администрация США будет вынуждена прилагать большие усилия, чтобы восстановить былой политический авторитет и контролировать энергетические потоки.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշոտ Թավադյան

Զարգացած երկրներում անցել են նեղ գաղափարախոսության ժամանակները: Կոնվերգենցիայի սկզբունքը գործում է նաև տնտեսությունում: Ապացուցվում է, որ եթե որոշակի սոցիալական պահանջների պարագայում ընտրվում է ազատության և տնտեսական արդյունավետության նպատակ, իսկ որոշակի արդյունավետության պահանջների դեպքում ձևավորվում է սոցիալական նպատակի առավելագույնը, արդյունքում՝ օպտիմալ լուծումները երկու խնդիրների համար համընկնում են:

Արդյունավետությունը և սոցիալական նպատակները միասնական տնտեսական համակարգի առանցքային շղթաներն են, այնպես որ օպտիմալ, բանական կառավարման պարագայում տնտեսական վեկտորը միասնական է՝ սոցիալական արդյունավետություն:

Հոդվածում ձևակերպված են վարկային ծրագրերի ընտրության սկզբունքները: Սահմանված է նաև սոցիալական քաղաքականության «զգայականության շեն» հասկացությունը:

1. Տնտեսության գաղափարախոսության և «աջերի» ու «ձախերի» միավորման հնարավորության մասին

Մեր իրականությունում մինչ օրս արդիական է այն հարցը, թե ինչու կարող են միավորվել առաջին հայացքից միմյանցից հեռու տեսակետներ ներկայացնող ուժերը: Մինչդեռ զարգացած երկրներում անցել են նեղ գաղափարախոսության ժամանակները, ինչն ակնհայտորեն արդյունավետ է և գրեթե հակազդեցություն չի առաջացնում:

Արդեն վաղուց քաղաքականության տարբեր ոլորտներում օգտագործվում է կոնվերգենցիայի սկզբունքը (լատ. *convergo* – մոտենալ, համընկնել), որի հիմքում դրված է տնտեսական, քաղաքական և գաղափարախոսական տարբերությունների աստիճանական հարթեցման գաղափարը: Ժամանակակից որևէ զարգացած երկրում չեն արվում նման կոշտ փորձեր՝ ուղղված գաղափարախոսությունների մանրակրկիտ տարանջատմանը: Մինչդեռ այդ չկայացած և նույնիսկ թերի ու վնասակար սկզբունքը պարբերաբար փորձում են կիրառել մեզ մոտ:

Կոնվերգենցիայի սկզբունքը գործում է նաև տնտեսությունում: Հստակ ապացուցվում է, որ եթե մի դեպքում ընտրվում է ազատության և տնտեսական արդյունավետության նպատակ՝ որոշակի սոցիալական պահանջների պարագայում, իսկ այլ դեպքում ձևավորվում է սոցիալական նպատակի առավելագույնը՝ որոշակի արդյունավետության պահանջների դեպքում, ապա արդյունքում լավագույն, օպտիմալ լուծումները երկու խնդիրների համար համընկնում են: Այնպես որ տնտեսության տեսանկյունից գաղափարախոսության մեջ չկա բևեռացման պատճառ: Այդ տեսանկյունից կեցությունը հստակորեն ընտրում է կենտրոնամետությունը:

Ո՞րն է առաջնայինը՝ ազատությունն ու արդյունավետությունը, թե՞ սոցիալական նպատակները. մեր ժամանակներում սա հիշեցնում է ձվի և հավի առաջնայնության անբովանդակ վեճը: Իսկ պատասխանն այն է, որ արդյունավետությունը և սոցիալական նպատակները միասնական տնտեսական համակարգի առանցքային շղթաներն են, այնպես որ օպտիմալ, բանական կառավարման պարագայում այժմ՝ զարգացած աշխարհում, տնտեսական վեկտորը միասնական է՝ սոցիալական արդյունավետություն:

Այդ իսկ պատճառով զարգացած տնտեսություններում նպատակները և արդյունավետ ծրագրերի կառուցման սկզբունքները բավական մոտ են: Գլխավոր են դառնում ծրագրերի նպատակներին հասնելու մեթոդները և հաջորդական քայլերը:

2. Ծրագիր. համադարման, կամ՝ ինչպես կազմել և իրագործել ծրագրերը

Ծրագրերի դերը տնտեսությունում, անշուշտ, կարևոր է, սակայն չարժե դրանք մեխանիկորեն գերազնահատել, քանզի տնտեսությունն ունի իր օրինաչափությունները, և այնքան էլ հեշտ չէ դրանք խցկել «երկաթբետոնի» սկզբունքով կառուցված ծրագրերի մեջ: «Տնտեսական հրաշքի» հեղինակ Լյուդվիգ Էրհարդը (1949-1963թթ.՝ ԳՖՀ Էկոնոմիկայի նախարար և Կոնրադ Ադենաուերից հետո՝ 1963-1966թթ. Գերմանիայի կանցլեր) չէր սիրում այդ տերմինը՝ շեշտը դնելով խնդիրներ կատարողների ազնվության, ազատության և եռանդի վրա: Արդեն 1967թ. Գերմանիայում ընդունվեց տնտեսական կայունության և աճի աջակցության վերաբերյալ օրենք, որում ապագայում չհիմնավորված, կամային որոշումներից խուսափելու համար գերմանական ճշտապահությամբ ձևակերպված են տնտեսական քաղաքականության առանցքային սկզբունքները՝ այսպես կոչված «մոզական քառակուսին»: Բյուջեները, ֆինանսական ծրագրերն ուղղակիորեն հրահանգվում է կառուցել՝ ելնելով տնտեսական քաղաքականության գլխավոր սկզբունքներից: Դրանք այնքան կարևոր են, որ արժե առանձնացնել.

- գների կայունություն,
- զբաղվածության բարձր մակարդակ,
- հավասարակշռված արտաքին առևտուր,
- կայուն տնտեսական աճ:

Կարծում ենք՝ նպատակահարմար է նմանատիպ օրենք ընդունել մեզ մոտ: Տնտեսական ծրագրերը պարտադիր պետք է համապատասխանեն այդ սկզբունքներին, իսկ հետո սկսվում է կառավարման արվեստը մակրո-տնտեսությունում:

Վաղուց հայտնի է, որ շախմատում ամենափայլուն մտահղացումները փլուզվում են, եթե խախտվում է քայլերի հաջորդականությունը: Նույն սկզբունքն է գործում տնտեսությունում, այնպես որ մասնագետների արհեստավարժությունը և փորձը չափազանց կարևոր են: Դժբախտաբար, տնտեսական զարգացման ծրագրերն ավտոմատ գործող հասարակ համակարգչային ծրագրեր չեն: Այս պարագայում առանցքային դեր են խաղում տնտեսական օրինաչափությունների հստակ իմացությունը, «նեղ տեղերի» արագ բացահայտման և անկանխատեսելի իրավիճակներում իրատեսորեն կողմնորոշվելու ունակությունը:

Բացի դրանից, տնտեսությունում առկա է անորոշության միջակայքը, ինչը հատկապես արդիական է միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի համար, քանզի այդ ծրագրերի տարբերակայնությունը և ճկունությունը էապես բարձրացնում են դրանց արդյունավետությունը [1, c. 55-56]:

Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում, կառավարության գործունեության հիմնական գերակայությունները բաժնում, նշված է, որ պետական կառավարման համակարգը ներառում է առավելագույն արժեքի ստեղծման սկզբունքը: Դա, իհարկե, համապատասխանում է սոցիալական արդյունավետության նպատակին և, կարծում ենք, ենթադրում է ծրագրի ճշգրտման մեխանիզմների հստակ մշակում տարբեր սցենարների պարագայում, այդ թվում և լավատեսական, որոնց հավանականությունը նույնպես պետք է հաշվի առնել: Տնտեսությունը չի զարգանում հստակ ծրագրված սկզբունքով, և եթե կան որոշակի փոփոխություններ քաղաքական, սոցիալական իրավիճակում կամ միջազգային տնտեսական հարաբերություններում, ապա տնտեսական քաղաքականությունում առաջանում է որոշակի ճշգրտումներ կատարելու անհրաժեշտություն, ինչին մենք պետք է պատրաստ լինենք:

3. Կոորդինացման շուրջ

Տնտեսական աճի, բյուջեի կատարման համար չափազանց կարևոր է համակարգային մոտեցումը՝ տնտեսությունում պետական կառավարման առանցքային լծակների՝ բյուջետային, հարկային, դրամավարկային քաղաքականությունների հստակ միակցումը: Ցավոք, առկա են այդ միակցման բացակայության կամ անհստակության բազմաթիվ օրինակներ: Ասենք, կարևորագույն սկզբունքը՝ գների կայունությունն ապահովելու համար երբեմն դրամավարկային քաղաքականությունը լինում է կոշտ, ոչ ճկուն: Մինչև այժմ բավարարուչադրություն չի դարձվում դրամավարկային քաղաքականության կարևորագույն դերին՝ գների կոնկրետ կայունության ազդեցությանը տնտեսական աճի, առևտրային հաշվեկշռի և բյուջեի կատարման վրա: Վաթսուսական թվականներին Գերմանիայում ձևավորվեց «մոզական քառակուսու» սկզբունքը, որտեղ կարևորագույն դեր է խաղում գների կայունությունը, ինչն անվիճելի է, սակայն ինչպիսի՞ կայունության մասին է խոսքը՝ տնտեսական համակարգից դուրս, թե՛ ներդաշնակ՝ համակարգված առանցքային տնտեսական ցուցանիշներին: Նշենք, որ Գերմանիայում, որտեղ գնաճն այժմ կազմում է տարեկան մոտ 1%, 1970-ական թվականներին, տնտեսական էական վերելքի ժամանակ, գնաճը կազմել է մոտ 6%: Ի դեպ, մեր հարևանների մոտ՝ Իրանում, Թուրքիայում, Ռուսաստանում, գնաճը մոտ 10% է: Այնպես որ՝ գնաճին պարտադիր պետք է համակարգված մոտեցում ցուցաբերվի, ընդ որում՝ ոչ միայն կարճաժամկետ, այլ նաև տնտեսության զարգացման երկարաժամկետ հեռանկարի տեսանկյունից:

Հատկապես արտահանողների համար բացասական են դրամի արժևորումը և որոշակի միջակայքում փոխարժեքի հնարավոր փոփոխության վերաբերյալ ուղեցույցի բացակայությունը: Նպատակահարմար է որպես ուղեցույց վերցնել դրամի փոխարժեքի հետևյալ տարադրամները՝ ԱՄՆ դոլարը և եվրոն: Ի դեպ, ռուսական ռուբլու համար ուղեցույց են հենց դոլարն ու եվրոն: Դրանք մեր հիմնական տնտեսական գործընկերների կամ արտաքին առևտրում օգտագործվող արժույթն են: Իհարկե, կոշտ ամրագրված փոխարժեքի մակարդակի նշումը ճիշտ չէ, սակայն որոշակի միջակայքի կանխատեսումը վերոհիշյալ փոխարժեքների միջոցով հստակ ուղեցույց կլինի արտահանողների համար:

Նշենք նաև, որ ըստ Մասաթրիիթյան չափանիշների՝ եվրոյի գոտի մտնելու պարտադիր պայմաններից է ոչ միայն գների ամբողջ դաշտի կայունությունն ապահովելը, այլ նաև եվրոյի նկատմամբ ազգային փոխարժեքի կայունությունը: Ազգային արժույթի փոխարժեքի կտրուկ չփոփոխվելու պայմանը կարևորագույն պայման է արտահանողների և ներդրողների համար:

Երկրի տնտեսական պոտենցիալը մեծացնելու համար անհրաժեշտ է

ձևակերպել առաջնային խնդիրը՝ արտահանման ծավալների էական մեծացում + ներքին շուկայի գրավում, հատկապես առաջին անհրաժեշտության ապրանքների գծով + զբաղվածության աճ: Այս խնդիրները հատուկ ներկայացնում ենք համախմբված տեսքով, քանզի համոզված ենք, որ դա է այդ խնդիրների արդյունավետ լուծման միջոցը:

Մանրամասների գրեթե կեսի ներկրման պայմաններում ՀՆԱ և արտահանման հարաբերությունը մեզ մոտ 2007թ. կազմել է 19.3% և, ըստ Կայուն զարգացման ծրագրի՝ 2008թ.՝ 15.9% [2, էջ 7]: Կանխատեսվում է, որ 2009թ. այն կկազմի 15.8%, 2010թ.՝ 16.6% և միայն 2015թ.՝ 27%, այն պայմաններում, երբ այդ ցուցանիշը ներմուծման համար ըստ ծրագրի կկազմի 2015թ.՝ 48.9%: Ընդ որում՝ արտահանման աճի ցուցանիշն այն եզակի ծրագրային ցուցանիշներից է, որի կատարման հետ մենք խնդիրներ ունենք: Զարգացած փոքր երկրներում ՀՆԱ և արտահանման հարաբերությունը 30%-ից պակաս չէ, քանզի ակնհայտ է, որ այդ կարգի երկրների շուկան փոքր է և արտահանումն այստեղ դառնում է որոշիչ:

Այնպես որ, տնտեսական ծրագրերի կոորդինացումը՝ նպատակաուղղված ոչ թե ուղղակի արտահանման աճին, այլ ոչ պակաս, քան 30% ցուցանիշին հասնելուն և համապատասխան նպատակների, թիրախների, հաջորդական քայլերի ու միջոցառումների ձևավորումը, հնարավոր ռիսկերի գնահատումը և դրանց հակազդելու մեխանիզմների ձևավորումը, դառնում են մեր տնտեսության առաջնահերթ խնդիրը:

4. Մասնավորեցման քաղաքականություն

Մասնավորեցման առաջին փուլում շեշտադրվում էր հետևյալ նպատակը. ստեղծել սեփականատերերի լայն դաս, համենայնդեպս՝ այդպես էր հայտարարվում: Մասնավորեցման երկրորդ փուլում ակնհայտ շեշտադրում կատարվեց մասնավորեցման միջոցով պետական բյուջեն լրացնելու վրա, ինչը չի կարող մասնավորեցման հիմնական նպատակ լինել: Մասնավորեցման հիմնական նպատակը, անշուշտ, տնտեսության էական վերելքն է: Այստեղ, իհարկե, պետք է գործեն արդյունավետ մեթոդները, որոնք բնորոշ են անշարժ գույքին: Այդ նպատակով էապես պետք է բարելավել մասնավորեցման մասին օրենքը՝ անպայման հաշվի առնելով Միացյալ Թագավորության, Հունգարիայի, Չեխիայի ակնհայտորեն դրական փորձը: Կարծում ենք՝ զուր չէ, որ չեխական մասնավորեցման գաղափարախոս և իրականացնող Վացլավ Կլաուսն ընտրվեց Չեխիայի նախագահ:

Փորձենք պատասխանել նաև հետևյալ հարցին. կարելի՞ է արդյոք թույլ տալ արտասահմանյան ներդրողներին ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտների մասնավորեցումը: Ի դեպ, շատ երկրներում, նաև Ռու-

սաստանում, դա չի թույլատրվում: Մեզ համար, կարծում ենք, բանաձևը հետևյալն է. եթե հումքը տեղական է, ապրանքն արտադրվում և սպառվում է ներքին շուկայում, ապա այդպիսի ոլորտի մասնավորեցումը արտասահմանյան ներդրողների կողմից չափազանց վիճելի է, և միայն այդ 3 գործոններից մեկի բացակայության պարագայում նման մասնավորեցումը կարող է արդարացված լինել:

5. Պետական ապարատի արդյունավետությունը

Կառավարությունն, ըստ իր ծրագրի, մտադիր է զգալիորեն ավելացնել պետական կառավարման համակարգում աշխատելու գրավչությունը, աշխատանքի որակը և աշխատավարձի չափը: Իհարկե, նպատակահարմար է պետական պաշտոնյաների աշխատավարձերի բարձրացումը, և դրա հնարավորություններն առկա են նույնիսկ առանց ծախսերի մեծացման: Բայց դա արդյունավետ և հակակոռուպցիոն կլինի միայն այն դեպքում, եթե հարցին համակարգված լուծում տրվի: Ելնելով համաշխարհային փորձից՝ ձևակերպենք այդ բանաձևը. պետական պաշտոնյաների աշխատավարձի բարձրացումը կլինի արդյունավետ, եթե միաժամանակ օրենսդրորեն հստակեցվում և ուժեղացվում են պաշտոնյաների պատասխանատվությունը, հաշվետու լինելը, հրապարակայնությունը, վերահսկելիությունը և աշխատանքի արդյունքների գնահատման մեթոդները: Պաշտոնյայի իրավունքները, պարտականությունները և, իհարկե, այն պատասխանատվությունը, որը կրում է այդ պարտականությունները չկատարելու համար, պետք է հստակ ձևակերպված լինեն թե՛ նախարարի, թե՛ միջին օղակի ղեկավարի համար: Այդ դեպքում ոչ միայն կարելի է, այլև պարզապես անհրաժեշտ է դառնում մեծացնել շահագրգռվածությունը պետական աշխատանքի նկատմամբ:

Այս պարագայում, իհարկե, պետք է հստակ և մանրամասն ձևակերպվեն աշխատանքի նպատակը և կոնկրետ խնդիրները: Չափազանց կարևոր է նաև հաշվետվության ձևի արդյունավետության բարձրացումը՝ հատկապես բարձրագույն ներկայացուցչական վերահսկող մարմնում՝ Ազգային ժողովում: Ակնհայտ է, որ նախարարներին ուղղված հարցի ու հապճեպ, հաճախ իմպրովիզացիոն պատասխանի սկզբունքը բարձր արդյունավետություն չունի: Այստեղ նույնպես հաշվի առնելով միջազգային փորձը՝ անհրաժեշտ է անցնել թեմատիկ քննարկման և համապատասխան նիստում քննարկել կոնկրետ ոլորտի խնդիրների իրականացումը՝ նախապես ներկայացնելով հիմնական հարցադրումները: Այդ ձևաչափը պետք է կիրառվի նաև պետական այլ մարմիններում, ԱԺ հանձնաժողովներում:

Անարդյունավետ աշխատանքի, առավել ևս կոռուպցիոն երևույթների հնարավորություններն ի սկզբանե պետք է հասցնել նվազագույնի: Դա անհա-

մեմատ ավելի արդյունավետ է, քան կամա թե ակամա կոռուպցիոն ռիսկեր ունենալը և միայն հետո վերահսկելն ու չարաշահումները բացահայտելը: Այս առումով հասունացել է հատկապես տնտեսագիտական օրենքների հակակոռուպցիոն փորձաքննության անհրաժեշտությունը:

6. Պետական բյուջեի կառուցվածքի մասին

Պետական աշխատողների աշխատավարձերը բարձրանում են, ինչն ուշադրություն է գրավում և տրամաբանական է: Մակայն աշխատանքային փորձից ելնելով՝ նկատում եմ, որ պետական բյուջեի աճի հետ միասին աճում են նաև ոչ միշտ հստակ հիմնավորված, թույլ վերահսկելի և սուբյեկտիվության ավելի բարձր աստիճան ունեցող ծախսերը: Այդ իսկ պատճառով այդ ծախսերի արդյունավետությունը համեմատաբար ավելի դժվար է գնահատվում:

Ակնհայտ է, որ դեռևս առկա են նաև առանձին հոդվածների ծախսերի վերահսկելիության հստակեցմանը և արդյունավետության գնահատմանը վերաբերող խնդիրները: Կարծում ենք՝ պետական խնդիրները կարելի է լուծել ծախսերի ավելի արդյունավետ կառուցվածքով՝ ռացիոնալ վերաբաշխելով խնայված միջոցները, հաշվի առնելով նաև սոցիալական գործոնը: Այստեղ, անշուշտ, առկա է ծախսերի օպտիմալացման խնդիրը:

Անհրաժեշտ է ծախսային բյուջետային սկզբունքից լիարժեքորեն անցնել արդյունքների գնահատման բյուջետային մոդելի, որը նախատեսում է բյուջեի ինչպես ձևավորման, այնպես էլ կառավարման համակարգային արդիականացում: Արդյունավետ է նաև օրենսդրորեն պետական բյուջեի փաստացի մեկ ընթերցման կարգից անցնել առնվազն երեք ընթերցման (մակրոոցունիշներ, եկամուտներ և պակասուրդ, ծախսային հոդվածներ) կարգի: Դա է հուշում նաև միջազգային փորձը:

7. Արտասահմանյան վարկեր կամ՝ այն մասին, թե ուր «գնաց» միլիարդը

Մինչև այժմ տնտեսությունում օգտագործվել են մոտ \$1,5 մլրդ վարկային գումարներ: Մակայն տնտեսության իրական ոլորտում կատարված ուղղակի ներդրումներն, իհարկե, չեն համապատասխանում այդ գումարին: Բանն այն է, որ արտաքին վարկերն օգտագործվել են տարբեր նպատակների համար: Խոսքը վարկային ծրագրերի կառուցվածքի մասին է: Առավել ակներև լինելու համար ներկայացնենք կլորացված թվեր: Մոտ 300 մլն արտաքին վարկերն են, որոնք տրամադրվել են Կենտրոնական բանկին: Մոտ \$350 մլն-ը «SAC» տիպի վարկերն են, որոնք օգտագործվել են հիմնականում պետական բյուջեի ընթացիկ ծախսերը կատարելու համար: 100 մլն-ն հիմնականում հացահատի-

կի տեսքով ապրանքային վարկերն են: Գումարները, որոնք ստացվել են այդ վարկերից, նույնպես լրացրել են բյուջեն: 50 մլն-ն վճարվել է խորհրդատուներին և ծրագրի իրագործման գրասենյակների գործունեությունն ապահովելու համար: Այսպիսով, ըստ վարկային ծրագրերի, ուղղակի ներդրումները տնտեսության իրական հատված կազմել են մոտ \$700 մլն: Արտաքին վարկերի օգտագործման թերությունները և արդյունավետությունը տվյալ հատվածում անաչառ գնահատելու համար ճիշտ է առաջնորդվել այդ կարգի թվով:

Ուղղակի ներդրումները, նույնիսկ առևտրային վարկերը մասնավոր կառույցներին, որոնց նպատակն է պետական խնդիրների լուծումը, ավելի արդյունավետ են, և մեր խնդիրն է առաջին հերթին նպաստել այդ ուղղությունների խթանմանը: Չուր չէ, որ մի շարք զարգացող երկրներ հրաժարվում են միջազգային կառույցների արտոնյալ վարկերից: Սակայն եթե այդ գումարները դեռևս բավարար չեն տնտեսության զարգացման համար և անհրաժեշտ է նաև լրացնել պետբյուջեի պակասուրդը, ապա հրաժարվել այդ գումարներից դեռևս վաղ է:

Իհարկե, վերահսկողության դերն արտաքին վարկերի օգտագործման գործում կարևոր է: Սակայն պետք է հստակ ձևակերպել վարկային ծրագրերի ընտրության սկզբունքները: Սահմանենք դրանք՝ վարկային ծրագրերի ընտրության ժամանակ պետք է. 1. հստակ ձևավորել ծրագրերի նպատակը, 2. տնտեսական աճի տեսանկյունից հստակ գնահատել յուրաքանչյուր նպատակի արդյունավետությունը, 3. գնահատել ծրագրի կառուցվածքի արդյունավետությունը, ինչն իսկապես արդիական է, քանզի ոչ արդյունավետ բաղադրիչը փաստացի վերածվում է վարկի անուղղակի տոկոսի՝ երբեմն շատ բարձր:

8. Սոցիալական քաղաքականություն

Վերջին ութ տարում աղքատության ցուցանիշը 56%-ից նվազել է 26-ի: Սակայն կառավարության ծրագրում նշվում է. «աղքատության առկա մակարդակը և եկամուտների բաշխման անարդարությունը շարունակում են լուրջ վտանգ հանդիսանալ երկրի կայուն զարգացման ու քաղաքացիական հասարակության կայացման համար» [3, էջ 3]: Ակնկալվում է 2010թ. կրճատել աղքատության ընդհանուր մակարդակը մինչև 13.6%, իսկ 2012թ.՝ մինչև 11.2%:

Աղքատության սահմանված ցուցանիշը ցածր է 25 հազար դրամից, ինչը գրեթե 1,5 անգամ զիջում է նվազագույն սպառողական զամբյուղի ցուցանիշին: Այստեղ իսկապես ունենք «զգայականության շեմը» հաղթահարելու լուրջ խնդիր, և այս կարևոր հարցում հույսը դնել միայն տնտեսական աճի վրա՝ բավարար չէ: Առանց նպատակասլաց փոփոխությունների սոցիալական քաղաքականությունում, բյուջեի կառուցվածքում՝ այս հարցի լուծումը կարող է երկարաժամկետ բնույթ ընդունել:

Եվրամիության երկրներում աղքատության ցուցանիշը տատանվում է 10%-ից (Հյուսիսային Եվրոպա) մինչև 20% (Հունաստան և Պորտուգալիա): Ընդ որում՝ այդ ցուցանիշը համապատասխանում է մեկ շնչին ընկնող եկամտի 60%-ին: Այնպես որ, միջին եկամուտներ ունեցողների դասի և, իհարկե, հենց միջին եկամտի աճի խնդիրն իսկապես առաջնահերթ է: Կարծում ենք՝ հեշտ չէ, սակայն իրական է ձևավորել խնդիր՝ հասցնելով աղքատության ընդհանուր ցուցանիշը առնվազն նվազագույն սպառողական զամբյուղի ցուցանիշի մակարդակին, մոտակա 2-3 տարում այն իջեցնել մինչև ծրագրային ցուցանիշը և հասնել միջին աշխատավարձի այնպիսի մակարդակի, որն էապես բարձր է 150 հազար դրամից: Այդ դեպքում մենք իրականում կհաղթահարենք «զգայականության շեմը» այդ կարևոր հիմնահարցում: Առավել ևս, որ նպատակ ունենք հնարավորինս կարճ ժամկետներում տեղափոխվել միջին եկամուտ ունեցող երկրների խումբ:

Ղեկավար, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Дадаян В.С., Тавадян А.А., Системология экономических категорий.* М., Наука, 1992.
2. Կայուն զարգացման ծրագիր, 2008, <http://www.mineconomy.am/>
3. Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, 2008, <<http://www.gov.am/>>

КЛЮЧЕВЫЕ ЗАДАЧИ ЭКОНОМИКИ

Ашот Тавадян

Резюме

В развитых странах прошло время узких идеологий. Что явно эффективно, то крайне редко вызывает возражение. Принцип конвергенции работает и в экономике. Четко доказывается, что если в одном случае выбирается цель – свобода и эффективность экономики при определенных требованиях к социальности, а в другом формируется цель – максимум социальности при определенных требованиях к эффективности, то в результате лучшее, оптимальное решение для обеих задач совпадает.

Эффективность и социальность – это ключевые звенья единой экономической системы, так что в итоге при оптимальном, разумном правлении экономический вектор сейчас в развитом мире един – социальная эффективность.

Цели в современной экономике очевидны и разумные программы достаточно близки. Подчеркнуты основополагающие принципы экономической политики: стабильность цен, высокий уровень занятости, сбалансированная внешняя торговля, устойчивый экономический рост. Обоснована необходимость системного подхода и учета взаимовлияния данных принципов. В экономике главными становятся методы и приемы достижения целей программ. Причем эти методы должны быть упорядочены и четко скоординированы.

В экономике присутствует сформулированный автором *интервал неопределенности*, что особенно актуально для среднесрочных и долгосрочных программ, поэтому вариативность и гибкость таких программ существенно повышают их эффективность.

Для усиления экономического потенциала страны сформулирована представленная в синтетическом виде первоочередная задача экономики: существенное увеличение экспорта + занятие определяющих позиций внутреннего рынка + рост занятости.

На основе опыта приватизации сформулированы принципы, только при выполнении которых может быть обоснованно проведение приватизации в стратегических сферах экономики. Сформулирован системный подход к уровню оплаты труда в государственных структурах. Рост зарплаты будет эффективен только в том случае, если одновременно законодательно уточняется и усиливается ответственность, отчетность, транспарентность, контроль и методы оценки результата работы.

Государственные задачи можно решать за счет более эффективной структуры затрат, учитывая также социальный фактор, рационально перераспределив сбереженные средства. Сформулированы принципы выбора кредитных программ. Определено также понятие «порога чувствительности» социальной политики. Сделана попытка упорядочить исследованные вопросы в виде ключевых задач экономики.

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԳԼՈՒԽԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ

Մերզեյ Գրինյան

Հասարակության տոտալ «ցանցայնացումը» հանգեցրել է նրան, որ միջազգային հարաբերությունների ավանդական խաղացողների՝ պետությունների կողքին ավելի ու ավելի մեծ նշանակություն են ստացել ոչ պետական կառույցները: Արդի հասարակության կենսագործունեության հանրագումարի մեջ առաջին տեղ է մղվել սկզբունքորեն նոր ոլորտ՝ տեղեկատվականը:

Հոդվածում ներկայացված է գլոբալացման պայմաններում Ռուսաստանի Դաշնության ազգային անվտանգության ապահովման համակարգի արագ և արմատական բարեփոխման անհրաժեշտության հարցը: Նոր համակարգը, ըստ հեղինակի, պետք է ընդունակ լինի համարժեքորեն պատասխանել նոր ժամանակի սպառնալիքներին: Եվ պետության ազգային անվտանգության ապահովման հիմքում պետք է դրված լինի տեղեկատվական քաղաքականությունը:

1. Խնդրի էությունը

Մեզ վիճակվեց ապրել խիստ դինամիկ, իրադարձություններով լի, բայց և միևնույն ժամանակ դրամատիկ պատմաշրջանում: XX դարի երկրորդ կեսը բնութագրվում էր հասարակական կյանքում կատարված մասշտաբային փոփոխություններով. գլոբալացման գործընթացները, մեծագույն ձեռքբերումները գիտության և տեխնիկայի տարբեր ճյուղերում հանգեցրին խոր փոփոխությունների նաև միջպետական հարաբերություններում:

Ամեն սերնդի չէ, որ հաջողվում է դիմավորել ոչ միայն նոր հարյուրամյակ, այլ նաև նոր հազարամյակ: Մեզ բախտ վիճակվեց, դրանց հետ միասին, հետևել նաև արդի հասարակության կացութաձևերի փոփոխությանը: Մենք դարձանք փոխակերպման այն գործընթացների վկան, որոնք XX դարի վերջին երեք տասնամյակում հետինդուստրիալ հասարակությունը XXI դարասկզբին վերածեցին տեղեկատվական հասարակության: Այդ գործընթացների շարժիչ ուժը դարձավ ինֆորմատացումը. տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաները թափանցեցին մարդու կյանքի և գործունեության բոլոր ոլորտները:

Հասարակության տոտալ «ցանցայնացումը» հանգեցրեց նրան, որ միջազգային հարաբերությունների ավանդական խաղացողների՝ պետությունների կողքին ավելի ու ավելի մեծ նշանակություն ստացան ոչ պետական կառույցները: Արդի հասարակության կենսագործունեության հանրագումարում առաջին տեղ է մղվում սկզբունքորեն նոր ոլորտ՝ տեղեկատվականը:

Կենսագործունեության նոր ոլորտին հատուկ են ինչպես նոր ռեսուրսը՝ տեղեկատվությունը, այնպես էլ այդ ռեսուրսին տիրապետելու համար մղվող պայքարի առաջ բերած հակասությունները:

Աշխարհակարգի սկզբունքների արմատական փոփոխության պայմաններում, գլոբալացման գործընթացների ազդեցության տակ, հատուկ տեղ է գրավում ազգային անվտանգության ապահովման հարցը:

Այս պայմաններում փոխակերպվում է ազգային անվտանգության՝ որպես պետության կարևորագույն գործառնություն, հասկացությունն ինքը: *Պետության՝ ինդուստրիալ դարաշրջանի սպառնալիքների մոդելին համապատասխան ստեղծված անվտանգության համակարգը, որ կառուցված է հակառակորդի նման կառույցների հետ հակամարտության հաշվարկով, ի վիճակի չէ հաղթահարել նոր ժամանակի սպառնալիքները:* Դա առավել հստակ դրսևորվեց 2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում իրականացված ահաբեկչությունից հետո:

Այսօր պետությունների միջև հակասությունների էական մասը փոխադրվել է տեղեկատվական ոլորտ: Սույն հանգամանքը պայմանավորեց այն, որ փոխվեն մոտեցումները «ռազմական ուժ» հասկացության հանդեպ: Զենքի «կոպիտ ուժին» փոխարինելու է գալիս համոզելու և հոգեբանական մանիպուլյացիայի «փափուկ ուժը»: Այս սկզբունքի իրագործումը պահանջում է վերանայել մոտեցումները նոր դարաշրջանի ռազմական ստրատեգիայի ձևավորման նկատմամբ: Տեղեկության և տեղեկատվական տեխնոլոգիաների գերակա դերը, ինչպես նաև տեղեկատվական դարաշրջանի սկզբունքորեն նոր սպառնալիքների կասեցմանն ուղղված կողմնորոշումը հարկադրեցին արևմտյան մի շարք երկրների և, առաջին հերթին, ԱՄՆ ղեկավարներին՝ ավելի ակտիվացնել զինված ուժերի վերափոխման նոր հայեցակարգերի ներդրումը: Դրանցից է «ցանցային պատերազմի» հայեցակարգը:

2. Իրավիճակը տեղեկատվական ոլորտում

Մի շարք փորձագետների կարծիքով՝ տեղեկատվական ոլորտում ազգային շահերի ապահովման հետ կապված իրավիճակը կտրուկ բարդացավ ԱՄՆ-ում 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններից հետո, որը ներկայումս շարունակում է վատթարանալ: Այն, ինչ տեղի է ունենում, ոչ այլ

ինչ է, եթե ոչ ուժերի վերաբաշխման գուգակշռի փոփոխություն, արդի հասարակության կենսականորեն կարևոր, սկզբունքորեն նոր՝ տեղեկատվական ոլորտում ազդեցության ոլորտների վերաբաշխում: Այս վերաբաժանման մեջ այսօր առանցքային դերը պատկանում է ԱՄՆ-ին:

Այսպես, վերջին տարիներին, ԱՄՆ Ազգային խորհրդի հետախուզության գծով ռազմավարական գնահատականների ծրագրի «Տեղեկատվական հեղափոխություն» նախաձեռնության շրջանակներում, ՌԵՆԴ վերլուծական կորպորացիան անցկացրել է միջազգային մի շարք գիտաժողովներ և սեմինարներ, որոնց ընթացքում ուսումնասիրվել և գնահատվել է առաջատար փորձագետների կարծիքը տեղեկատվական հեղափոխության ազդեցության ներքո հասարակության կրած փոխակերպման խնդրի վերաբերյալ:

Կատարված աշխատանքի արդյունքները ՌԵՆԴ փորձագետների կողմից ընդհանրացվեցին 2003թ. ամռանը հրապարակված «Տեղեկատվական հեղափոխության գլոբալ ուղղությունը. ընդհանուր հարցեր և տարածաշրջանային տարբերություններ» (*The global course of the information revolution: recurring themes and regional variations*», MR-1680-NIC) հաշվետվությունում:

ՌԵՆԴ-ի հետազոտությունը գլոբալացման և տեղեկատվական հեղափոխության, արդի հասարակության շարժիչ ուժերի ուսումնասիրման աշխատանքների բազմամյա ծրագրի ավարտական փուլն է, առաջիկա 10-20 տարիներին կոնֆլիկտային պոտենցիալի և ԱՄՆ ազգային անվտանգության հնարավոր սպառնալիքների վերհանման վերլուծությունը:

Հետազոտության հիմնական նպատակն արդի հասարակության տնտեսական, ֆինանսական, քաղաքական, մշակութային, սոցիալական և կենսագործունեության այլ ոլորտների վրա տեղեկատվական տեխնոլոգիաների ու տեղեկատվական հեղափոխության ազդեցության բնույթը պարզելն է, ինչպես նաև առաջիկա 10-20 տարիներին իրավիճակի զարգացման կանխատեսումը:

Հետազոտությունում նշվում է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների առաջընթացն այսօր արդեն շոշափել է բիզնեսի, պետական և հասարակական գործունեության բազմաթիվ ոլորտներ աշխարհի բոլոր տարածաշրջաններում: Տեղեկատվական տեխնոլոգիաները և դրանց հետ կապված տեղեկատվական հեղափոխությունը վերածվել են հասարակության փոխակերպմանը, հետինդուստրիալականից տեղեկատվական հասարակության անցմանը նպաստող առավել նշանակալի գործոններից մեկի: Ջանալով որքան հնարավոր է ամբողջությամբ օգտագործել այն առավելությունները, որոնք իր հետ բերում է տեղեկատվական հեղափոխությունը, ամերիկյան վերլուծաբանները փորձում են կանխատեսել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն

ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ հեռանկարի համար:

Վերլուծության արդյունքները թույլ տվեցին վերհանել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և տեղեկատվական հեղափոխության ազդեցությանը բնորոշ շատ առանձնահատկություններ: Ընդ որում՝ մի շարք առանձնահատկություններ բնորոշ են աշխարհի տարածաշրջանների մեծ մասին, իսկ որոշներն էլ հատուկ են առանձին տարածաշրջանների:

Այսպես, տարածաշրջանների մեծ մասի (որոնք ձգտում են կիրառել տեղեկատվական հեղափոխության ձեռքբերումները) համար բնորոշ առանձնահատկությունների թվում ՌԵՆԴ փորձագետները նշում են հետևյալը.

1. Նոր տեխնոլոգիաների մշակումը մշտապես կիսթանի տեղեկատվական հեղափոխությունը:
2. Տեղեկատվական հեղափոխությունն առաջ կրերի նոր բիզնես-մոդելներ, որոնք էապես կձևափոխեն գործնական և ֆինանսական աշխարհը:
3. Տեղեկատվական հեղափոխությունն էականորեն կանդրադառնա հասարակության կառավարման մեխանիզմների վրա և կստեղծի նոր քաղաքական խաղացողներ:
4. Տեղեկատվական հեղափոխությունը կմնա բազմադեմ և կձևավորվի սոցիալական ու մշակութային արժեքներով:
5. Կապիտալն և տեղեկատվական հեղափոխության ընկալման նկատմամբ ազգային մոտեցման բազմազործոն ձևն ու էությունը:

Բացի այդ, ՌԵՆԴ փորձագետները կանխատեսում են աշխարհաքաղաքական իրադրության զարգացման հետևյալ հիմնական միտումները.

1. Առաջիկա 10-20 տարիներին ԱՄՆ-ը կմնա տեղեկատվական հեղափոխության առաջատարը:
2. Տեղեկատվական հեղափոխությունը Եվրոպայում ավելի դանդաղ և փոքր-ինչ այլ հունով կզարգանա, որը տարբեր կլինի ԱՄՆ-ում և Կանադայում դրա զարգացումից:
3. Առաջիկա 10-20 տարիներին Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի մի շարք երկրներ կշարունակեն տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումն ու մասշտաբային կիրառությունը:
4. Աշխարհաքաղաքական միտումները, որոնց նպաստում է տեղեկատվական հեղափոխությունը, կարող են նոր մարտահրավերներ նշանավորել Միացյալ Նահանգների և աշխարհի այլ զարգացած երկրների ազգային անվտանգության համար:

Քանի որ թվարկված տեխնոլոգիական հեղափոխությունների տեմպն արագանում է, իսկ դրանց սիներգետիկ ազդեցությունը՝ մեծանում, խորանում է նաև ապագայի հասարակության վրա դրանց ներգործության հետևանքների ըմբռնումը: ՌԵՆԴ փորձագետները փաստում են, որ նշված տեխնոլոգիական հեղափոխությունների ընթացքում կպահպանվի առանձին ազգերի և տարածաշրջանների անհավասարությունը, ավելին, տեխնոլոգիական հեղափոխությունների տեմպի արագացումը կհանգեցնի անհավասարության խորացման՝ նաև որպես հետևանք ողջ աշխարհում լարվածության աննախադեպ աճի:

3. Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական անվտանգության սպառնալիքները

Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական անվտանգությանը հիմնական սպառնալիք են ներկայացնում Ռուսաստանի նկատմամբ իրենց գերազանցությունն օգտագործելու՝ Արևմուտքի մի շարք երկրների և, առաջին հերթին, ԱՄՆ ծրագրերը, գերազանցություն, որն առաջացել է միասնական գլոբալ տեղեկատվական հարթությունում տեղեկատվական պայքարի կազմակերպման ու տեխնոլոգիաների ոլորտում նրանց ունեցած ինտելեկտուալ առաջընթացի արդյունքում: Ներկայումս ԱՄՆ-ում ակտիվացել են ազգային տեղեկատվական ռազմավարության իրականացմանն ուղղված աշխատանքները: Դրանց նպատակն է ապահովել տեղեկատվական զգալի գերազանցությունը այն տեղեկատվության պարտադրման միջոցով, որն այլ երկրների բարձր ռազմաքաղաքական ղեկավարությանը կմղի ընդունել ԱՄՆ-ին ձեռնադրող որոշումներ: Ազգային տեղեկատվական ռազմավարության նպատակներին հասնելու գործում կարևոր տարր են համարվում թիրախային լսարանի ընկալման կառավարումն ու «հանրային կարծիքի» ձևավորումը տեղեկատվության մանիպուլացման միջոցով: Առաջադրված նպատակներին հասնելու հիմնական ձևը ոչ բռնի գործողություններն ու «թավշյա» հեղափոխությունների հրահրումն են:

ԱՄՆ ազգային քաղաքականության նպատակները կիրառործվեն ռազմավարական տեղեկատվական հակամարտությամբ՝ հարձակողական տեղեկատվական գեներալ օգտագործման միջոցով: Վերջին ժամանակներս առավել հաճախ որպես այդպիսին են դիտարկվում ոչ թե հակառակորդի տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեսուրսի վրա ազդեցության ապարատային-ծրագրային միջոցները, այլ տեղեկատվությամբ մանիպուլացնելու միջոցներն ու մեթոդները: Այս է վկայում սույն թեմատիկայի վերաբերյալ աշխատանքների վերլուծությունը. արտասահմանյան մամուլում վերջին տարիներին կտրուկ ավելացել է գիտակցության մանիպուլացման միջոցնե-

րին ու մեթոդներին (մասնավորապես, ներյուլեզվաբանական ծրագրավորման, հիպնոսի և սուզգեստիվ ներգործության այլ մեթոդների), անձի հոգեբանության ուսումնասիրմանը նվիրված և այլ աշխատանքների թիվը: Ի հայտ է եկել նոր հասկացությունների մի շարք, օրինակ՝ «իրական վիրտուալությունը», երբ ինչ-որ իրադարձության լուսաբանումը մամուլում ձեռք է բերում ավելի մեծ կարևորություն, քան իրադարձությունն ինքը:

Դեռևս անցյալ դարի 60-70-ական թթ. իրականացված այնպիսի ծրագրերի շուրջ, ինչպիսին «MK-Ուլտրան» է, «Արտիճուկը» և այլն, գիտական մի շարք հետազոտությունների ժամանակ օբյեկտիվորեն սահմանվել էր, որ տեղեկատվական պատերազմների վարման առավել հեռանկարային մեթոդները հենց անհատական, խմբային ու հանրային կարծիքի վրա ներազդելու մեթոդներն են:

Նման մեթոդների կիրառումը պետական մակարդակով պահանջում է վերանայել պետության արտաքին և ներքին քաղաքականության անցկացման մոտեցումները տեղեկատվական դարաշրջանում:

Ռազմավարական տեղեկատվական հակամարտության մեջ գործադրվող հիմնական ուժերը կլինեն բարձրակարգ քաղաքական տեխնոլոգիաների, սփիչայթրերների և իմիջմեյքլերների ոչ մեծ խմբերը, որոնք կպատրաստեն և կխաղարկեն առաջադրված սցենարը: Նման մասնագետների աշխատանքն այսօր կոչվում է «կապեր հասարակության հետ» (*public relation, PR*): Նման խմբի օրինակ է Հարավսլավիայի հակամարտությունը լուսաբանող մասնագետների խումբը՝ Զիմի Շեայի գլխավորությամբ: Հենց Հարավսլավիայում ամբողջ ծավալով փորձարկվեց ռազմավարական տեղեկատվական հակամարտության միջոցների ողջ ցիկլը. հակամարտությունն սկսվելուց առաջ քաղաքական դեկլարության վարկաբեկումից մինչև իրադարձությունների լուսաբանումը զինված ագրեսիայի ընթացքում:

Հակառակորդի հանդեպ տեղեկատվական զգալի գերազանցության հասնելու և տեղեկատվական ու հոգեբանական գործողությունների անցկացման՝ ԱՄՆ-ում առկա համակարգի անհրաժեշտությունն ապացուցվեց ամերիկյան զինվորական փորձագետների կողմից Հարավսլավիայի, Աֆղանստանի և Իրաքի դեմ իրականացված գործողությունների արդյունքների մանրամասն վերլուծությունից հետո: Այդ գործողությունների ընթացքում ամերիկյան զինվորականները մեկ անգամ ևս համոզվեցին, թե որքան հսկայական է տեղեկատվությամբ մանիպուլյացիայի միջոցների ներուժը:

4. Տեղեկատվական ոլորտում Ռուսաստանի ազգային անվտանգության սպառնալիքների հիմնական գործոնները

Տեղեկատվական հասարակության սրընթաց զարգացումը զգալիորեն մեծացնում է տեղեկատվական ոլորտի ազդեցությունը երկրի ազգային անվտանգության վրա:

Տեղեկատվության վերածումը մարդկության կարևորագույն ռեսուրսներից մեկի հանգեցնում է տեղեկատվական ոլորտում հակամարտությունների (որոնք ուղղվում են այդ նոր ռեսուրսը նվաճելուն և դրա նկատմամբ գերիշխանությունը պահպանելուն) թվի և ինտենսիվության աճի:

Տեղեկատվական ոլորտում Ռուսաստանի ազգային անվտանգության սպառնալիքների թվում առաջիկա տարիներին առավել նշանակալի կլինեն հետևյալները.

Գլոբալ տեղեկատվական ցանցերի մասշտաբների շարունակվող անվերահսկելի աճը. - Այսօր արդեն իրավիճակը գլոբալ տեղեկատվական ցանցերում մեծ մասամբ դուրս է եկել այն ստեղծողների վերահսկողությունից: Ամեն ամիս ցանցում հայտնվում են զանգվածային նոր տեղեկատվամիջոցներ, զանազան արմատական խմբավորումների սայթեր և այլն:

Վերջին ժամանակներս տեղեկատվական հարթությունն ավելի ակտիվ է օգտագործվում ահաբեկիչների կողմից՝ իրենց գործունեությունը համակարգելու, հարաբերություններ հաստատելու և ֆինանսներ ներգրավելու նպատակով: Ընթերցելով նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներուժը՝ միջազգային մի շարք ահաբեկչական կազմակերպություններ վերջին ժամանակներս փորձում են կապեր հաստատել հաքերների գլոբալ ցանցային ընկերակցությունների հետ: Ահաբեկիչներն աշխատանք են տանում ապագայում ահաբեկչական գործողությունների ծրագրման և անցկացման մեջ նրանց ներգրավելու ուղղությամբ: Ապացուցված է, որ Ալ-Կաիդայի ահաբեկիչներն իրենց գործունեությունը համակարգում էին հենց գլոբալ ցանցերի օգտագործման ճանապարհով: Ահաբեկիչների և հաքերների միջև աշխատանքային կապերի հաստատումը սպառնում է ահաբեկիչների տեխնոլոգիական զարգացման կտրուկ առաջընթացով, ինչը կարող է հանգեցնել նրան, որ ահաբեկիչներն առաջիկա տարիներին արդեն ձեռք կբերեն տեղեկատվական ոլորտում մասշտաբային ահաբեկչական գործողություններ իրականացնելու ընդունակություն:

Տեղեկատվական-հոգեբանական գործողություններ իրականացնելիս տեղեկատվա-քարոզչական նյութերը լսարանին հասցնելու սկզբունքորեն նոր միջոցների ի հայտ գալը. - Վերջին տարիներին լայնորեն կիրառվում են այնպիսի նոր մեդիա-միջոցներ, ինչպիսիք են արբանյակային հեռուստատեսությունը և ռադիոն, թվային հեռուստատեսությունը, էլեկտրոնային փոստը,

վիրտուալ իրականության միջոցները և այլն: ԱՄՆ բանակում 2001թ. հոկտեմբերից գործում է Ռազմավարական ազդեցության կենտրոնը, որի խնդիրն է ռազմավարական հոգեբանական գործողությունների անցկացմանն ուղղված գործողությունների համակարգումը՝ այդ թվում և զանգվածային տեղեկատվամիջոցների կիրառմամբ:

Վերջին տարիներին կտրուկ աճել է տեղեկատվական համակարգերի ռեսուրսի վրա հատուկ ծրագրային-մաթեմատիկական ազդեցության միջոցների թիվը, ընդ որում՝ այդ միջոցներն իրենք, գլոբալ ցանցերի զարգացմանը զուգընթաց, դարձել են լայնորեն հասանելի, ինչը տանում է դեպի հաքերային գրոհների ավելացման պաշտպանության նախարարության և իշխանության դաշնային մարմինների տեղեկատվական համակարգերի վրա: Բազմակի ավելացել է համակարգչային վիրուսների քանակությունը, առկա հակավիրուսային արդյունաբերությունն արդեն չի կարողանում լիարժեք հաղթահարել աճած լարվածությունը:

Շարունակում է ավելանալ արբանյակային կապի համակարգերի թիվը, կատարելագործվում են դրանց տեխնիկական բնութագրերը. Վերջին տարիներին կտրուկ աճել է արբանյակային կապի օպերատորների թիվը: Այսօր կապի արբանյակային կապի միջոցներն ուժի ցուցադրման տեսակետից ԱՄՆ նոր ռազմական դոկտրինի իրականացման անքակտելի մասն են: Ընդ որում, ԱՄՆ մի շարք պաշտոնական փաստաթղթեր ամրագրում են այդ երկրի գերակայությունը տիեզերքում: Իսկ Ռուսաստանը մինչ այժմ չի կարողանում լրիվ ծավալով համալրել կապի արբանյակների ուղեծրային խումբը և դրանց գլոբալ դիրքավորումը, ինչն էականորեն է անդրադառնում հրամանները և կարգադրությունները տեղ հասցնելու օպերատիվության վրա, իսկ ուղեծրում տիեզերական սարքերի ծառայության կարճ ժամկետը սակավարդյունավետ է դարձնում ռուսական կապն արտակարգ պայմաններում կիրառելու համար:

Մշակվում են գիտակցության մանիպուլացման տեխնիկական միջոցների ստեղծման գիտահետազոտական ծրագրեր. Մի շարք տեղեկատվական գործակալությունների հայտարարությամբ՝ վերջին տարիներին բավականաչափ դրական արդյունքներ են ստացվել կենդանիների (ներառյալ մարդը) հեռահար կառավարման տեխնիկական միջոցների ստեղծմանն ուղղությամբ, ինչն առաջիկայում կարող է նոր կարգի սպառնալիքների տեղիք տալ՝ կապված երկրի զինվորական և քաղաքական բարձրագույն իշխանության ենթագիտակցության վրա քողարկված ազդեցության հետ:

Նվազում է ռուսաստանյան բուհերի շրջանավարտների որակային ներուժն այն մասնագիտությունների գծով, որոնք կապված են տեղեկատվական

տեխնոլոգիաների հետ.- Մի շարք մասնագետների կարծիքով՝ վերջին տարիներին նկատվում է տեղեկատվական տեխնոլոգիաների գծով մասնագետների պատրաստման մակարդակի նվազում, ինչպես նաև նրանց զանգվածային արտագաղթ արտասահման: Նման իրավիճակը լի է այն սպառնալիքով, որ առաջիկա տարիներին Ռուսաստանը կգրկվի անհրաժեշտ մտավոր ներուժից, առանց որի անհնար է նոր տեղեկատվական տեխնոլոգիաների մշակումն ու ներդրումը երկրի պաշտպանության ոլորտում:

5. Առաջարկներ Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական անվտանգության ապահովման գերակա ուղղությունների վերաբերյալ

ՄԱԿ գլոբալ ներդրումային ակտիվության մասին (*World Investment Report*) 2004թ. զեկույցը նվիրված է գիտահետազոտական մշակումների գլոբալացմանը: Եվ դա առանձնապես հետաքրքիր է դարձնում այն, հատկապես Ռուսաստանում տեղեկատվական հանրության կայացման մասին հարցի քննարկման համատեքստում¹:

2004 թվականն ընդգծեց բարձրագույն տեխնոլոգիաների շուկայի ճգնաժամին հաջորդած՝ միջազգային ներդրումային ակտիվության կտրուկ անկումը: 2003թ. համեմատ 2%-ով աճած ուղղակի անդրսահմանային ներդրումները կազմեցին \$648 մլրդ կամ 2000թ. ռեկորդային մակարդակի 48%-ը: Բնութագրական է, որ առավել մեծաքանակ ներդրումները բաժին են ընկել ԵՄ երկրներին. արտասահմանում բոլոր կապիտալ ներդրումների 38%-ը: Նրանք ավելի շատ ներդրումներ են ընդունել, քան Ասիան ու Լատինական Ամերիկան միասին վերցրած, և կրկնակի ավելի, քան ԱՄՆ-ը և Կանադան: Միևնույն ժամանակ, օտարերկրյա ներդրումներն առանձնակի արագությամբ տրվեցին ասիական երկրներին՝ \$148 մլն կամ դրանց ընդհանուր ծավալի 23%-ի չափով (երկրորդ տեղը Եվրոպայից հետո):

2004թ. օտարերկրյա ներդրողները մեր տնտեսությունում ներդրել են \$7,1 մլրդ շահույթ՝ ստացված երկրում իրենց ունեցած բիզնեսից, և դա Ռուսաստանի համար ապահովեց հինգերորդ տեղն աշխարհում վերաներդրված կապիտալի ծավալի գծով: Խոշոր ՎԱԿ (վերազգային կորպորացիաներ) ղեկավարների 33%-ը Ռուսաստանը «խիստ հրապուրիչ» է համարել ներդրումների համար (երրորդ տեղը համապատասխան վարկանիշում. առաջինը Չինաստանն է, երկրորդը հորիզոնականը կիսում են Հնդկաստանն ու ԱՄՆ-ը): Սակայն այդ գրավչությունը, ինչպես և հենց ներդրումները, միանգամայն առանձ-

¹ ՄԱԿ *World Investment Report* զեկույցի տեսությունը ներկայացված է Վ.Ինոկենցի «Մերձեցում համարժեքությանը» հոդվածի նյութերով // *BusinessWeek Россия*, 10 հոկտեմբերի, 2005:

նահատուկ, գրեթե բացառապես ռեսուրսների հայթայթմանը կողմնորոշված ճյուղ են մնում: Ռուսաստանում սույն ցուցանիշը հասնում է 73%-ի (գարգացած երկրներում՝ միջինը ընդամենը 0,9%):

ՄԱԿ փորձագետների ներկայացրած պատկերը միանշանակ վկայում է. Ռուսաստան ներդրումների ամենանկատելի սահմանափակիչը դրանց «ուշ-տեխնոլոգիական» բնույթն է: Մեր երկիրը տեխնոլոգիական զարգացման ապահովմանը հատկացնում է գրեթե մեկուկես անգամ քիչ միջոցներ, քան միայն *Daimler Chrysler* կոնցեռնը: Բայց արևմտյան ներդրողները մեր պետական գործիչներից ավելի լավ են կարողանում տարբերել երկրի պոտենցիալը որպես այդպիսին և ղեկավարության պոտենցիալը: Ջեկույցի՝ տնտեսության գիտատար ճյուղերի զարգացման գործում ազգային կառավարությունների դերին նվիրված ութերորդ գլխում ոչ մի անգամ չհիշատակելով Ռուսաստանի Դաշնությունը՝ նրանք Ռուսաստանը գետեղել են բավական պատկառելի 24-րդ տեղում՝ երկրներն ըստ նորարարությունների «անվանակարգի» դասակարգելով: Իսկ իրենց ընկերությունների տեխնոլոգիական ստորաբաժանումները տեղադրելու գրավչության գծով արևմտյան ներդրողները ՌԴ-ն գետեղեցին 6-րդ պատվավոր հորիզոնականում, Չինաստանից, ԱՄՆ-ից, Հնդկաստանից, Ճապոնիայից ու Անգլիայից հետո:

Ռուսաստանն այսօր գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական աշխատանքների վրա ծախսում է 1,6 անգամ ավելի քիչ, քան 9 միլիոնանոց Շվեդիան: Ռուսաստանը զարգացող երկրների շարքում «վատ չի նայվում» ԱՄՆ-ում գրանցվող պատենտների թվով՝ գրավելով յոթերորդ տեղը Թայվանից, Հարավային Կորեայից, Հոնկոնգից, Չինաստանից, Սինգապուրից և Հնդկաստանից հետո: Բայց մեր հայտատուների ընդհանուր թվի մեջ մասնավոր անձինք կազմում են մեկ երրորդից պակաս մասը, իսկ ինստիտուտներն ու կազմակերպությունները՝ 68%-ը: Համեմատության համար. Թայվանում և Հարավային Կորեայում, որոնց ներկայացուցիչներն ամեն տարի ԱՄՆ-ում գրանցում են համապատասխանաբար 21,3 և 12,7 անգամ ավելի պատենտներ (!), քան ռուսաստանցիները, կազմակերպություններին բաժին է ընկնում հայտատուների ընդհանուր թվի ընդամենը 4%-ը: Կուտակված օտարերկրյա ներդրումների ծավալով Ռուսաստանն ընդունված է համեմատել Չինաստանի ((\$98,4 մլրդ և \$702 մլրդ) հետ. բնակչության մեկ շնչին ընկնող հաշվարկով մենք նրանից առաջ ենք անցնում ավելի քան քառորդ չափով: Բայց եկեք վերցնենք Դանիան, որը հետևում է մեզ «ընդունողների» ցուցակում. \$98,2 մլրդ 5,4 մլն մարդու համար: Այսինքն՝ յուրաքանչյուր դանիացու բաժին է ընկնում \$540 ներդրում, ինչպես Չինաստանում և ոչ թե \$663,

ինչպես Ռուսաստանում է, այլ \$18,2 հազար: Եվ սա ռեկորդ չէ. Շվեյցարիայում այդ ցուցանիշը \$25,1 հազար է, Հոլանդիայում՝ \$26,8 հազար:

Դրա համար էլ ներկայիս աշխարհաքաղաքական դրությունը թելադրում է պետության տեղեկատվական անվտանգության ապահովման ռազմավարական գծի մշակման և իրականացման անհրաժեշտությունը՝ աշխարհի առաջատար երկրների միջև գլոբալ տեղեկատվական հակամարտության ընթացքում:

Այսօր անհրաժեշտ է մշակել տեղեկատվական պատերազմի վարման գոյություն ունեցող մոտեցումների հնարավոր վերափոխումների տարբերակներ՝ դրանց կառավարման գործընթացները ռազմավարական պլանավորման բարձրագույն մակարդակներից մեկը դուրս բերելու նպատակով:

Անհրաժեշտ է ունենալ տեղեկատվական զենքից և կիրառական տեխնոլոգիաներից պետության պաշտպանության հիմնախնդրի միասնական ընկալում:

Տարբեր գերատեսչությունների անջատ գործողություններն իրական արդյունքներ չեն տալիս, խնդրի լուծման համար անհրաժեշտ է ընդհանուր հայեցակարգ՝ տեղեկատվական անվտանգության դոկտրինի հիման վրա, որը թույլ կտա պետությանը համակարգել ազգային տեղեկատվական անվտանգության ապահովման բոլոր մասնակիցների գործունեությունը:

Պետության տեղեկատվական անվտանգության խնդիրները պետք է լուծվեն տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգի մարմինների կառուցվածքի մշտական կատարելագործման հիման վրա: Անհրաժեշտ է նրանց փոխգործակցությունների կոորդինացում, հակառակորդի տեղեկատվական-քարոզչական և հոգեբանական գործողությունների ակտիվ հակազդեցության հնարքների և միջոցների կատարելագործում՝ ելնելով առաջադրված նպատակներից և խնդիրներից:

Անհրաժեշտ է ակտիվացնել տեղեկատվական անվտանգության միասնական տեսական հիմքերի մշակման աշխատանքները:

Անհրաժեշտ է նաև լրացումներ կատարել ՁԼՄ օրենսդրության մեջ, որոնք կարգելեն հրապարակել այնպիսի նյութեր կամ մեկնաբանություններ տալ տեղի ունեցող այնպիսի իրադարձությունների, որոնք չեն համապատասխանի Ռուսաստանի ազգային շահերին: Նման միջոցառումների մի ամբողջ շարք վերջերս ընդունվել է ԱՄՆ-ում՝ «դեմոկրատիայի հայրենիքում», և ըմբռնումով է ընկալվել երկրի բնակչության մեծամասնության կողմից:

6. Ռուսաստանում տեղեկատվական հասարակության ձևավորման և զարգացման ռազմավարության հիմնական թեզիսների մասին

Ընդհանուր դրույթներ և մոտեցումներ ազգային տեղեկատվական ռազմավարության ձևավորման հարցում

Ցանկացած ռազմավարություն պետք է ներառի հետևյալը.

1. Նպատակի հստակություն:
2. Հստակ պատկերացում շրջակա միջավայրի մասին:
3. Առկա ռեսուրսների մասին հստակ պատկերացում:
4. Դրված նպատակին հասնելու հնարավոր եղանակներն ու միջոցները շրջակա միջավայրի առաջադրած պայմաններում, որոշակի ռեսուրսների առկայության պարագայում:

Կարևորագույն խնդիրը Ռուսաստանի ազգային շահերի որոշումն է տեղեկատվական ոլորտում, առաջին հերթին՝ հաշվի առնելով «պահանջմունք – շահ – շահի իրականացման նպատակներ – ռեսուրսներ – նպատակին հասնելու արդյունավետ եղանակ» շղթան:

Ձևակերպելով ազգային տեղեկատվական ռազմավարության մշակման մոտեցումները անհրաժեշտ է հիշել հետևյալ հիմնարար սկզբունքների մասին.

1. Պետությունը հասարակության վերնաշենքն է, ուստի, *պետությունն ի վիճակի չէ ձևավորել նոր հասարակություն, այն կարող է ընդամենը չխանգարել և փորձել փոխակերպվել հասարակության փոփոխություններին համապատասխան* (օրինակ, «Էլեկտրոնային կառավարության» ձևով):
2. *Արդի հետինդուստրիալ հասարակությունը պահպանել է հասարակական հարաբերությունների ավանդական հիմքը՝ հիերարխիան, նոր հասարակությունը հենվում է սկզբունքորեն նոր՝ ցանցային մոդելի վրա:* Դա իր հետևից կրերի հսկայական փոփոխություններ տնտեսության, քաղաքականության, իշխանության կառուցվածքի, անվտանգության ապահովման մեջ: Դա կհանգեցնի նաև *կառավարչական որոշումների մշակման և ընդունման ալգորիթմի փոփոխության:*
3. Անցյալ դարի 90-ական թթ. ԱՄՆ-ում տեղեկատվական հասարակությունը գործնականում արդեն կար, բայց *էական արդյունքներ չտվեց*, այլ հանգեցրեց բարձրտեխնոլոգիական բորսայական ինդեքսների ճակատագրական անկման: Պետք է եզրահանգումներ անել: *Տեղեկատվական արդյունաբերությունն ինքնին ոչինչ չի տալիս, դա լոկոմոտիվ է, որին*

անհրաժեշտ է կցել վագոններ, որոնք մարդու կյանքի որակը բարձրացնող իրական արտադրանք են տալիս: Ինչպես վերը նշեցինք, Արևմուտքում այսօր նման «վագոններ» են համարում կենսատեխնոլոգիաները, նանոտեխնոլոգիաները և էներգետիկ տեխնոլոգիաները: Դրանք բոլորը չեն կարող գոյություն ունենալ առանց տեղեկատվական տեխնոլոգիաների, բայց ի վիճակի են թողարկել միանգամայն որոշակի արտադրանք:

Այնուհետև, խոսելով, մասնավորապես, տարածաշրջանային քաղաքականության մասին՝ անհրաժեշտ է հաշվի առնել տարածաշրջանային զարգացման առանձնահատկությունները գլոբալացման պայմաններում. գլխավորապես զարգանում են գլոբալ կլաստերներ (մեգապոլիսների տիպի. Ֆրանկֆուրտ, Նյու Յորք, Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ և այլն), որոնցում կենտրոնանում են կապիտալը, աշխատանքային ռեսուրսները, իշխանությունը և այլն, բայց ոչ հավասարաչափ երկրների ողջ տարածքի համար: Ուստի, անհրաժեշտ են էական ճշգրտումներ նաև տարածաշրջանային քաղաքականության մեջ:

7. Ազգային տեղեկատվական ռազմավարության նպատակը

Արդի հասարակության՝ առօրյա կյանքում տեղեկատվական տեխնոլոգիաների խոր ներթափանցմամբ առաջ եկած փոխակերպումները հիմնականում օբյեկտիվ գործընթաց են, անկախ պետության վարած քաղաքականությունից: Փոխակերպման գործընթացներն այնքան հիմնավոր են, որ լուրջ սպառնալիք են պարունակում բոլոր նրանց համար, ովքեր չեն ընդունել նոր պայմանները: Ընդ որում՝ վերափոխումների տեմպերն այնքան բարձր են, որ եթե այսօր հաշվի չառնվի փոփոխությունների բնույթը, վաղն արդեն դրանց հասնելու ժամանակ և ուժ չի լինի:

Այսօր Ռուսաստանին անհրաժեշտ է, վերջապես, կողմնորոշվել տեղեկատվական հասարակության ձևավորման և զարգացման սեփական ռազմավարության հարցում, որում պետք է սահմանի դրա ձևավորման պայմաններն ու հիմնական սկզբունքները, ինչպես նաև գլոբալ տեղեկատվական հասարակության մեջ Ռուսաստանի ներգրավման սկզբունքները:

Այս իրավիճակում որպես ռազմավարության հենակետային նպատակ է համարվում *ամբողջականության և պետական ինքնիշխանության պահպանումը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության զարգացման պայմանների ապահովումը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ գլոբալացվող աշխարհի և համաշխարհային տեղեկատվական հասարակության ձևավորման նոր պայմաններում:*

Ցավոք, այսօր նոր աշխարհակարգում առաջատար դիրքեր գրավելու

մասին խոսելու հնարավորություն դեռ չունենք: Այսպես, մասնավորապես, ՌԵՆԴ փորձագետները կարծում են, թե առաջիկա 10-20 տարիներին Ռուսաստանից կարող է ծագել աշխարհի անվտանգությանն սպառնացող առավել լուրջ վտանգներից մեկը՝ կապված պետականության դեգրադացման և դրա՝ «չկայացած պետության» վերածման հետ:

Փորձագետները կարծում են, թե Ռուսաստանի տնտեսական, քաղաքական և սոցիալական զարգացումը ճիշտ այնպես, ինչպես և նրա ինտեգրումը համաշխարհային տեղեկատվական հարթությանը, խիստ կախված կլինի տեղեկատվական հեղափոխությանը նրա մասնակցության աստիճանից: Նրանց կարծիքով՝ Ռուսաստանի ղեկավարությունն այսօր ջանում է առաջ մղել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը երկրում, բայց նրա ռեսուրսները սահմանափակ են: Բացի այդ, գոյություն ունի նաև զգալի հակազդեցություն տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման նկատմամբ՝ պայմանավորված քաղաքական նպատակներով և ազգային տեղեկատվական տարածքի անվտանգության երկյուղներով:

Նշվում է նաև, որ չնայած Ռուսաստանում ընդունված է հատուկ դաշնային «Էլեկտրոնային Ռուսաստան» ծրագիրը, սակայն դրա իրականացման տեմպերը թույլ չեն տալիս խոսել այն մասին, որ Ռուսաստանը մնացյալ աշխարհից բաժանող տարբերությունը կհաղթահարվի առաջիկա տասնամյակում:

Այսօր Ռուսաստանը բավական հեռու է ոչ միայն Արևմուտքի առաջատար, այլև Ասիայի բազմաթիվ երկրներից: Այսպես, ՌԵՆԴ շատ հետազոտություններում Ռուսաստանն անգամ «նշանակալի» խաղացող չի համարվել բարձրտեխնոլոգիական արտադրանքի և ծառայությունների մշակման շուկայում:

Ավելին, 2001թ. ըստ մի շարք փորձագիտական գնահատականների, Ռուսաստանը 60 երկրների շարքում տեղակայվել է 42-րդ հորիզոնականում՝ ըստ այդ երկրների էլեկտրոնային կոմերցիայի զարգացման գծով ունեցած պատրաստության գնահատման: Նրանից վեր գտնվող հորիզոնականներ են զբաղեցրել Պերուն և Եգիպտոսը:

Ռուսաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և ներդրման երկարաժամկետ հնարավորությունները, ՌԵՆԴ փորձագետների գնահատականներով, նույնպես բավական խնդրահարույց են: Վերջին տարիներին Ռուսաստանում կտրուկ նվազել է բարձրորակ մասնագետների թիվը տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում: Մասնագետների մի մեծ թվաքանակ հեռացել է Արևմուտք: Այս առնչությամբ բավական սուր է դարձել «ուղեղների արտահոսքի» խնդիրը: XX դարի 80-ական թթ. կեսերից սկսած՝ մշտապես լրիվ չափով չեն ֆինանսավորվում հիմնարար հետազոտությունները:

րը: Այսօր Ռուսաստանը գործնականում պաշար չունի բարձրտեխնոլոգիական արդյունաբերության ապագա զարգացման համար և հարկադրված է ներմուծել տեղեկատվական տեխնոլոգիաներ:

Շարունակվող հակամարտությունները Հյուսիսային Կովկասում, քաղաքական իրավիճակի անկայունությունը Ռուսաստանում, պետպաշտոնյաների կոռումպացվածության բարձր աստիճանը, Ռուսաստանի տնտեսության մեջ ստվերային հատվածի մեծ բաժինը և քրեականացվածության զգալի մակարդակը հարկադրում են խոսել ռուսական պետականության դեգրադացման և չկայացած երկրների շարք «գլորվելու» հնարավորության մասին:

Նման գնահատականները ենթադրում են, որ Ռուսաստանը վտանգում է հայտնվել «թվային անդունդի» հատակում աֆրիկյան երկրների մեծամասնության և Լատինական Ամերիկայի երկրների հետ միասին: Միևնույն ժամանակ, Ռուսաստանի այս դրությունն այսօր լրջորեն մտահոգում է արևմտյան փորձագետներին: Նրանց կարծիքով՝ այնպիսի մեծ երկիր, ինչպիսին Ռուսաստանն է, որը միջուկային զենք ունի, գտնվելով «թվային անդունդի» հատակում, առավել լուրջ սպառնալիքներից մեկը կներկայացնի աշխարհի կայունությանն առաջիկա 10-20 տարիներին:

Ցավոք, հարկադրված ենք համաձայնել ամերիկյան փորձագետների շատ եզրակացությունների հետ: Սակայն, այնուամենայնիվ, դեռ կարելի է օգտվել տեխնոլոգիական հեղափոխության նոր հնարավորությունից՝ Ռուսաստանը ձգձգված ճգնաժամից դուրս բերելու նպատակով:

Վերջին ժամանակներս արտասահմանյան մի շարք վերլուծական կենտրոններ համաշխարհային տնտեսության նորարարական ճյուղերի զարգացման դինամիկայի ուսումնասիրման հետազոտություններ են անցկացնում՝ նպատակ ունենալով կանխատեսել և վերհանել զարգացման այն ուղղությունները, որոնք մոտ ապագայում ի վիճակի են հանգեցնել համաշխարհային տնտեսության պայթյունային աճի, ինչը կնպաստի երկարատև ճգնաժամից նրա դուրս գալուն:

Այս առնչությամբ տեղին է նշել, որ փորձագետներից ոմանք, որ զբաղվում են 2004թ. Համաշխարհային տնտեսական ֆորումի վերլուծական նյութերով, նշում են, որ վերջին տարիները բնութագրվում են նորարարությունների ոլորտի խոր լճացման երևույթներով: Մեծ հույսեր էին կապվում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և ամենուր տեղադրման հետ, սակայն տնտեսության բարձրտեխնոլոգիական հատվածի տապալումը ԱՄՆ-ում 1990-ական թթ. վերջին հիմնականում չիրականացրեց այդ ակնկալիքները: Փորձագետները նշում էին, որ տեղեկատվական տեխնոլոգիաներն այնքան ինտենսիվորեն էին ինտեգրվում ժամանակակից տնտեսության մեջ, որ այսօր արդեն իմաստ չունի խոսել դրանց օգտագործման մարքեթինգային

առավելությունների մասին: Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառը շարունակում է զարգանալ, սակայն հիմնական ջանքերը կկենտրոնանան նեղ մասնագիտացված բնագավառներում. *տեղեկատվական համակարգերի պաշտպանվածության և անվտանգության բարձրացում, պայքար չթույլատրված փոստային առաքումների (սպամի) դեմ, տեղեկատվության միջոցների և մեթոդների զարգացում և այլն*: Սակայն որակապես նոր ձեռքբերումներ, որոնք համարժեք կլինեն Ինտերնետի կամ անհատական համակարգիչների ստեղծմանը, այս ոլորտում արդեն չեն սպասվում:

Տեղեկատվական տեխնոլոգիաներին տրված այս գնահատականի կողքին՝ փորձագետներն ընդգծում են, որ նորարարական ուղղությունների բազմության մեջ այսօր առավել հեռանկարային են չորսը. *կենսատեխնոլոգիաները, զանգվածային բաշխիչ ցանցային հաշվարկները, նանոտեխնոլոգիաները և էներգետիկ տեխնոլոգիաները*: Գիտության այս ճյուղերից յուրաքանչյուրը, մասնագետների կարծիքով, այսօր հասել է զարգացման և գիտելիքների կուտակման այնպիսի մակարդակի, որ դրանց զարգացման մեջ որակական թռիչքը և սկզբունքորեն նոր արդյունքների ստացումը կանխատեսվում են արդեն առաջիկա տարիներին:

Թվարկված բոլոր հեռանկարային ճյուղերում Ռուսաստանն այսօր զգալի պոտենցիալ ունի, որը կարող է օգտագործվել երկրի տնտեսական զարգացման առաջադրված նպատակներին հասնելու համար:

Ազգային տեղեկատվական ռազմավարության իրագործման պատմական շրջանը նպատակահարմար է սահմանել 15-20 տարի: Այս տևողությունը թույլ է տալիս հաշվի առնել հասարակության սոցիալական, մշակութային, տեխնոլոգիական և ֆինանսատնտեսական գործընթացների դինամիկան:

Հենվելով ֆուտուրիստական մի շարք կանխատեսումների (այդ թվում և վերոբերյալ ՌԵՆԴ փորձագետների կանխատեսման) վրա՝ դիտարկվող փուլում իրավիճակը Ռուսաստանում և աշխարհում կրնա զարգանալ փոփոխություններով:

Քաղաքական ոլորտում.

1. Կշարունակվի անցումը հասարակական-քաղաքական գործունեությունից գլոբալ ցանց: Ի հայտ կգան նոր ցանցային քաղաքական կազմավորումներ, անգամ կուսակցություններ: Հնարավոր է՝ ի հայտ կգան վերազգային քաղաքական միավորումներ ցանցի հիման վրա, որոնք ազդեցություն կգործեն միանգամից մի քանի պետական կառույցների վրա: Հիմնական քաղաքական ուժ է դառնում ոչ թե հիերարխիական կուսակցությունը, այլ ոչ պետական ցանցային հասարակական միավորումը:

2. Միջանձնային հարաբերությունների ավտոմատացումը, հորիզոնական կապերի շարունակվող աճն ու զարգացումը էլ ավելի մեծ չափով են բարձրացնում «հանրային կարծիքի» պոտենցիալը՝ որպես պետապարատի գործունեության արդյունավետության չափորոշիչ:
3. Կշարունակվեն զանգվածային էլեկտրոնային լրատվամիջոցների աճն ու զարգացումը: Քաղաքական քարոզչությունները ձեռք կբերեն էլ ավելի մեծ վիրտուալություն, ընտրություններում կհաղթանակի ոչ թե անհատը, այլ քաղաքական գործչի՝ ՋԼՄ ձևավորած վիրտուալ կերպարը:
4. Կառավարությանն ուղղված ընդդիմադիր գործունեությունը նույնպես կկենտրոնացվի ինտերնետի օգտագործման վրա: Կարևորագույն վերազգային ընդդիմադիր ուժ կմնա հակազդեբալիզմի շարժումը:
5. Կշարունակվի երկրի պետական և ֆինանսատնտեսական կառավարման ճգնաժամի խորացումը՝ հենված ինդուստրիալ դարաշրջանի սկզբունքների և մոտեցումների վրա, որը չի ընդունում տեղեկատվական դարաշրջանի նորամուծությունները:
6. Երկրի տարածաշրջանների միջև «թվային անհավասարության», իսկ առանձին դեպքերում՝ դրա խորացման պահպանումը:

Սոցիալական ոլորտում.

1. Կպահպանվի սոցիալական անհավասարությունը հասարակության մեջ: Ընդ որում՝ ինքը՝ հասարակությունը, խոր կլաստերային (դասային) փոխակերպում կունենա. կանհետանան որոշ նախկին մասնագիտություններ և կառաջանան նորերը, համապատասխանաբար նաև՝ նոր արհմիություններ և միություններ: Առավել զանգվածային կլինի թվային առումով վարձու բանվորների և կորպորատիվ ծառայողների կլաստերը՝ միջավայր, որն առավել ընկալունակ է հասարակության փոփոխությունների նկատմամբ:
2. Կշարունակվի երկրի բնակչության նորարարական պոտենցիալի նվազումը՝ ի հետևանք Ռուսաստանի բնակչության ժողովրդագրական քարտեզի փոփոխության, որն առաջ է գալիս բնակչության ծերացման, ծնելիության նվազման, կյանքի տևողության կրճատման, հիմնականում ցածր կենսամակարդակի, այսպես կոչված՝ երկրի դոտացիոն տարածաշրջանների, Միջին Ասիայի երկրներից և Չինաստանից միգրացիոն չվերահսկվող գործընթացների պառճառով:

Ֆինանսատնտեսական ոլորտում.

1. Կշարունակվի տնտեսության սրընթաց վերափոխումը «ցանցային առևտրի» նոր մարքեթինգային հայեցակարգի ազդեցության տակ:

2. Առանցքային դեր կգրավեն վճարային էլեկտրոնային միջոցները ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց մակարդակով:
3. Կուժեղանա ճնշումը Ռուսաստանի վրա միջազգային ասպարեզում միջազգային ֆինանսատնտեսական կառույցների և վերազգային կորպորացիաների կողմից, ԱՀԿ մտնելուց հետո:
4. Տեղի կունենա օտարերկրյա կապիտալի ամրապնդման, իսկ առանձին դեպքերում՝ նաև գերիշխանության հաստատում ռուսական տեղեկատվական տեխնոլոգիաների ճյուղում:

Արդյունաբերական ոլորտում.

1. Կապահպանվի Ռուսաստանի տարածքում հավաքման արտադրության զարգացմանն ուղղված կողմնորոշումը արտասահմանյան ընկերությունների գործարաններում:
2. Տեղեկատվական հասարակության կայացման համար առանցքային բարձրտեխնոլոգիական արդյունաբերական ճյուղերը Ռուսաստանում տեսանելի ապագայում չեն վերականգնվի: Կապահպանվի կախվածությունը արտասահմանյան սարքավորումների և տեխնոլոգիաների մատակարարումից:
3. Երկրում տեղեկատվական ենթակառուցվածքի զարգացման ընդհանուր ոչ բարձր մակարդակը և նրա անհավասարաչափ զարգացումն ըստ տարածաշրջանների:

Գիտության և կրթության ոլորտում.

1. Տեղեկատվական հաղորդակցության զարգացման գործընթացների նկատմամբ վերահսկողության կորուստ. սեփական ՏՏ արդյունաբերության նշանակալի մրցունակ ճյուղերի բացակայություն և դրանց վերարտադրության անհնարինություն հայրենական հիմքի վրա, 15-ամյա ձախողում հիմնարար գիտությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում, կողմնորոշում դեպի արտասահմանյան նորմատիվ փաստաթղթերն ու ստանդարտները ՏՏ բնագավառում:
2. Կիտրանա բարձրագույն և միջնակարգ կրթության համակարգի կողմնորոշվածությունը դեպի հասարակության առավել նշանակալի պահանջմունքների բավարարումը մասնագետների միջին և ստորին օղակների պատրաստման գործում: Արդյունաբերական և ֆինանսական ընկերությունների դեկավարների բարձրագույն օղակը պատրաստություն կստանա արտասահմանում:

Անվտանգության ոլորտում.

1. Կշարունակվի ազգային և արտասահմանյան հանցավոր աշխարհի սերտաճումը վերազգային հանցավոր սինդիկատներին:
2. Հանցավոր աշխարհի շահերի ոլորտում կհայտնվի նոր «թվային» էկոնոմիկան: Կմեծանա տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կատարվող և տեղեկատվական ենթակառուցվածքի դեմ ուղղված հակաօրինական գործողությունների թիվը:
3. Ծայրահեղական գործողությունները կիրեն-ահաբեկչական բնույթ կստանան: Հանցավոր հաքերային ընկերակցությունները կմիավորվեն ահաբեկչական կազմակերպությունների հետ: Հնարավոր է՝ ի հայտ գալավ քողարկված հանցավոր ցանցային հանրակցություն՝ «Ալ-Կաիդայի» տիպի, բայց կողմնորոշված գլոբալ ցանցում ծայրահեղական գործունեություն վարելուն:

Այսպիսով, առաջիկա տասը տարին սկզբունքային նորություններ կբերի հասարակության մեջ, որոնք արմատական ազդեցություն կունենան ինչպես միջանձնային, այնպես էլ պետական հարաբերությունների վրա:

Ընդ որում՝ հաշվի առնելով Ռուսաստանի ընթացիկ իրավիճակը և հնարավորությունները, *կարևորագույնը կլինի ոչ այնքան նոր հասարակությունում առաջատար դիրքի հասնելու խնդիրը, որքան «ստատուս-քվոյի» պահպանումը սկզբունքորեն նոր պայմաններում:*

8. Ազգային տեղեկատվական ռազմավարության իրագործման ռեսուրսները

Հարկ է ընդունել, որ ներկա պահի դրությամբ Ռուսաստանը ոչ լրիվ չափով է տնօրինում առաջադրված նպատակին հասնելուն անհրաժեշտ ռեսուրսներին:

Նախ՝ Ռուսաստանում չկա պետական կառավարման ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների հաշվառման հետ կապված հարցերի լուրջ փիլիսոփայական մոտեցում:

Առկա ֆինանսական ռեսուրսները մասամբ միայն թույլ կտան հաղթահարել հետամնացությունը տեղեկատվական հասարակության ենթակառուցվածքում, բայց տեղի ունեցող փոփոխությունների ըմբռնման հարցում արագ արդյունք չեն տա:

9. Ռազմավարության խնդիրները

Ռազմավարության իրագործման ընթացքում լուծվող խնդիրները կարող են լինել.

Պետական-քաղաքական ոլորտում.

1. Պետական կառավարման համակարգի կատարելագործումը: Պետական մակարդակով որոշումների ընդունման մեթոդների և ալգորիթմների մշակում ցանցային կառույցի հիման վրա: Անկախ վերլուծական կազմակերպությունների, կենտրոնների, հիմնադրամների համակարգի ձևավորում, որոնց գործունեության արդյունքները պետք է կիրառվեն պետական մակարդակով որոշումներ մշակելիս:
2. Հիերարխիական սկզբունքով կառուցված պետական ապարատի փոխակերպում՝ ցանցային, վերազգային կորպորացիաների աշխատափորձի կիրառմամբ: Առաջնորդող պետք է լինի «Տեղեկատվական դարաշրջանի պետությունը մեգակորպորացիա է» սկզբունքը:
3. Առկա քաղաքական և կուսակցական համակարգի փոխակերպում՝ հաշվի առնելով ոչ պետական հասարակական միավորումների գերակայությունը և հասարակությունում պետության կողմից իրականացվող կառավարման վրա «հանրային կարծիքի» ներգործությունը:

Սոցիալական ոլորտում.

1. Կենսակերպի հաջող մոդելի մոդիֆիկացիա:
2. ՏՏ ձեռքբերումների օգտագործման հնարավորության ընձեռում երկրի բնակչության բարեկեցության բարձրացման նպատակով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում մանր ձեռնարկատիրության զարգացման ճանապարհով:
3. ՏՏ ճյուղերի ձեռքբերումների օգտագործում բնակչության սոցիալական սպասարկման կատարելագործման համար:
4. Արտասահմանում գտնվող հայրենակիցների հետ կապերի զարգացում:

Ֆինանսատնտեսական ոլորտում.

1. Գործարար գործարքների արդյունավետության բարձրացում:
2. Առկա համակարգերի փոխարինում ցանցային համակարգերով:
3. Շուկայական on-line առևտրի զարգացում:
4. Կազմակերպությունների հորիզոնական վերակազմակերպում:
5. Մանր և միջին բիզնեսի զարգացում:

Արդյունաբերական ոլորտում.

1. Բարձրարժեք կառուցվածքների (ենթակառուցվածքային բաղադրիչներ) թարմացում:
2. Առկա համակարգերի փոխարինում ցանցային համակարգերով:
3. Արդյունաբերական արտադրության հորիզոնական վերակազմակերպում:
4. Մասնակցություն SS ոլորտում հիմնարար ստանդարտների մշակմանը:

Գիտության և կրթության ոլորտում.

1. Գործունեության նոր տեսակների զարգացում, որոնք ձևավորում են հասարակության միջին դասը:
2. Կրթության համակարգը կողմնորոշվում է դեպի արդյունաբերության SS ճյուղերի ձեռքբերումների օգտագործումը:
3. Հասարակությունում տեղի ունեցող փոփոխությունները համարժեք ընկալող անձնակազմի պատրաստման կազմակերպում:

Անվտանգության ոլորտում.

1. Փոխակերպում գիտական ուղղությամբ՝ կապված ազգային անվտանգության ապահովման հետ, հաշվի առնելով հասարակությունում կատարված փոփոխությունները: Դա առաջին հերթին վերաբերում է անվտանգության սպառնալիքների առկա և հեռանկարային մոդելին: Անվտանգության բացարձակ համակարգի ստեղծման անհնարինության ըմբռնում և կենտրոնացում ռիսկերի կառավարման վրա:
2. Ուժային կառույցների փոխակերպում, դրանց կազմակերպման ցանցային սկզբունքի ներդրում:
3. «Ուժային գերատեսչությունը կորպորացիա է» սկզբունքի իրագործում:
4. Տեղեկատվական ենթակառուցվածքի անվտանգության ապահովում:

10. Ազգային տեղեկատվական ռազմավարության սկզբունքները

Կարևորագույն սկզբունքները, որոնք թույլ կտան լուծել առաջադրված խնդիրները և հասնել ռազմավարության նպատակին նախանշված պայմաններում և որոշակի ռեսուրսների առկայության պարագայում, կարող են լինել հետևյալները:

Ռեսուրսների կենտրոնացման սկզբունքը. Հաշվի առնելով ռեսուրսների սահմանափակությունը՝ անհրաժեշտ է հրաժարվել միջոցների բաշխման ավանդական մոդելներից և առավելությունը տալ մարդկային բոլոր ռեսուրսների բաշխմանը, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր արդյունաբերության ֆինանսավորմանը՝ SS ոլորտի ենթակառուցվածքի զարգացման նպատակով:

Մասնավոր ներդրումների նախաձեռնման սկզբունքը. Անհրաժեշտ է խթանել և SS-ի հետ կապ ունեցող ներդրումների հոսքն ապահովել մասնավոր հատվածից՝ հարկային և այլ բարեփոխումների և խթանիչ միջոցառումների իրականացման միջոցով:

Նոր մոդելի հաջողության սկզբունքը, որն օգտագործում է եզակի առանձնահատկություններն ու հատուկ գիտելիքների բնագավառը. SS հաջող մոդելի ցուցադրումը ապագայում Ռուսաստանի մրցունակության կարևոր տարր կլինի:

«Պետությունը մեզակորպորացիա է» սկզբունքը. Կորպորատիվ, ապրանքների շարժի, շուկաների նվաճման և պահպանման փորձի օգտագործում՝ որպես պետական կառավարման մոդել ցանցային հասարակությունում:

Ճշգրիտ գնահատականի և տեղեկատվական ապահովման սկզբունքը. Արդյունավետ ռազմավարություն ստեղծելու և այն գնահատելու համար անհրաժեշտ է ճշգրիտ տեղեկատվություն պետության և հասարակության զարգացման ընթացիկ իրավիճակի մասին:

Եզրակացություն

Վերոշարադրյալը թույլ է տալիս եզրակացություն անել այն մասին, որ այսօր հասարակությունում տեղի ունեցող փոփոխությունները բավական լուրջ են, դրանք հզոր փոխակերպիչ պոտենցիալ ունեն, որն ի վիճակի է էապես վերափոխել նոր աշխարհի լանդշաֆտը. փոփոխությունները կառնչվեն մարդու կյանքի և գործունեության բացառապես բոլոր ոլորտներին:

Այսօր անհրաժեշտ է ուշադիր ուսումնասիրել այդ փոփոխությունները և սեփական կարծիք մշակել հասարակության համար դրա օգտակարության մասին: Չկա ավելի վատ բան, քան առաջատարների հետևից վազելը և նրանց գործողությունները կուրորեն պատճենելը, ընդ որում՝ հաշվի չառնելով ազգային առանձնահատկությունը: Մասնավորապես որ մենք ունենք «նմանակող» այդպիսի մի շարք նախագծերի արդյունքները. դա և՛ մեր ԷՀՄ միասնական շարքում IBM հաշվիչ համալիրների պատճենման փորձերն են, և՛ սեփական տիեզերական մաքոքի ստեղծման փորձերը (ի դեպ, ամերիկացիները ոչ հաճույքով, բայց հարկադրված են փաստել մեր որոշման ճշմարտացիությունը հրթիռակիրների օգտագործման մասին): Ինքը՝ «դեմոկրատիայի» նախագիծը նույնպես, որ պատճենել էինք «վերակառուցման» ընթացքում, ցույց տվեց իր չկայացածությունը:

Այսօր որևէ հիմք չկա վերստին կրկնելու պատմական սխալները: Հարկ չկա, որ մենք ստեղծենք գլոբալ տեղեկատվական հասարակություն մտնելու ռազմավարություններ, մենք պետք է ստեղծենք սեփական Ազգային տեղեկատվական ռազմավարություն, որում հստակ սահմանենք գլոբալ հասարակություն մտնելու Ռուսաստանին շահավետ պարամետրերը:

Գլոբալացման պայմաններում անհրաժեշտ է Ռուսաստանի Դաշնության ազգային անվտանգության ապահովման համակարգի արագ և արմատական բարեփոխում: Նոր համակարգը պետք է ընդունակ լինի համարժեք պատասխանել նոր ժամանակի սպառնալիքներին: Ավելին, այսօր պետության ազգային անվտանգության ապահովման հիմքում պետք է դրված լինի նրա տեղեկատվական քաղաքականությունը, որը պետք է սահմանի ազգային շահերն ու գերակայությունները տեղեկատվական ոլորտում: Երկրի արտաքին և ներքին քաղաքականությունը պետք է կառուցվի՝ հենվելով պետության տեղեկատվական քաղաքականության վրա: *Տեղեկատվական գերազանցության հասնելն ու այն պահպանելը, ինչը թույլ կտա իրավիճակի տերը լինել, պետք է դառնա ՌԴ բոլոր պետական կառույցների միջազգային գործունեության հիմքը:*

Ռուսական հասարակության նոր քաղաքական և պետական համակարգի կառուցման մեջ տեղեկատվական դարաշրջանում հատուկ տեղ պետք է զբաղեցնեն այն հարցերը, որոնք կապված են փոխգործակցության ստանդարտացման հետ: Ձգտելով պահպանել ազգային ինքնությունն ու ռուս ժողովրդի մենթալ առանձնահատկությունները, որ արտացոլված են գիտական և ինժեներային կադրերի պատրաստման համակարգում, հարկ չկա միանշանակ որպես պետական ընկալել այն ստանդարտները, որոնք ստեղծել է խնդիրների լուծման այլ մոտեցումներ և արժեքների այլ ընկալում ունեցող մեկ այլ ժողովուրդ:

Ընդհանուր առմամբ, հարկ է նշել, որ հիմնականում գլոբալացման գործընթացներն օբյեկտիվ են և առաջ են եկել գիտատեխնիկական առաջընթացի արդյունքում: Բազում ձեռքբերումներից այսօր պարզապես արդեն անհնար է հրաժարվել: Հարկ է ընդունել, որ ԱՄՆ-ը և մյուս զարգացած երկրներն առաջիններից էին, որ ըմբռնեցին այն առավելությունները, որոնք բերում է գլոբալացումը, և փորձեցին կառուցել նոր գլոբալ հասարակության մոդելը սեփական, շատ բանով եսասիրական շահերից ելնելով: Սակայն այդ գաղափարի խոցելիությունն ակնհայտ է. *կայուն գլոբալ հասարակություն կարող է կառուցվել միայն ցանցային, այլ ոչ թե հիերարխիական կառույցի հիման վրա, որտեղ յուրաքանչյուր հանգույցը հավասարազոր կլինի իր հարաբերություններում:* Իրաքի դեմ ագրեսիան սկսելուց հետո անցած ժամանակի ընթացքում ԱՄՆ-ը արդեն վճարել է իր հավակնությունների համար՝ իր դեմ կրկին հանելով մարդկության ավելի քան կեսին: Այս պայմաններում կարևորագույն խնդիրներից մեկն է դառնում գլոբալ հասարակության հետագա դրական զարգացման նոր գաղափարների մշակումը, որում Ռուսաստանը կարող է և պետք է միավորիչ դեր խաղալ:

Հոկտեմբեր, 2008թ.

РОССИЯ В ГЛОБАЛЬНОМ ИНФОРМАЦИОННОМ ОБЩЕСТВЕ: УГРОЗЫ, РИСКИ И ВОЗМОЖНЫЕ ПУТИ ИХ НЕЙТРАЛИЗАЦИИ

Сергей Гриняев

Резюме

Не каждому поколению удастся встретить не только новый век, но и новое тысячелетие. Нам же посчастливилось наблюдать и смену формаций современного общества. Мы стали свидетелями процессов трансформации, приведших постиндустриальное общество последней трети XX века к обществу информационному начала века XXI.

Происходящие сегодня изменения в обществе весьма серьезны, они несут в себе мощный трансформационный потенциал, способный существенно преобразить ландшафт нового мира: изменения коснутся всех без исключения сфер жизни и деятельности человека.

Во многом процессы глобализации объективны и вызваны уровнем научно-технического прогресса, отказаться от многих достижений сегодня уже просто невозможно. Следует признать, что США и другие развитые страны одними из первых осознали преимущества, которые дает глобализация, и попытались выстроить модель нового глобального общества под собственные, во многом эгоистические интересы. Однако уязвимость этой идеи очевидна – *устойчивое глобальное общество может быть построено только на основе сетевой, а не иерархической структуры, в которой каждый узел будет равноправен в своих отношениях*. За время, истекшее с начала агрессии против Ирака, США уже заплатились за свои амбиции, восстановив против себя более половины человечества. В этих условиях одной из насущных проблем становится выработка новых идей дальнейшего позитивного развития глобального общества, и в этом вопросе Россия может и должна сыграть свою объединительную роль.

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՐԵՆԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Կարեն Բարաջանյան

Գիտելիքը ուժ է, սակայն ուժ է ոչ ամեն գիտելիք,
ուժ է միայն ճշմարիտ գիտելիքը, իսկ ճշմարիտ
գիտելիք հնարավոր է ստանալ միայն փորձով:
Ֆրենսիս Բեկոն

Պետությունների համար կրթությունը մշտապես ռազմավարական նշանակու-
թյան ոլորտ է հանդիսացել, որի նպատակաուղղված զարգացումը բարձրաց-
նում է երկրների գրավչությունը և օժտում մրցակցային առավելություններով:

Գիտելիքի կուտակումը յուրահատուկ ներդրման ձև է, որի արդյունքները
շատ հաճախ սպասվածից ավելին են լինում: Հետադիմացաբերական դարա-
շրջանում գիտելիքն ընկալվում է որպես ապրանք, որը շուկայում ունի իր հա-
մապատասխան գինը, և այդ ապրանքի որակից է կախված այսօրվա և վաղվա
պետությունների մրցունակությունը:

Հոդվածում ներկայացված է կրթության դերը պետության բրենդի ձևավոր-
ման խնդրում: Քննարկվում են այն հիմնական խնդիրները և բացթողումները,
որոնք առկա են մեր կրթական համակարգում: Միաժամանակ, փորձ է արվում
հիմնավորել Հայաստանում իրականացվող կրթական բարեփոխումների ան-
արդյունավետությունը, և առաջարկվում են էլքեր ստեղծված իրավիճակից
դուրս գալու համար:

Ժամանակակից աշխարհն առաջ է ընթանում նախադեպը չունեցող արագու-
թյամբ, որտեղ շրջապատող իրականությունը փոփոխվում է ժամ առ ժամ՝ իր
հետ վերափոխելով նախկին գիտելիքների շտեմարանները: Այս բնական
գործընթացով են պայմանավորված երկրների, ազգությունների, անհատների
թոփառային զարգացումները, որոնք իրենց հերթին առաջացնում են նոր հասա-
րակություններ, նոր տեխնոլոգիաներ, նոր վարչակարգեր և նոր մտածողու-
թյուն: Ահա այս նոր մտածողությունը մշտական պայքարի մեջ է հնի հետ: Նա-
խորդ սերունդների՝ երբեմն հնացած մտածողությունը հաճախ չի ընդունում
իր պարտությունը և չի ցանկանում զիջել դիրքերն այնքան ժամանակ, քանի
դեռ վերջնականապես չի գիտակցում սեփական մտքի անհամապատասխա-
նեցումն օբյեկտիվ իրականությանը: Շատ հաճախ այդ զգացողությունն էլ է

անզգայանում: Սոկրատեսն ասում էր, թե պատանիները պետք է սովորեն, մեծերը՝ իրենց վարժեցնեն բարի գործեր կատարելու, ծերերը՝ հեռանան ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական ամեն տեսակ գործերից և իրենց հայեցողությամբ ապրեն առանց որոշակի պարտականությունների [1, էջ 284]: Իհարկե, նման եզրահանգումներն անհատների մոտ երբեմն առաջ են բերում հուսահատության, սեփական ուժերի նկատմամբ անվստահության զգացումներ, սակայն աշխարհի փոփոխություններին ժամանակին արձագանքելը դարձել է օրվա հրամայական: Այս առիթով, կարծում ենք, տեղին է մեջբերել հայտնի փիլիսոփայական մի դատողություն, որի մասին ժամանակին բարձրաձայնել են այնպիսի մտածողներ, ինչպիսիք են Կ.Պոպերը, Ա.Բերդյաևը, Կ.Յասպերսը, Գ.Նժդեհը: Խոսքը վերաբերում է «Որդիների պայքարը հայրերի դեմ» դրույթին, որն իր կենսունակությամբ կարող է ուսուցողական լինել դեռ բազում սերունդների համար: Այս պայքարը մշտական է, այն չունի կյանքի պարբերաշրջան, այն անդադար մարտնչում է նորը բացահայտելու անսպառ ցանկությամբ: Սա նման է Հեգելի դիալեկտիկային, որը բացատրում է շարժման երևույթը, որտեղ առանց հակադրության, առանց բացասման բացասումի և պայքարի օրենքի շարժում տեղի չի ունենում: Սակայն Ժան-ժակ Ռուսոն առաջ է քաշում ամբողջովին իրարամերժ դրույթ, որտեղ կոչ է արվում վերադառնալ բնությանը, քանի որ գիտության զարգացումը կործանարար է մարդկության համար, այն դժբախտացնում է անհատին՝ թելադրելով կեղծ արժեքներ, որով էլ բանական մարդը հեռանում է իր նախնական բնությունից: Ռուսոն մարդու երջանկությունը տեսնում էր բնության սկզբնաղբյուրում, որն այսօր, կարելի է փաստել, այլևս գոյություն չունի իր նախնական ձևով, կամ էլ գոյություն ունի միայն լուսանկարների, հիշողությունների և գրերի տեսքով: Այն անճանաչության աստիճան փոփոխման է ենթարկվել մարդու կողմից: Ի հակադրություն Ռուսոյի գաղափարների, Կանտն անհատի և հասարակության երջանկությունը, որն այսօր շատերը շփոթում են կյանքի որակի հետ, տեսնում էր գիտության առաջընթացի միջոցով:

Նմանօրինակ գաղափարական հակամարտություններն ավելի խորաթափանց ուսումնասիրելու արդյունքում հնարավոր կլինի մոտենալ այն հարաբերական ճշմարտությանը, որն առկա է մեր օրերում: Ըստ Հեգելի, զարգացման նպատակն ազատության ընդլայնումն է: Ի՞նչ անել, շարժվել առաջընթաց, թե՛ հետընթաց զարգացման ճանապարհով: Իսկ ի՞նչ ասել է հետընթաց զարգացում: Այստեղ մենք կարող ենք հասկանալ գիտակցված ավանդապաշտություն, որը ներառում է ազգային մշակույթը որպես մարդկային մտքի բարձրակետ կամ նախնիների գիտելիքների և արվեստների նկատմամբ մեծ հետաքրքրասիրություն: Այսինքն՝ հետընթաց զարգացումը ենթադրում է հետ նայելով զարգանալ կամ արժևորելով անցյալը՝ գնալ դեպի ապագա: Իսկ

երկրորդի դեպքում զարգացումը տեղի է ունենում՝ հաշվի չառնելով անցյալը, այն նմանվում է ծաղրածուի նմանակումների: Այս պարագայում շատ հաճախ արժեքները ներկրվում են առանց տեղայնացման, և վիրահատությունը տեղի է ունենում՝ հաշվի չառնելով բժշկական փոխպատվաստման առանձնահատկությունները: Չէ՞ որ, նախքան օտար մարմնի պատվաստումը, հարկավոր է հաշվի առնել մի շարք գործոններ: Օրինակ՝ արյունատուի արյան խումբը, հյուսվածքահամատեղելիության ամբողջությունը և այլն:

Մեզանում այսօր տեղի է ունենում ճիշտ հակառակ գործընթացը: Մենք ներկրում ենք արժեքներ՝ առանց ուսումնասիրելու դրանց բաղադրությունը, ծագումը, օգտագործման եղանակը, և արդյունքում ստացվում է այն, որ մեր հանրապետության անցման շրջանն այդպես էլ չի անցնում, այլ հակառակը, ավելի խորն ենք գլորվում դեպի անհայտություն: Դժբախտաբար, մենք Սելինջերի «Անդունդի եզրում» էլ չենք գտնվում, որտեղ դեռ հնարավոր է կանգ առնել նախքան գլորվելը:

Այսօր վիճակագիրները փաստում են, որ ներմուծման ծավալները եռակի գերազանցում են արտահանման ծավալները, այսինքն՝ առևտրային հաշվեկշիռը բացասական է, սակայն դեռ ոչ ոք լրջորեն չի բարձրաձայնել արժեհամակարգերի բացասական հաշվեկշռի մասին: Ի՞նչ արժեքներ և մտածողություն ենք մենք ներկրում և արտահանում մեր երկրի սահմաններից այն կողմ, ովքե՞ր են մեր արժեքների սպառողները, ինչպե՞ս և հատկապես ե՞րբ պետք է ներկայացնենք այդ արժեքները միջազգային հանրությանը: Այս հարցերի շարանը, թերևս, մտահոգում է միայն անհատ մտածողներին, այն իրականում դեռ չի դարձել համազգային գաղափար, ծրագիր: Միայն օտար արժեքներ ներկրող ազգությունները դատապարտված են աստիճանական ոչնչացման, իսկ մեզ նման, այսպես կոչված՝ «երրորդ աշխարհի» երկրները՝ ինչպես Արևմուտքում ընդունված է ասել, մշտապես գոյություն են ունեցել «առաջին աշխարհի» երկրների հարմարավետության համար: Բայց ո՞վ է այդ շերտավորումը, բևեռվածությունը մտցնում ազգերի մեջ: Ումանք կարծում են, թե գերտերությունները, սակայն իրականությունն այլ է: Ազգություններն իրենք են հաճախ իրենց թշվառության, աղքատության, մերժվածության պատճառը, որից էլ օգտվում են աշխարհիս ուժեղները: Այդ շահագործումը հետևանք է, բայց ոչ երբեք պատճառ: Եվ շատ հաճախ ազգերն իրենք իրենց մտքով տկարանում են կորչելու աստիճան:

Ցանցային դարաշրջանում այս խնդիրն ավելի սուր է դրված փոքր ազգերի առջև: Այսօրվա տնտեսությունում գիտելիքը նոր արժույթ է, իսկ տեխնոլոգիան՝ այն գործիքը, որն օգտագործվում է հիմնականում գիտելիքը փոխանցելու, տարածելու և կիրառելու նպատակով: Որպես հետևանք՝ տեխնոլոգիայի մատչելիությունը և հմտությունները դառնում են տնտեսության կենսու-

նակության բանալիները [2, էջ 94]:

Հետաքննարարական տնտեսություն կառուցելու համար հարկավոր է բարձր արժեքների մասին մտածող հասարակություն: Սակայն այստեղ հարկ չկա համարել, թե հասարակության բոլոր անդամները պետք է փայլատակեն իրենց մտավոր ունակություններով: Բնավ ոչ, խոսքը վերաբերում է անհրաժեշտ տոկոսային հարաբերությանը, որով պայմանավորված է ազգի, պետության թոնջքային, վերընթաց զարգացումը: Օրինակ՝ ԱՄՆ Սահմանադրության մեջ սեփական կրթական համակարգի ձևավորման իրավունք ունի յուրաքանչյուր նահանգ, միասնական պետական համակարգ որպես այդպիսին գոյություն չունի: Բացի այդ, նշվում է, որը կրթությունը ԱՄՆ տնտեսության հզորության, կյանքի որակի և միջազգային շուկայում վերջինիս մրցունակության հիմքն է հանդիսանում: ԱՄՆ-ում գոյություն ունի շուրջ 120 հազ. դպրոց, որից 27 հազարը մասնավոր են: Շրջանավարտների մոտ 30%-ն է մուտք գործում բարձրագույն ուսումնական հաստատություններ [3]: Սա հասարակության այն հատվածն է, որոնցով և պայմանավորված է երկրի առաջընթացը: Սրանք մարդկային ուղեղներ են, որոնք մրցունակ են ամբողջ աշխարհում: Բացառապես այս ուղեղներով են պայմանավորված երկրի հաջողությունները թե՛ արտաքին, թե՛ ներքին քաղաքականությունն իրականացնելիս: Սակայն չի կարելի անտեսել նաև այն 70%-ի կարողությունները, որոնք պակաս արժեքավոր չեն պետության համար: Չե՞ որ կառավարիչներից ոչ պակաս կարևոր է նաև կատարողների դերը, և այդ համամասնությունը որոշողը հիմնականում պետությունն է լինում: Այսպես, օրինակ՝ զարգացած արդյունաբերական երկրների կառավարությունները հստակ պատկերացնում են իրենց երկրի մասնագիտական պահանջարկը: Քաղաքակիրթ աշխարհը երբեք ծախս չի կատարում այն մասնագետների պատրաստման համար, որոնք իրեն հարկավոր չեն: «Ճապոնական հրաշքը» մեկնաբանող հանրահայտ մասնագետ Մ.Պորտերն իր «Ճապոնական տնտեսական մոդելը: Կարո՞ղ է արդյոք Ճապոնիան մրցակցել» աշխատության մեջ հստակ ներկայացնում է այն ահռելի դերը, որն ունեցել է կրթությունը երկիրը միջազգային շուկայում դիրքավորելու և պետության բրենդը ձևավորելու համար: Տեխնոլոգիայի դարաշրջանում բուհական համակարգը դառնում է արդյունաբերական և հետաքննարարական երկրների տնտեսական մրցակցության գլխավոր բաղադրիչներից մեկը: Բայց նման համակարգված մոտեցում ցուցաբերելու համար, նախևառաջ, հարկավոր է մշակել «պետության դիրքավորման ծրագիր», որից հետո միայն հնարավոր կլինի կողմնորոշվել մասնագետների պատրաստման հարցում:

Համալսարանները շատ արագ վեր են ածվում գիտահետազոտական կենտրոնների, որոնք նոր կազմակերպությունների ստեղծման գլխավոր շարժառիթն են հանդիսանում: Օրինակ՝ 1980-1997թթ. ժամանակահատվա-

ծում ընդամենը 3 ամերիկյան համալսարան՝ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտը, Սթենֆորդի և Կալիֆորնիայի համալսարանները, խթան են հանդիսացել 245 կազմակերպությունների ստեղծմանը [4, c. 198]: Վերջապես համալսարանները կարևոր օղակ են հանդիսանում ազգի գիտական ներուժի և մասնավոր հատվածի միջև: Կրթական համակարգը, որը հիմնված է մեխանիկական ուսուցման վրա, նոր պայմաններում այլևս չի կարող արդյունավետ գործել: Մեզ հարկավոր են ստեղծագործող մասնագետներ, ովքեր ունակ են առաջարկելու նոր լուծումներ, նոր մոտեցումներ, իսկ այդպիսի կադրեր Հայաստանի բուհերն առայժմ չեն կարող թողարկել: Ցավոք, այսօր մեր Ազգային ակադեմիայի բազմավաստակ տարեց գիտնականների գերակշռող հատվածն ինտերնետից և համակարգչից օգտվելու հմտություններին չի տիրապետում կամ դժվարանում է օգտագործել նոր ժամանակների այդ գործիքը, իսկ սա նշանակում է, որ պետության համար հույժ կարևոր հաստատության անդամները զրկված են ցանցային տնտեսությանն ինտեգրվելու հնարավորությունից: Օրինակ՝ 2000թ. հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ Ճապոնիայում ինտերնետից օգտվողների թիվը հասնում է 17 միլիոնի, իսկ ԱՄՆ-ում այդ թիվը գերազանցում է 92 միլիոնը: Անցած հարյուրամյակում Ճապոնիան գիտության բնագավառում ստացել է ընդամենը 5 Նոբելյան մրցանակ, ԱՄՆ-ը՝ 180 մրցանակ, Գերմանիան՝ 60, իսկ Դանիայի և Ավստրիայի պես ոչ մեծ երկրներն իրենց ակտիվում ունեն 9-ական մրցանակներ [4, c. 201]: Այս թվերը վկայում են նշված երկրների մտավոր ներուժի մասին, որի հենքը գիտահետազոտական ինստիտուտներում աշխատող մասնագետներն են: Իսկ մեզանում այն գիտնականները, որոնք համատեղում են գիտությունը մեկ այլ գործունեության հետ և բավականաչափ պրակտիկ փորձ, տարիների ընթացքում կուտակած ժամանակակից գիտելիքներ ունեն, շահագրգռված չեն մուտք գործել բուհական հաստատություններ, որովհետև բուհերում գործող կանոնադրությունների համաձայն՝ համատեղությունն առավել ցածր է վարձատրվում, որի արդյունքում էլ ուսանողները զրկվում են իրական, պրակտիկ գիտելիքներով օժտված մասնագետների հետ շփումից: Իսկ մեր երկրի սահմաններից այն կողմ պատկերն ամբողջովին այլ է: Օրինակ՝ «Lego», «Yahoo», «Taco Bell», «Kmart» կազմակերպությունների առաջատար մասնագետները մի շարք ամերիկյան հեղինակավոր բուհերի պրոֆեսորներ են, ովքեր իրենց տարիների կուտակած գիտելիքի պաշարը հաղորդում են ուսանողներին և մասնակիցն են դարձնում իրենց ամենօրյա գործունեությանը: Այս եղանակով ուսանողների մեջ եռաչափ պատկերացում է ձևավորվում ուսումնասիրվող առարկայի վերաբերյալ, և բուհն ավարտելուց հետո նրանք՝ որպես պատրաստի կադրեր, առանց ավելորդ բարդությունների, գտնում են այն ոլորտը, որտեղ պետք է ցուցադրեն իրենց մասնագիտական հմտությունները:

1. Ինչպե՞ս դասավանդել

Խոսել գիտելիքահենք տնտեսություն ունենալու մասին՝ անօգուտ է, քանի դեռ բուհերի ուսանողների միջև բացակայում է մրցակցության գաղափարը: Այսօր մեր բուհական համակարգում հիմնականում գործում է հետևյալ տրամաբանությունը՝ սովորել բարձրագույն բուհի որակավորման վկայական ստանալու համար՝ առանց խորամուխ լինելու այն բանի մեջ, որ այդ վկայականը համապատասխանի շրջանավարտի ստացած գիտելիքներին: Դա, թերևս, անարդյունավետ և ինքնանպատակ գործունեության տեսակ է, որն արդյունք է խորհրդային ժամանակներում ձևավորված և ժառանգված հայկական մտածողության: Դրա պատճառներից են նաև միջին մասնագիտական կրթահամալիրների, ուսումնարանների ոչ բավարար քանակը և անկախությունից ի վեր անձրևից հետո սնկի նման բազմացած, մեծ մասամբ անորակ մասնագետներ թողարկող մասնավոր բուհերը: Արդյունքում ստացվում է այնպես, որ բուհը տարեկան թողարկում է հինգ հազարից ավելի «մասնագետներ», որոնց 80%-ը հետագայում բոլորովին այլ գործունեությամբ է զբաղվում, որը որևիցե առնչություն չունի իրենց մասնագիտության հետ: Սա նշանակում է, որ մերօրյա բուհական համակարգը դադարել է արդյունավետ լինելուց, այն դուրս է եկել հիմնական մայրուղուց և այժմ մեծ արագությամբ սլանում է դեպի անհայտ, բայց ակնհայտորեն ոչ ճիշտ ուղղությամբ:

Նմանօրինակ հետընթաց զարգացումը ոչ մի ընդհանրություն չունի վերը շարադրված հետընթաց զարգացման դատողության հետ: Այն վտանգավոր զարգացում է, որը բազմապատկյի սկզբունքով տարածվում է տնտեսության բոլոր ճյուղերի վրա՝ վարակելով այդ ճյուղերի հիմնական հատվածները: Այս համաճարակի դեմ պայքարելու համար հարկավոր է կանխարգելիչ միջոցառումների համախումբ մշակել, որն ուղղակիորեն կնպաստի պետության բրենդի ձևավորմանը: Այստեղ կուզենայինք նշել, որ առանց որակյալ ուղեղների պետության բրենդի ստեղծման ծրագիրը նմանվում է չիրականացող երազանքի: Ինչպես ժամանակին այդ մասին բարձրաձայնում էր ուստոպիզմի վառ ներկայացուցիչ Թոմաս Մորը, որի երազած քաղաքն այդպես էլ չկառուցվեց:

Ուստոպիայի բացակայությունը հանգեցնում է ազգային արժեքների խեղմանը, այն ուղղություն է, որին քչերն են ձգտում, սակայն այդ երազանքի բացակայության հետ մեկտեղ վերանում է նաև այն քայլերի հերթականությունը, որն առհասարակ անհատին, հասարակությանը բարձրացնում և հասցնում է ցանկալի վիճակի:

Պետության բրենդ ստեղծելու ուղղությամբ կառավարության կողմից կատարվող բոլոր քայլերն ապարդյուն են, եթե կրթական համակարգն ի վիճակի չի լինելու ոտքի կանգնել: Այն մեր օրերում կքա՞ծ հիվանդի պես չի կարողանում արդյունավետ գործել, որովհետև էական համակարգային փոփոխու-

թյուններ տեղի չեն ունենում: Պետք է նշել, որ մեզանում կրթական համակարգը ճկուն չէ, իսկ սա նշանակում է, որ այն չի համապատասխանում ժամանակակից աշխատանքային շուկայի պահանջներին: Այն չի կարողանում ժամանակին արձագանքել արտաքին միջավայրի փոփոխություններին՝ դրանով կորցնելով իր դերն ու նշանակությունը: Եվ արդյունքում ստացվում է այն, որ որակյալ կադրերի պահանջ ունեցող երկիրն այդպես էլ չի կարողանում բավարարել իր աշխատանքային շուկայի պահանջները, իսկ այն բացառիկ անհատականությունները, որոնց, այնուամենայնիվ, հաջողվում է ինքնակրթության միջոցով դառնալ «իրական» մասնագետներ, շատ հաճախ պանդխտության ճանապարհն են ընտրում՝ ակնկալելով համարժեք վարձատրություն և կյանքի բարձր որակ: Ստեղծված իրավիճակում, բժշկական տերմինաբանությամբ ասած, հարկավոր է «վիրահատական միջամտություն»: Ներկայումս կատարվում են ոչ խորքային, կոսմետիկ բնույթի վերափոխումներ: Շատ հաճախ ձևը փոփոխվում է, սակայն բովանդակությունը մնում է նույնը: Այսպես, օրինակ՝ կրեդիտային համակարգի ներմուծումը ՀՀ կրթական համակարգ առաջ բերեց ձևի, բայց բնավ ոչ բովանդակության փոփոխություն: Մերօրյա ուսանողները և պրոֆեսորադասախոսական անձնակազմը չգիտի ինչպես օգտագործել այդ գործիքը: Եվրոպացիները փոխանցել են մեզ այն առանց վերջինիս օգտագործման եղանակը ներկայացնելու՝ ենթադրելով, որ մեզ մոտ կլինի այդ գործիքի օգտագործման վերաբերյալ ամբողջական պատկերացում, բայց մեզ մոտ ոչ միայն չկա այդ պատկերացումը, այլ նաև մենք չգիտենք, թե այն ինչպես պետք է տեղայնացնենք մեր բուհերում: Չէ՞ որ այդ համակարգը հարմարեցված է եվրոպական մտածողությանը: Արդյո՞ք մեր այսօրվա մտածողությունը և կրեդիտային համակարգը համապատասխանում են միմյանց: Մեր կարծիքով, նախքան համակարգեր ներկրելը հարկավոր է պարարտ հող մշակել: Հակառակ պարագայում, պատկերավոր ասած՝ սերմերը կընկնեն քարքարոտ ժայռի վրա, և բերքահավաքի ժամանակն այդպես էլ չի գա: Մենք ցանկանում ենք բերք աճեցնել առանց համապատասխան միջավայր ունենալու, որտեղ ոչ ոռոգման համակարգ գոյություն ունի, ոչ էլ գյուղատնտեսական նշանակության հողատարածք: Սա վկայում է այն մասին, որ կրթական արժեհամակարգերի միջև անհամապատասխանեցումը թույլ չի տալիս, որպեսզի այդ համակարգերը նույն արդյունավետությամբ գործեն բոլոր միջավայրերում:

Մերօրյա դասավանդման մեթոդները ոչ մի դեպքում չի կարելի համատեղել եվրոպական մեթոդների հետ, ավելին, դրանք հակասում են միմյանց: Դասաժամի ընթացքում դասախոսի հոգնեցուցիչ ընթերցման կամ թելադրման ուսուցման եղանակը հարկավոր է վերանայել: Թող ուսուցիչը երեխայից պահանջի ոչ միայն սերտած դասի բառերը, այլև դրա իմաստն ու բուն էությունը և

իր տված օգուտի մասին դատի ոչ թե ըստ սանի հիշողության ցուցանիշների, այլ ըստ նրա կյանքի: Եվ թող աշակերտին ինչ-որ բան բացատրելիս դա ցույց տա նրան հարյուրավոր կողմերից և կիրառի բազում տարբեր առարկաների նկատմամբ, ստուգելու համար, թե արդյոք աշակերտը հասկացել է հարկ եղածին պես և որքանով է յուրացրել դա, և իր բացատրությունների հետևողականության հարցում թող ղեկավարվի Պլատոնի օրինակով: Եթե մեկը կերակուրը փսխում է նույն տեսքով, ինչ տեսքով կուլ է տվել, ապա դա վկայում է կերակրի դժվարամարսության և ստամոքսի անմարսողության մասին: Եթե ստամոքսը չի փոխել իր մարսելիքի որակն ու ձևը, ուրեմն չի կատարել իր գործը [1, էջ 177]: Գլխավորն այն է, որ աշակերտը, ուսանողը, ասպիրանտն *իմանան իրենց իմացածը*: Մեր համոզմամբ, անհրաժեշտ է ներդնել, այսպես կոչված՝ «երկխոսության և քննարկման» մեթոդը, որի ժամանակ ուսանողները նախապես տեղեկացվում են քննարկվող թեմայի մասին և դասաժամի ընթացքում առողջ բանավեճի միջոցով պարզաբանում են իրենց հուզող հարցերը: Դասախոսները պետք է զրուցեն, այլ ոչ թե թելադրեն, իսկ ուսանողները կարդան գրքեր և հետազոտեն, այլ ոչ թե գրեն և արտագրեն:

«Մեզ անընդհատ կրկնում են միևնույն բանը, տալիս են զանազան գիտելիքներ, լցնում դրանք մեր գլուխը, ինչպես ջուրը ձագարի մեջ, և մեր պարտականությունը սոսկ այդ լսածը կրկնելն է: Ես կուզեի, որ ձեր որդու ուսուցիչը հրաժարվեր այդ սովորական եղանակից և հենց սկզբից, համակերպվելով իրեն վստահված երեխայի հոգեկան հակումներին, նրան հնարավորություն տար ազատորեն դրսևորել այդ հակումները, առաջարկելով ճաշակել տարբեր բաներ, ինքնուրույն զանազանել դրանք, երբեմն ցույց տալով ուղղություն, երբեմն, ընդհակառակը, թույլ տալով, որ ինքը գտնի ճանապարհը: Ես չեմ ուզում, որ ուսուցիչը մենակ վճռի ամեն բան և միայն ինքը խոսի, ես ուզում եմ, որ նա լսի նաև իր սանին: Ինչ-որ բան սովորել ցանկացողներին ամենից առաջ խոչընդոտում է սովորեցնողների հեղինակությունը», - ասում է Մոնտենը: Մոկրատեսը, իսկ հետագայում նաև Արկեսիլայոսը ստիպում էին, որ սկզբում խոսեն աշակերտները և հետո նոր խոսում էին իրենք:

2. Առաջարկություններ

Ավանդաբար Եվրոպայում քաղաքացիները, ուսանողները, ծնողները կամ գործատուները հատուկ ազդեցություն կրթության զարգացման վրա չունենին: Հասարակության շահերը ներկայացնում էր պետությունը, որը չէր տարբերակում բուհերը վատերի և լավերի: Բարձրագույն կրթական հաստատություններում բացակայում էր ուսանողների համար մրցակցային պայքարը: Ուսումնական պլանը հաստատվում էր կրթության նախարարությունում: Այս բնագավառում որոշիչ դերը պատկանում էր իշխանության կենտրոնացված

մարմին: ԽՍՀՄ-ում և եվրոպական մի շարք երկրներում գործում էր միասնական կրթական ծրագիր: Բուհերն ինքնուրույն որոշում կայացնելու հնարավորությունից զրկված էին: Սակայն անցյալ դարի 80-ականների կեսերին իրերի դասավորվածությունը էապես փոխվեց: Բուհական համակարգը նպատակաուղղվեց դեպի շուկան, իսկ պետությունը հանդես եկավ միջնորդի դերում: Այն դարձավ դինամիկ տնտեսության հիմնարար և նախաձեռնող, ով, իհարկե, ուներ կարգավորման իր լծակները, որոնք, սակայն, հակասության մեջ չէին շուկայի պահանջների հետ: Հիմնարար և կիրառական գիտությունները վերածվեցին մտքի մատակարարների, ովքեր սպասարկում էին ինչպես մասնավոր, այնպես էլ պետական հատվածին: Ապրանքայնացումն էր գիտնականի գերնպատակը:

XX դարի սկզբում քաղաքակիրթ աշխարհում գլոբալ փոփոխությունները բարձրագույն կրթական համակարգերում շարունակվում էին, բացառությամբ որոշ էլիտար բուհերի, որոնք գործում էին հիմնականում պետության հովանավորության ներքո, սակայն կրթական հաստատությունների գերակշռող հատվածը ներգրավվեց շուկայական հարաբերությունների մեջ, որտեղ ուղեղների մրցակցություն էր: Համալսարանները, ինչպես առևտրային կազմակերպությունները, իրենք են որոշում իրենց կառուցվածքը: Եվրոլենդի, ԱՄՆ հասարակությունը և շրջակա միջավայրը փոխեցին իրենց պահանջները բուհերի նկատմամբ: Այդ իսկ պատճառով առաջացան նոր կազմակերպչական ձևեր, որոնք էապես տարբերվեցին նախկին ավանդական մեթոդներից:

Մենք այժմ կանգնած ենք համակարգային փոփոխությունների ընտրության առջև: Հայաստանի Հանրապետությունն այլևս հապաղելու ժամանակ և իրավունք չունի: Ժամանակն է ազդարարել կրթական իրական բարեփոխումների մեկնարկը:

Այսպիսով՝ տրամաբանական վերլուծության ճանապարհով փորձենք ազատվել մի շարք նախապաշարումներից և համարձակ քայլեր կատարելով՝ ստեղծենք համապատասխան միջավայր, որն ունակ կլինի ընդունել արժեքներ՝ լինելով այդ արժեքների մի մասը:

Պատմությունը գալիս է հիմնավորելու այն, որ բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է դառնան առևտրային կազմակերպություններ, որոնք կվերահսկեն պետական մարմինները: Կրթությունը պետք է դառնա բիզնես, իսկ բուհում սովորելն ընկալվի որպես երկարաժամկետ ներդրում: Թերևս, նմանատիպ ներդրումները ամենաարդարացված, տնտեսապես նպատակահարմար և նվազ ռիսկային են համարվում:

Անգլիալեզու գրականության մեջ գոյություն ունեն մեծ թվով հրապարակումներ համալսարանների կառուցվածքային տիպերի վերաբերյալ: Օրինակ՝ Ռ.Միլլիհարստը համալսարանների կառուցվածքային տիպերը դասակարգում է հետևյալ կերպ.

- համալսարանները՝ որպես պրոֆեսիոնալների միություն,
- համալսարանները՝ որպես քաղաքական բյուրոկրատիա,
- կիրքեռնետիկ, էլեկտրոնային համալսարաններ:

Այս կառուցվածքային տիպերից յուրաքանչյուրն իր դերն ու նշանակությունն ունի երկրի տնտեսության առանձին ճյուղերի զարգացման համար: Ուրեմն, ուսումնասիրելով միջազգային փորձը՝ առաջարկում ենք ստեղծել «հայկական կրթական համակարգ», որը կներառի բոլոր ազգային առանձնահատկությունները և, միևնույն ժամանակ, էապես չի հակասի արևմտյան աշխարհի մտածողությանը, այլ, ընդհակառակը, այն փոխընդունելի տարբերակով կդառնա մեր սեփականը: Այստեղից հետևություն, որ այն ամենը, ինչը հատուկ է մարդկությանը, հատուկ է նաև մեզ, սակայն այն ամենը, ինչը հատուկ է հային, հատուկ չէ մնացածին: Հիմնականում այս դրույթով են պայմանավորված ազգերի միջև եղած տարբերությունները, այլապես բոլորս կունենայինք մեկ մշակույթ, մեկ հավատք և մեկ դրոշ: Բայց ինչպե՞ս ստեղծել այդ համակարգը՝ կհարցնեն ոլորտի մասնագետները և առաջ կքաշեն մի շարք «անլուծելի» խնդիրներ: Սակայն, մեր կարծիքով, այդ հարցի պատասխանը մեկն է. ցանկություն: Բայց միայն ցանկությունը բավարար չէ, հարկավոր է նաև համառություն և նպատակաուղղված քայլերի հերթականություն: Խնդրի լուծման հոգեբանական և փիլիսոփայական դատողություններից զատ, կարևորում ենք նաև բուհերի և կազմակերպությունների միջև արդյունավետ ու բազմակողմանի համագործակցությունը: Նախքան համալսարան ավարտելը ուսանողները պետք է հստակ իմանան, թե որ կազմակերպությունում են աշխատելու, ինչպիսի կառուցվածք և կորպորատիվ մշակույթ ունի այդ կազմակերպությունը, բացի այդ, երրորդ կուրսից արդեն հստակ պետք է կարողանան կողմնորոշվել իրենց նեղ մասնագիտության հարցում: Ժամանակն է, որ առևտրային կազմակերպություններն ուղղակիորեն մուտք գործեն կրթական համակարգ, բուհերում ունենան իրենց լսարանները և կապ հաստատեն մասնագիտական ամբիոնների հետ, իսկ արհեստավարժ մասնագետների մուտքը լսարան հարկ է հնարավորինս խրախուսել, որպեսզի իրական մրցակցություն առաջանա ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների միջև: Այս մեթոդով, կարծում ենք, հնարավոր կլինի ուսանողների մթագնած գիտակցությունը պայծառացնել: Այլ կերպ ասած՝ բուհերում հարկավոր է ստեղծել առողջ մրցակցության մթնոլորտ, որտեղ կրթություն ստանալ ցանկացողները փոքրամասնություն չեն կազմի, և գիտելիքի կուտակման գործընթացը կդառնա ոչ արտասովոր երևույթ և, որ ամենագլխավորն է, կառաջանա սահուն ճանապարհ «ուսանողական կյանքից» դեպի «գործնական կյանք»: Շրջանավարտներն անակնկալի չեն գա, երբ պարզվի, որ իրենց 5 տարվա ստացած գիտելիք-

ները չեն համապատասխանում գործատուների պահանջներին, քանի որ գործատուները հենց իրենք նախքան ուսանողի բուհն ավարտելը կհայտնեն վերջիններիս իրենց պահանջները: Արդյունքում կունենանք մի կրթական համակարգ, որը սերտ կապի մեջ լինելով շուկայի հետ՝ կկարողանա բավարարել նրա խստապահանջ կարիքները:

Ամփոփելով՝ նշենք, որ շուկայի պահանջներին չհամապատասխանող կրթությունը դատապարտված է վերացման, դա կրթության վերացող տեսակ է, որն այլևս ունակ չէ վերարտադրելու ինքն իրեն, այն գտնվում է իր պարբերաշրջանի անկման փուլում, որտեղ կապիտալ ներդրումներն այլևս չեն կարող փրկել ստեղծված իրավիճակը, հարկավոր է «որակապես նոր ապրանք» մշակել: Այդ «նոր ապրանքի» նախագծումը հաջողությամբ կարող է պետության բրենդի հենքը հանդիսանալ, առանց որի երկրի տնտեսական աճը մակրոտնտեսական ցուցանիշից վեր է ածվում քաղաքական շահարկման, որը գուրկ է հիմնավոր փաստարկներից: Վաղուց արդեն ժամանակն է քանակականից անցում կատարենք որակականի, էքստենսիվից՝ ինտենսիվի, անգիտությունից՝ գիտության և վերջապես կարևորենք պետության բրենդի գաղափարը, որը իրավամբ հանդիսանում է երկրի ամենաթանկ կապիտալը: Մակայն այդ կապիտալը ենթակա է փոփոխման, այն կարող է ինչպես մեծ արժեք ունենալ, այնպես էլ արագ արժեզրկվել: Կախված այն բանից, թե որքանով արդյունավետ են գործում այն ինստիտուտները, որոնք ունակ են ձևավորել երկրի բրենդը: Մասնավորապես, կրթական համակարգը, առանց որի հնարավոր չէ ձևավորել պետության դրական կերպարը:

Հունվար, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Միշել Մոնտեն, Փորձեր, Երևան, 1991:
2. Վարդանյան Գ., Գիտելիքահենք տնտեսություն. հնարավորություններ և մարտահրավերներ, Երևան, 2008:
3. Система Образования Соединенных Штатов Америки, 2008, <http://www.intem.ru/sc/p/372/>
4. Портер Майкл, Хиротака Такеути, Японская экономическая модель: Может ли Япония конкурировать?, Москва, 2005.
5. <http://www.quality.edu.ru/quality/>
6. Филипп Котлер, Маркетинг для государственных и общественных организаций, Москва, 2008.
7. Пашутин С.Б., Как создать национальный бренд, Москва, 2007.

8. *Филипп Котлер*, Маркетинг мест: привлечение инвестиций, предприятий, жителей и туристов в города, коммуны, регионы и страны Европы, Стокгольмская школа экономики в Санкт-Петербурге, 2005.
9. *Портер Майкл*, Конкурентная стратегия, Методика анализа отраслей и конкурентов, Москва, 2006.
10. *Наоми Кляйн*, NO LOGO: Люди против брендов, Москва, 2008.

ОБРАЗОВАНИЕ КАК ФАКТОР ФОРМИРОВАНИЯ БРЕНДА ГОСУДАРСТВА

Карен Бабаджанян

Резюме

Для государств во все времена образование являлось сферой стратегического значения, целенаправленное развитие которой повышает их привлекательность и дает им конкурентные преимущества. Накопление знаний – это вид уникального вложения, результаты которого порою бывают намного больше ожидаемых. В постиндустриальном периоде знание воспринимается как товар, имеющий на рынке соответствующую цену, и от качества этого товара зависит сегодняшняя и завтрашняя конкурентоспособность того или иного государства.

В статье представлена роль образования в вопросе формирования бренда государства. Ставятся на обсуждение первоочередные задачи и упущения, имеющиеся в образовательной системе Республики Армения, делается попытка обосновать неэффективность перемен в системе образования и предложить пути выхода из сложившейся ситуации.

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ.
«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ԵՎ
«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»**

Հայկ Սուքիասյան

Տեղեկատվական հասարակությունում պետական կառավարման ձևերի փոխակերպումը թույլ է տալիս բարձրացնել պետության կողմից հասարակությանը մատուցված ծառայությունների որակը և արդյունավետությունը, էականորեն կրճատել բյուրոկրատիան, պետական ապարատի պահպանման համար նախատեսված պետության ծախսերը, թեթևացնել քաղաքացիների մուտքը և հասանելիությունը իշխանության ինստիտուտներին: Հոդվածում պետական կառավարման նոր ձևերը ներկայացված են «*E-government*»-ի երեք՝ ամերիկյան, ռուսական և սինգապուրյան մոդելների համեմատական քաղաքագիտական վերլուծության հիման վրա, դիտարկվել են հայեցակարգային հիմնահանգիներ և Հայաստանում «*E-government*» մոդելի ներդրման հեռանկարները:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը հսկայական ազդեցություն ունի պետական կառավարման ավանդական ձևերի վրա: Այս կապակցությամբ տեսական գրականությունում ակտիվորեն քննարկվում է «*e-government*»-ի հիմնախնդիրը: Որոշ ռուս հեղինակներ սխալմամբ «*e-governance*»-ը (Էլեկտրոնային կառավարում) անգլերենից թարգմանում են որպես Էլեկտրոնային կառավարություն (*e-government*), ինչը հաճախ հանգեցնում է հասկացությունների խառնաշփոթի: Իրականում «*e-governance*»-ի դեպքում խոսքը պետական բուրգի բոլոր օղակներում էլեկտրոնային կառավարման պետական քաղաքականության մասին է, այլ ոչ թե միայն կառավարության՝ որպես ինքնին կառավարման սուբյեկտի: Ուստի, տարբերակելով այս հասկացությունները՝ «Է-կառավարությունը» պետք է հասկանալ որպես պետական կառավարման համակարգի նոր մոդել (*e-governance*), որը կառուցված է ժամանակակից տեղեկատվական ինտերնետ-տեխնոլոգիաների հնարավորությունների վրա՝ պետության և հասարակության ներքին ու արտաքին փոխգործակցությունների փոխակերպությունների պայմաններում:

Ներկայումս ՄԱԿ անդամ 191 պետություններից 173-ը օգտագործում է «է-կառավարման» տարրեր: Այս պետությունների մեծ մասի փորձն ապացուցում է, որ պետական ապարատի աշխատանքում ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների (S2S) ներդրումը թույլ է տալիս՝

- բարձրացնել պետության՝ հասարակությանը մատուցած ծառայությունների որակը և արդյունավետությունը,
- էականորեն կրճատել բյուրոկրատիան,
- նվազեցնել պետական ապարատի պահպանման ծախսերը,
- հեշտացնել իշխանական ինստիտուտների հետ քաղաքացիների շփումը:

Նման հնարավորությունների բացահայտումը ոչ միայն էականորեն բարելավում է պետապարատի աշխատանքի որակն ու արդյունավետությունը՝ կրճատելով վերջինիս պահպանման համար նախատեսված ծախսերը, այլև բյուրոկրատիայի կրճատման շնորհիվ նվազեցնում է կոռուպցիոն ռիսկերը: Դրա հետ մեկտեղ, հեշտացնելով քաղաքացիների համար կառավարական տեղեկատվությունից օգտվելը, «է-կառավարումը» նպաստում է նաև հասարակության մեջ ժողովրդավարական տարրերի ամրապնդմանը: Իհարկե, տարբեր պետություններ գտնվում են «է-կառավարման» ստեղծման տարբեր մակարդակներում, սակայն այն երկրներում, որտեղ բավական առաջընթաց կա այդ գործում, արդյունքները տպավորիչ են:

«Էլեկտրոնային կառավարման» ցանցային կառույցների ստեղծման շնորհիվ իշխանության մարմինների, քաղաքացիական հասարակության ինստիտուտների և քաղաքացիների միջև փոխգործակցությունը S2-ում դառնում է ավելի օպերատիվ, հարմար, թափանցիկ և ավելի էժան՝ իշխանության մարմինների վարչական գործառույթների համար նախատեսված ծախսերի կրճատման հաշվին: Ընդ որում, խոսքը ոչ միայն փաստաթղթային շրջանառության ծավալի փոքրացման, այլև տեղեկատվության թողարկման, բաշխման ու պահպանման մասին է: Հենց պետական կառավարման բոլոր մարմիններում սեփական կայքերի ստեղծումը, համակարգիչներով և ինտերնետ կապով աշխատանքային տեղերի ապահովումն անհրաժեշտ է քաղաքական կարևոր խնդրի՝ պետական իշխանության մարմինների և հասարակության փոխգործակցության նախկին սկզբունքների փոխակերպման համար: S2-ում քաղաքացիները, շնորհիվ էլեկտրոնային հաղորդակցության նորագույն ինտերակտիվ ձևերի, շատ ավելի քիչ են դառնում իշխանական-վարչական ներգործության առարկաներ՝ վերածվելով ծառայություններ սպառողների, որոնք մատուցում են պետական կառավարման մարմինները: Բացի այդ, նրանք հնարավորություն են ստանում մասնակցելու քաղաքական որոշումների մշակմանը, ինչպես ընթացքում, այնպես էլ դրանց արդյունքների քննարկման ժամանակ:

Երբ Բելը խոսում էր ՏՀ-ում ծառայության ոլորտի ընդլայնման մասին, քաղաքական ոլորտը, պարզվեց, ամենաանմշակն էր նրա աշխատություններում, ի տարբերություն Թոֆլերի, որը, օրինակ, «Իշխանության փոխակերպումները» գրքում այս ոլորտին մեծ ուշադրություն է դարձնում: Հարկ է նկատել, որ ծառայություն հասկացությունն ինքնին բազմաթիվ մեկնաբաններ բավական նեղ իմաստով են ըմբռնում՝ առավելապես որպես սպասարկման և կրթական ծառայություններ: Սրանից զատ, ցանցային հասարակության տրամաբանությունը պահանջում է ծառայությունների ոլորտի տարածում նաև քաղաքական ոլորտում: ՏՀ-ում իշխանական կառույցների կերպափոխումների գլխավոր սոցիալ-քաղաքական միտումը, մեր կարծիքով, իշխանական մարմինների աստիճանական փոխակերպումն է ծառայությունների ոլորտում գերակայող մարմինների:

ՏՀ-ում իշխանությունը որպես հասարակական ծառայություն և իշխանությունն առանց գերիշխանության. Ի՞նչը կարող է ավելի լավ լինել ժողովրդավարական իդեալի իրագործման համար: Թեպետ մեր այս կանխադրությամբ կարող է ուտոպիստական թվալ, սակայն կան զգալի թվով փաստարկներ վերջինիս՝ տեսական, փաստական և հեռանկարային-կանխատեսումային տեսանկյուններից հիմնավորման համար: Առաջին, հնարավոր է՝ նաև միակ քաղաքական փիլիսոփան, որը տեսականորեն հստակ տարանջատեց իշխանությունը տիրապետությունից, Մ. Վեբերն էր [1]: Թեև քաղաքական մարդաբանության տվյալները բավական հարուստ նյութ են հաղորդում նախապետական այն հասարակությունների մասին, որտեղ իշխանությունը պատմականորեն իրականացվում էր առանց տիրապետության, ինչը միայն հաստատում է վեբերյան հայեցակարգային տարբերությունը: Ինչ վերաբերում է մյուս փաստարկներին, ապա այստեղ գլխավորներն են՝ ա) մասնավոր ոլորտի կրճատումը քաղաքական որոշումների ընդունման գործընթացում և պատասխանատվության ընդլայնումը հրապարակային քաղաքականությունում՝ շնորհիվ է-կառավարման ինտերակտիվ ձևերի, բ) ժողովրդավարական զարգացման միտումների ամրապնդումը՝ հրապարակային քաղաքականության ցանցային մեխանիզմների հետագա կատարելագործմանը համընթաց:

Ամերիկացի քաղաքագետ Ջ.Դեմպսին «Էլեկտրոնային կառավարության» համակարգում դիտարկում է երեք փոխկապակցված փուլեր՝ 1. *«հրապարակայնություն»*, 2. *«մասնակցություն»* և 3. *«օնլայն-տրանզակցիաներ»* (գործառություններ) [2, c. 24-27]:

1. *«Հրապարակայնություն» փուլ:* Այս փուլում պետական մարմիններն իրենց կայքերում տեղադրում են օրենքների և նորմատիվ-իրավական ակտերի տեքստերը, վիճակագրական տվյալներ, հայտարարությունների ձևեր, հայտարարագրեր, անդորրագրեր և այլ փաստաթղթեր, որոնք

անհրաժեշտ են պետական մարմիններին էլեկտրոնային դիմումներ հղելու համար: Վիրտուալ հրապարակայնության ստեղծման այս փուլում քաղաքացիների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների համար իրենց հետաքրքրող տեղեկատվությունից օգտվելու դյուրամատչելիությունն ընդլայնվում է: Ջ.Դեմպսին կարծում է, որ վիրտուալ հրապարակայնության նման եղանակը հնարավորություն է ընձեռում քաղաքացիներին ազատորեն ստանալու իրենց հետաքրքրող տեղեկատվությունը՝ առանց ավելորդ անգամ պետական և տեղական իշխանության հաստատություններ այցելելու, այս կամ այն մակարդակի ծառայողների մոտ հերթագրվելու և առանց կաշառք առաջարկելու կամ տալու [2, c. 25]: Հրապարակայնության փուլում բյուրոկրատական արգելքների շրջանցման կարևոր տարր է «մեկ պատուհանի» գործընթացը, որը գործում է աշխարհի բազմաթիվ երկրներում: Հայաստանում այն սկսեց բարեհաջող կերպով գործել 2007թ. Երևանի քաղաքապետարանում: Մոտ ժամանակներս այն կներդրվի նաև տեղական ինքնակառավարման այլ մարմիններում: 2008թ. ապրիլի 17-ին ՀՀ վարչապետ Ս.Սարգսյանը կառավարության նոր կազմի հետ հանդիպմանը հայտարարեց պարտադիր կերպով բոլոր նախարարություններում և գերատեսչություններում սեփական կայքերի ստեղծման մասին՝ ընդունվող որոշումների քննարկմանը հասարակությանը մասնակից դարձնելու համար, ինչը վկայում է, որ Հայաստանի ղեկավարությունն առաջին քայլերն է անում էլեկտրոնային կառավարման ճանապարհին: Հայաստանի Ազգային ժողովի կայքում տարբեր լեզուներով տեղադրված են ընդունված բոլոր օրենքները: Այստեղ ապահովված է հրապարակայնությունը, սակայն դեռևս չի սկսվել մասնակցության փուլը: Հարկ է նկատել, որ հրապարակայնության փուլը չի սպառվում վերոնշյալ գործողություններով և մեթոդներով, բայց դրա նպատակն ակնհայտ է՝ հանրային ոլորտում ստեղծել պետական իշխանության մարմինների և հասարակության միջև ինտերակտիվ համագործակցության հնարավորությունների դաշտ:

2. «Մասնակցության» փուլ: Այս փուլը ենթադրում է ոչ միայն ընթացիկ և հեռանկարային քաղաքականության հրատապ խնդիրների վերաբերյալ իշխանության կողմից անցկացվող հասարակական կարծիքի հարմարավետ ու խնայողական մոնիթորինգ: Այստեղ խոսքը պատասխանատու քաղաքական որոշումների մշակման և ընդունման գործընթացին համատեղ մասնակցության մասին է, որում շահագրգռված են ինչպես իշխանական մարմինները, այնպես էլ հասարակայնությունը: Եթե պետական մարմինների կայքերը լինեն ոչ թե պարզապես հայտարարությունների ցուցատախտակներ, այլ նաև օժտված լինեն հետադարձ կա-

պի հնարավորություններով, ապա անհատ քաղաքացիները, կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները կարող են ազատորեն շարադրել իրենց պատկերացումները, մեկնաբանել և առաջարկել որոշումների իրենց տարբերակները ինչպես քննարկվող նոր օրենսդրական նախաձեռնությունների, այնպես էլ հասարակական գործընթացների կառավարման մնացյալ խնդիրների վերաբերյալ: Չաթերը, բլոգները, նամակները, տեսալոնֆերանսները, ինտերնետ-համաժողովները և ինտերակտիվ այլ միջոցները ստեղծում են աննախադեպ հնարավորություններ մասնակցային փուլում: Թեև որոշումների ընդունման ժամանակ «վերջին խոսքը» պատկանում է իշխանական լիազոր մարմիններին, այդուհանդերձ, այդ որոշումների լեգիտիմությունը և իշխանության նկատմամբ հասարակական վստահությունը էականորեն մեծանում են հասարակայնության նմանօրինակ լայն մասնակցության պարագայում: Որքան խորն ու բովանդակալից ընթանա այս փուլի զարգացումը ՏՀ-ում, այնքան բարձր կլինեն տվյալ երկրում մասնակցության ժողովրդավարության մակարդակն ու նրա սոցիալական կապիտալը:

3. *«Օնլայն-գործառության» փուլ:* Այստեղ խոսքը ոչ միայն շփման կամ տեղեկատվության փոխանակման մասին է, այլև քաղաքացիների ուղղակի *գործողությունների*՝ ինտերնետ-ծառայությունների հիման վրա, որ առաջարկում են կառավարման պետական և տեղական մարմինները: Նման օնլայն գործառությունների ընդգրկման դաշտը կարող է լինել բավական լայն՝ կոմունալ վճարումներից, հարկային հայտարարագրերի լրացումից մինչև հասարակական միավորումների գրանցում: Այսպիսի նորամուծությունների հնարավոր առավելությունների շարքում Ջ.Դեմպսին մատնանշում է բյուրոկրատական ընթացակարգերի պարզեցումը և անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման ժամկետների զգալի կրճատումը, էլեկտրոնային հաշվառման տեղեկատվական համակարգի ներդրման միջոցով իրավաբանական և ֆիզիկական անձանց ավելի խիստ հարկային հաշվետվելիության ապահովումը, բյուջետային մուտքերի ավելացումը, կոռուպցիայի ծավալների կրճատումը և, համապատասխանաբար, քաղաքացիների՝ իշխանության ինստիտուտների նկատմամբ վստահության աճը: Երբ հասարակության մեջ նշյալ ինտերնետ-ծառայությունների ծավալը մեծանում է (իսկ օնլայն գործառությունների հարմարավետությանն ու շահավետությանը դժվար թե որևէ մեկը կասկածի), ապա իշխանության մարմինների և քաղաքացիների փոխհարաբերություններում սկսում են առաջանալ նոր ցանցային մեխանիզմներ. ՏՀ-ում սկսում է ձևավորվել պետական և տարածքային կառավարման նոր էլեկտրոնային ենթակառուցվածք [2, c. 24-27]:

Բազմաթիվ երկրներ ՏՀ-ին անցման իրենց ազգային ծրագրերում ոչ միայն առանձնակի ուշադրություն են դարձնում է-կառավարման խնդիրներին, այլ նաև մշակում են հատուկ երկարաժամկետ ծրագրեր տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների օգնությամբ պետական կառավարման մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացման համար: Այդպիսի երկարաժամկետ ծրագրերի թվին կարելի է դասել, օրինակ, «Էլեկտրոնային Ռուսաստան» (2002-2010) դաշնային ծրագիրը, որը հաստատվել է ՌԴ կառավարության կողմից 28.01.2002թ., ինչպես նաև մինչ այդ ԱՄՆ-ի, Ֆինլանդիայի, Գերմանիայի, Կանադայի, Սինգապուրի և այլ երկրների կողմից ընդունված ծրագրերը:

Հետագա շարադրանքում մենք կիրականացնենք պետական կառավարման մարմինների բարեփոխման գործընթացների քաղաքագիտական համեմատական վերլուծությունը «Է-կառավարության» ստեղծման հիման վրա ԱՄՆ-ում, որտեղ գործընթացն արդեն վաղուց է սկսվել, Ռուսաստանում, որը գտնվում է «Է-կառավարության» ձևավորման ճանապարհին, կխոսենք նաև Սինգապուրում այդ գործընթացների մասին, որտեղ կյանքի բարձր մակարդակն ապահովվում է և «Է-կառավարության» զարգացումն իրականացվում է խստագույն ավտորիտար քաղաքական վերահսկողության պայմաններում: Նմանատիպ համեմատական վերլուծությունը չափազանց կարևոր է Հայաստանի համար, որն առաջին քայլերն է կատարում այդ ուղղությամբ: «Է-կառավարության» կառուցվածքի երեք մոդելների համեմատական վերլուծությունը հիմնված է տարբեր սկզբունքների վրա՝ անորոշ ժողովրդավարության, որը, ըստ ռուս հեղինակների, բնորոշ է «Էլեկտրոնային Ռուսաստան 2002-2010» նախագծին, ԱՄՆ-ում «Է-կառավարության» կազմավորման մեջ ակնհայտորեն դրսևորվող լիբերալ ժողովրդավարության և ավտորիտար քաղաքական վարչակարգի, որն իրականացվել է Սինգապուրի «Է-կառավարություն» նախագծում:

«Էլեկտրոնային Ռուսաստան 2002-2010» ծրագրում, օրինակ, հիմնական նպատակներն են՝ «Ժողովրդավարության զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, ՏՀՏ ներդրման և զանգվածային տարածման հաշվին տեղական ինքնակառավարման պետական կառավարման և տնտեսության գործառնության արդյունավետության բարձրացումը, տեղեկատվության ազատ որոնման, ստացման, փոխանցման, թողարկման և տարածման իրավունքների ապահովումը, ՏՀՏ մասնագետների պատրաստումն ու որակավորված օգտվողների թվի աճը» [3]: Ծրագրի իրականացումը թույլ կտա արդյունավետ օգտագործել ՏՀՏ ոլորտում Ռուսաստանի մտավոր և կադրային ներուժը, համագործակցության և տեղեկատվական բացազատության հիման վրա ապահովել Ռուսաստանի ներդաշնակ ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը, հաղթահարել ՏՀՏ օգտագործման և զարգացման մակարդակում

Ռուսաստանի հետամնացությունը զարգացած երկրներից, ապահովել Ռուսաստանի քաղաքացիների՝ գլոբալ տեղեկատվական հանրակցությանն անդամակցելու իրավահավասարությունը մարդու իրավունքների պաշտպանության, այդ թվում տեղեկատվության ազատ որոնման, ստացման, փոխանցման, թողարկման և տարածման իրավունքների, ինչպես նաև տեղեկատվական համակարգերում առկա օրենքով պաշտպանված ցանկացած տեղեկատվության գաղտնիության ապահովման իրավունքի հիման վրա [3]: Ծրագրային միջոցառումների հիմնական համակարգը պետք է իրականացվի երրորդ վերջնական փուլում (2005-2010): Ծրագրում հատուկ ուշադրություն է դարձվում օրենսդրության կատարելագործմանը և ՏՀՏ՝ պետական կարգավորման համակարգին, պետական տեղեկատվական ռեսուրսների մատչելիության և համահասանելիության ապահովմանը, ՏՀՏ օգտագործման հիման վրա պետական իշխանական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցությանը:

Համեմատական քաղաքագիտության որոշ վելուծաբաններ և մասնագետներ պնդում են, որ է-կառավարման ռուսական ծրագիրը, ի տարբերություն ամերիկյան ծրագրի, ավելի մեծ ուշադրություն է դարձնում տեղեկատվական գործընթացների նկատմամբ պետական վերահսկողությանը, քան իշխանության նկատմամբ քաղաքացիական հետադարձ վերահսկողությանը: Դ.Պեսկովը, օրինակ, պնդում է, որ «Էլեկտրոնային Ռուսաստան» ծրագրում իշխանության պետական մարմիններն ինչպես դաշնային, այնպես էլ տարածաշրջանային մակարդակներում, սոցիալական վերահսկողության հիմնական կազմակերպիչներն ու հասարակության տեղեկատվայնացման նախաձեռնողներն են, մինչդեռ արևմտյան մոտեցումը և, առաջին հերթին, ամերիկյանը, ընդհակառակը, շեշտը դնում է «կառավարության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ուժեղացման վրա, ինչն ամենից առաջ դրսևորվում է վերջինիս գործունեության հրապարակային գնահատականներով» [4, c. 35]:

«Է-կառավարման» ամերիկյան ծրագիրը հիմնադրվել է դեռևս Քլինթոն-Գոր Վարչակազմի ժամանակ՝ 1994թ., սակայն առավելագույնս զարգացել է Բուշ-Չեյնի վարչակազմի կառավարման օրոք: Նոր վարչակազմի օրոք իշխանության արդիականացման և էլեկտրոնային կառավարության ստեղծման գործընթացի ավարտական փուլն սկսեց զգալիորեն արագանալ: Ներկայումս ԱՄՆ-ում գոյություն ունեն ավելի քան 20 հազար կառավարական կայքեր՝ ավելի քան 30 մլն *www* էջերով: Հիմա ամերիկացիների մոտ 70%-ը, որոնց հասու է ինտերնետը, օգտվում է կառավարության տեղեկատվություններից և ինտերնետի միջոցով իշխանությունից ստանում տարատեսակ ծառայություններ:

ԱՄՆ-ում տեղեկատվության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում նպատակային պետական քաղաքականությունը հանգեցրեց

որակապես նոր մակարդակի պետական կառավարման, ինչն էլ հենց «Է-կառավարության» բնորոշումն է: 2001թ. օգոստոսին նախագահ Զ.Բուշն ուղերձով դիմեց Կոնգրեսին, որում շարադրված էր կառավարման ոլորտի բարեփոխումների ծրագիրը. այնտեղ առանցքային տեղ էր զբաղեցրել էլեկտրոնային կառավարության ստեղծման խնդիրը: Ի կատարումն ուղերձի՝ 2002թ. փետրվարի վերջին մասնագետների հատուկ աշխատանքային խումբը նախագահին ներկայացրեց գործողությունների հստակ ծրագիր «Էլեկտրոնային կառավարության ստեղծման ռազմավարություն» (*E-Government Strategy*) անվանմամբ, որը գործնականում պետք է իրագործեր նախագահի հոչակած երեք սկզբունքները.

- կողմնորոշվածություն դեպի քաղաքացիները, այլ ոչ թե բյուրոկրատիան,
- կենտրոնացում արդյունքի վրա,
- շուկայական մոտեցում, նորարարությունների ակտիվ խթանում:

Նախագահ Բուշի խոսքերով, կոնկրետ քաղաքացու համար էլեկտրոնային կառավարությունը պետք է ենթադրի՝ համակառավարական պորտալին մեկ անգամ դիմելով, ամբողջ ծավալով տեղեկատվության և ծառայությունների ստացման հնարավորություն: Քաղաքացին պետք է դիմի կառավարությանը, այլ ոչ թե առանձին գերատեսչությունների կամ չինովնիկների: Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ էր միասնականացնել կառավարական բոլոր հաստատությունների մակարդակով տեղեկատվության հավաքագրման և տրամադրման գործընթացները, տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերումն ու օգտագործումը, ինչպես նաև (որն ամենակարևորն է) ստեղծել միասնական և արդյունավետ պետական ենթակառուցվածք բոլոր տեղեկատվական գործընթացների կառավարման համար, այսինքն՝ գործնականում կիրառել էլեկտրոնային կառավարության հասկացությունը: Բնական է, որ ամերիկյան սահմանադրական պահանջների շրջանակներում այդ աշխատանքը պետք է օրենսդրորեն ձևակերպվեր:

Դեռևս 1995-96թթ. ԱՄՆ-ում ընդունվեց երկու օրենք, որոնք սահմանում էին պետական իշխանության մարմինների բարեփոխման հիմնական ուղղությունները՝ կառավարական հաստատություններում տեղեկատվության և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման արմատական բարելավման նպատակով: Այդ օրենքներն են՝ «Փաստաթղթաշրջանառության կրճատման մասին» (*Paperwork Reduction Act of 1995*), Միացյալ Նահանգների օրենքների ժողովածուի 44-րդ հատորի նոր՝ 35-րդ գլուխ («Դաշնային տեղեկատվական քաղաքականության համակարգումը» - *Coordination of Federal Information Policy*) և Քլինջեր-Բոենի օրենքը «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման բարեփոխումների մասին» (*Information Technology Management*

Reform Act of 1996), հատոր 40-րդ, նոր 25-րդ գլուխ («Տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարումը» - *Information Technology Management*): Համաձայն «Փաստաթղթաշրջանառության կրճատման մասին» օրենքի՝ դաշնային տեղեկատվական քաղաքականության համակարգման ոլորտում իշխանության մարմինների գործունեության բարեփոխումների նպատակներն են՝

- նվազագույնի հասցնել քաղաքացիների, փոքր բիզնեսի, կրթական և ոչ առևտրային կազմակերպությունների, դաշնային կառավարության հետ պայմանագրեր կնքող կողմերի, նահանգների իշխանությունների, տեղական իշխանությունների և այլ անձանց վրա թղթային ծանրաբեռնվածությունը,
- ապահովել հասարակության՝ դաշնային տեղեկատվության օգտագործման առավելագույն շահավետությունը,
- դաշնային տեղեկատվական ռեսուրսների կառավարման նպատակով քաղաքականության և պրակտիկայի համակարգում, ինտեգրում և գործնականում հնարավոր սահմաններում միասնականացում,
- դաշնային տեղեկատվական համակարգերի օգտագործման բարելավում և որակի բարձրացում,
- տեղեկատվության հավաքման, ստեղծման, պահպանության, օգտագործման, տարածման և կայքերում տեղադրման հարցերում դաշնային կառավարության ծախսերի կրճատում,
- հասարակությանն անհրաժեշտ տեղեկատվության ժամանակին, անաչառ և իրեն հարմար եղանակով տրամադրում,
- ապահովել, որպեսզի տեղեկատվության ստեղծումը, հավաքումը, պաշտպանումը, օգտագործումը, տարածումը և կայքերում տեղադրումը կատարվի օրենսդրության պահանջներին համապատասխան, այսինքն՝ պահպանվեն մասնավոր շահերն ու գաղտնիությունը, տեղեկատվությունն ու դրան հասու լինելու իրավունքը:

Իրապես գործուն «Էլեկտրոնային կառավարության» ստեղծման խնդրի լուծումը ամերիկյան կառավարությանը հնարավորություն ընձեռեց ոչ միայն արմատապես բարելավել քաղաքացիների հետ պետական կառույցների փոխգործակցությունը, բարձրացնել այդ աշխատանքի արդյունավետությունը: Հենց կառավարությունում տեղի ունեցած կառուցվածքային վերաձևումներն ու նորաստեղծ կառույցների հստակ գործողությունները հնարավորություն տվեցին այլ դիտանկյունից նայել ամբողջ կառավարության և առանձին գերատեսչությունների աշխատանքների կազմակերպման արդյունավետությանն ու ռացիոնալությանը: Կարելի է ասել, որ Էլեկտրոնային կառավարությունը դարձավ ոչ միայն վերափոխումների նպատակը, այլ նաև կառավարական լայն բարեփոխումների գործիքը:

Նախագահ Բուշի առաջարկած «Կառավարման բարեփոխումների ծրագրում» հատուկ ընդգծված է, որ տեղեկատվական տեխնոլոգիաները թույլ են տալիս հայտնաբերել և վերացնել ավելորդ բյուրոկրատական ստորաբաժանումները, ինչպես նաև նպաստել կառավարության աշխատանքների ընդհանուր արդյունավետության բարձրացմանը: Բյուրոկրատիայի մասին հին պատկերացումները, որոնց մասին գրում էր դեռ Մ.Վեբերը՝ որպես պետական կառավարման անհրաժեշտ տարր, բայց միաժամանակ վտանգավոր հասարակության և ժողովրդավարության համար, էլեկտրոնային կառավարությունում ստանում են անսպասելի և արդյունավետ լուծումներ: Էլեկտրոնային կառավարությունում կտրուկ նվազում է բյուրոկրատական ապարատի անհրաժեշտությունը, իսկ նման կրճատումն ինքնին միշտ էլ բարիք է: Բացի այն, որ էլեկտրոնային կառավարությունում կտրուկ կրճատվում է բյուրոկրատիան, բարիք է նաև այն, որ կրճատվում է փաստաթղթաշրջանառությունը, ինչը հանգեցնում է տնտեսական մեծ արդյունավետության:

Մասնագետները հաշվել են, որ պետական կառավարման համակարգի արդիականացումը Բուշի՝ էլեկտրոնային կառավարության նախագծի օգնությամբ ԱՄՆ պետական ապարատի ծախսերը կրճատել է \$1,5 մլրդ-ով: Նույնիսկ Բուշի արտաքին քաղաքականության քննադատները ստիպված են ընդունել ԱՄՆ-ում էլեկտրոնային կառավարության ստեղծման ուղղությամբ պետական կառավարման տեղեկատվական բարեփոխումների անվիճելի հաջողությունը երեք կարևոր հարցերում՝

- պետական կառավարման արդյունավետության բարձրացում,
- «իշխանություն-հասարակություն» հարաբերությունում ժողովրդավարացման աստիճանի բարձրացում,
- խնայողականություն՝ պետական կառավարման մարմինների պահպանման համար նախատեսված ծախսերի կրճատման շնորհիվ:

Այս առումով նախագահ Բուշի ծրագրում ամրագրված գլխավոր նպատակներից մեկը պետական ապարատի վերաբերյալ ձևավորված պատկերացումների արմատական վերափոխումն է և բարեփոխումների նկատմամբ բյուրոկրատական դիմադրության հաղթահարումը:

Համեմատական վերլուծության երրորդ առարկան՝ Սինգապուրը, հետաքրքիր է նրանով, որ հասնելով ՏՀ և է-կառավարության ստեղծման ամենաառաջավոր մակարդակին, այնուամենայնիվ, մնում է բաց ավտորիտար հասարակություն: Սա մեծ գլխացավանք է զարգացման լիբերալ-ժողովրդավարական մոդելի արևմտյան տեսաբանների համար: Այս առումով հատկապես ուշագրավ է Ֆ.Ֆուկույամայի դիրքորոշումը, որը «Պատմության վերջը և վերջին մարդը» գրքում պնդում էր ժամանակակից աշխարհում զարգացման

արևմտյան տիպի լիբերալ-ժողովրդավարական մոդելին իրական այլընտրանքների բացակայության մասին: «Մշակույթի առաջնայնությունը» հռչակվածում Ֆուկույաման գործնականում նահանջում է իր սկզբնական դիրքորոշումից՝ Սինգապուրի հաջողությունները բացատրելով կոնֆուցիական մշակույթի առանձնահատկություններով: Սինգապուրը և մյուս «ասիական վագրերը» ոչ միայն չեն տեղավորվում այս մոդելի մեջ, այլ նաև, ի դեմս Սինգապուրի նախկին վարչապետ Լի Քվան Յուի, անկեղծորեն համոզված են, որ արևմտյան ժողովրդավարության սկզբունքները գաղափարախոսության և ինստիտուտների մակարդակում քայքայում են քաղաքացիական հասարակությունն ու մշակույթը: Հաջողության գաղտնիքը Ֆուկույաման համարում է կոնֆուցիական բարոյականության համակեցական առանձնահատկությունները, որոնց շնորհիվ նվազագույնի են հասցվում անհատապաշտությունն ու եսակենտրոնությունը, որոնք բնորոշ են արևմտյան հասարակություններին:

Ամերիկացի քաղաքագետ Գ.Ռոդենը նշում է, որ դեռևս 1996թ. Սինգապուրում կային մոտ 200.000 ինտերնետից օգտվողներ մեկ միլիոն բնակչության պարագայում: 100.000 բաժանորդներից գատ, այդ թիվը ներառում է Սինգապուրում լայնորեն տարածված զանազան ինտերնետ-սրճարանների հաճախորդներին: Պետությունը բոլոր կոմունալ կենտրոններում ստեղծել է ինտերնետ-ակումբներ: Ինտերնետի տարածման ծավալներով Սինգապուրը կարող է մրցակցել ԱՄՆ-ի հետ և անհամեմատ առաջ է անցել Ավստրալիայից [5, p. 63-89]:

Հարկ է նկատել, որ Սինգապուրում տեղեկատվական հասարակության կազմավորման ծրագիրը սկսեց իրագործվել դեռևս անցյալ դարի 80-ական թթ., ուստի Սինգապուրում է-կառավարության ստեղծման հաջողությունները զարմանալի չեն: «Ինչպես էլ գնահատենք SS ազդեցությունը ավտորիտար քաղաքական կառույցների վրա,- ամփոփում է Գ. Ռոդենը,- Սինգապուրը հետաքրքիր ու կարևոր օրինակ է: Այստեղ մենք հանդիպում ենք աշխարհում SS զարգացման լավագույնս մտածված ռազմավարություններից մեկին, որն ուղեկցվում է մեծածավալ ենթակառուցվածքային ներդրումներով՝ պետության առաջնային դերակատարմամբ: Սինգապուրյան քաղաքական գործիչները հակված են կղզու տնտեսությունը տեղեկատվական հանգույցի վերածելու մտքին, որը պետք է զբաղվի գաղափարների, այլ ոչ թե ապրանքների առևտրով: Միաժամանակ, Սինգապուրի ավտորիտար առաջնորդները նույնիսկ չնչին ցանկություն չունեն զիջելու քաղաքական վերահսկողությունն այդ գործընթացում»:

Ամփոփելով Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Սինգապուրի «է-կառավարությունների» ստեղծման ծրագրերի համեմատական վերլուծությունը՝ կարող ենք կատարել որոշ կարևոր եզրահանգումներ այն երկրների համար, որոնք

իրենց առջև դրել են իրապես գործուն էլեկտրոնային կառավարությունների ստեղծման խնդիր: Բոլոր երեք երկրների դեպքում էլ տեղեկատվական հասարակության զարգացումը պետական նպատակամետ քաղաքականության արդյունք է, առանց որի ՏՏ զարգացման բնական գործընթացից կարող են լրջորեն հետ մնալ մյուս երկրները, կառաջանա թվային խզում և նրանք կվերածվեն «տեղեկատվական գաղութների»: Ամերիկյան վարչակազմերի անվիճելի հաջողությունները հիմնված են այն բանի վրա, որ նրանք առաջին հերթին բարեփոխեցին պետական կառավարման ամբողջ կառուցվածքը տեղեկատվական հոսքերով և տեղեկատվական տեխնոլոգիաներով՝ ձեռնարկելով հետևյալ քայլերը.

- էլեկտրոնային կառավարության ստեղծման խնդիրը դարձրին ազգային առաջնություններից մեկը,
- համախմբեցին ՏՏ ոլորտում առկա ինչպես ինժեներատեխնոլոգիական, այնպես էլ սոցիալ-հումանիտար ուղղությունների լավագույն մասնագետների մտավոր ուժերը,
- առավելագույնս կենտրոնացրին իշխանական լիազորությունները էլեկտրոնային կառավարության ստեղծման քաղաքականության մշակման վրա, ինչպես համադաշնային, այնպես էլ պետական հաստատությունների մակարդակով,
- ստեղծեցին պարտականությունների բաշխման համակարգ պետական կառավարման մարմինների վերակազմավորման ճանապարհով,
- էլեկտրոնային կառավարության ստեղծման քաղաքականությունը և պրակտիկան դարձրին թափանցիկ և հաշվետու,
- միավորեցին էլեկտրոնային կառավարության ստեղծման քաղաքականությունն ու պրակտիկան:

Ամփոփելով՝ նշենք, որ էլեկտրոնային կառավարություն ասելով հարկ է հասկանալ պետական տեղեկատվական-տեխնոլոգիական համակարգերը՝ նախատեսված երկրի բնակչության և ոչ կառավարական կառուցվածքների միջև փոխգործակցության համար: Այդպիսի կառուցվածքներ կարող են լինել բիզնեսը, հասարակական կազմակերպությունները, իշխանության տարածքային և տեղական մարմինները և այլն: Ստեղծելով «է-կառավարություն»՝ աշխարհի զարգացած երկրները ձեռք են բերում պետական կառավարման ժամանակակից արդյունավետ համակարգ՝ որպես տեղեկատվական հասարակության էական կառուցվածքային բաղադրիչ: Ըստ էության, խոսքը ոչ միայն գործադիր, այլ նաև պետական իշխանության և պետական կառավարման ամբողջ համակարգի ցանցային ենթակառուցվածքների նախագծման մասին է, այսինքն՝ պետական էլեկտրոնային ապարատի ստեղծման:

Էլեկտրոնային կառավարության կենսագործունեության հիմքը դառնում է պետական ցանցային տեղեկատվական ենթակառուցվածքը՝ որպես տեղեկատվական-հեռահաղորդակցական համակարգ, որն ապահովում է հասարակության ազգային շահերի տեսանկյունից պետական իշխանության և պետական կառավարման բոլոր ճյուղերի և մակարդակների օպտիմալ գործառնությունը:

«Էլեկտրոնային կառավարությունը»՝ որպես ՏՀ էական կառուցվածքային բաղադրատարր, սկզբունքորեն նոր տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցային ենթակառուցվածք է, որը պաշտպանում է հասարակությունում գործադիր իշխանության մարմինների՝ սեփական գործառնությունների կատարման գործընթացը:

Պետական իշխանության մարմինների և հասարակության միջև տեղեկատվության փոխանակման ժամանակակից մեթոդների զարգացման հիմքի վրա ստեղծվում են սկզբունքորեն նոր հնարավորություններ տեղեկատվության մատչելիության և որոշումների ընդունման հրապարակայնության ապահովման, հասարակության և պետական իշխանության մարմինների միջև փոխգործակցության ու վստահության մակարդակի բարձրացման համար:

Էլեկտրոնային կառավարության մոդելների ստեղծման և գործառնության փորձի վերաբերյալ արված եզրահանգումները կարևոր նշանակություն ունեն բազմաթիվ երկրների, այդ թվում նաև՝ Հայաստանի համար, որտեղ տեղեկատվական հասարակության անցման հայեցակարգային ծրագիրը դեռևս մշակված չէ, սակայն այդ անցման բնական-պատմական գործընթացը, այնուամենայնիվ, սկսվել և զարգանում է: Ներկայումս աշխարհի բազմաթիվ երկրներում ստեղծվել և հաջողությամբ գործում են է-կառավարությունների արդյունավետ մոդելներ: Հայ հասարակագետների կողմից այս փորձի ուսումնասիրությունը կարևոր նախապայման է «է-կառավարության» հայկական մոդելի գրագետ և արդյունավետ կազմավորման համար:

Ղեկտներ, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Вебер М., Политика как призвание и как профессия, М., 1990.
2. Демпси Дж., Электронное правительство и его выгоды для широких масс. Государственное управление в переходных экономиках: ежеквартальное издание программы «Инициатива реформирования местного самоуправления и государственных услуг», Институт открытого общества, 2003.

3. Постановление Правительства Российской Федерации от 28 января 2002. № 65 «О федеральной целевой программе «Электронная Россия (2002–2010)», «Собрание законодательства Российской Федерации», N5, 2002.
4. Песков Д., Интернет в российской политике: утопия и реальность, № 1, 2002.
5. Garry R., The Internet and Political Control in Singapore. «Political Science Quarterly», vol. 113, № 1, 1998.

ИНФОРМАЦИОННОЕ ОБЩЕСТВО: «ЭЛЕКТРОННОЕ ПРАВИТЕЛЬСТВО» И «ЭЛЕКТРОННОЕ УПРАВЛЕНИЕ»

Айк Сукиасян

Резюме

Трансформация форм государственного управления в информационном обществе позволяет повысить качество и эффективность услуг государства обществу, существенно сократить бюрократию, снизить издержки государства на содержание государственного аппарата, облегчить доступ граждан к институтам власти. Новые формы государственного управления представлены в статье на основе сравнительного политологического анализа трех моделей «*E-government*» – американской, российской и сингапурской, рассмотрены концептуальные проблемы и перспективы внедрения модели «*E-government*» в Армении.

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԲՍՈՐԲՑԻԱՅԻ ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՓՈՐՁԻՑ

Հարություն Մարության

Հայաստանում ներկայում տարբեր ձևաչափերով քննարկվում են հայրենադարձության խնդիրները: Այդ տեսանկյունից մեծապես կարևորվում է օտարների փորձը: Որպես այդպիսին հատկապես արժեքավոր է հայրենադարձության և աբսորբցիայի տասնամյակների ավանդույթ ունեցող Բուրայել պետության փորձառությունը: Հոդվածում մանրամասնորեն դիտարկված են ներգաղթի գործի կազմակերպմանն ուղղված Հրեական գործակալության (Մոխնուտ) ձևավորումը, կառուցվածքը, գործելակերպը, գործունեության հիմնական արդյունքները: Քննվում են նաև աբսորբցիայի իրականացմանն ուղղված տարաբնույթ կրթական, տեղեկատվական, ֆինանսական, տնտեսական, հոգեբանական օժանդակության ծրագրերը, դրանց արդյունավետությունը:

I

Բուրայել պետության ստեղծումից առաջ և հետո բազմաթիվ տասնամյակների ընթացքում այդ երկրի գաղափարախոսական, քաղաքական և սոցիալական զարգացման հիմքում դրված է «ողջ աշխարհի հրեաների հավաքման» հայեցակարգը: Բուրայելական հասարակությունը ձևավորվել ու շարունակում է ձևավորվել որպես արդյունք պատմության մեջ աննախադեպ մի իրողության՝ աշխարհի բոլոր մայրցամաքներից հարյուր հազարավոր մարդկանց հայրենադարձության: Բուրայել պետության գոյության ողջ ընթացքում նրա կառավարությունն ու հասարակությունը ստիպված են գործ ունենալ ներգաղթյալների անընդհատ հոսքի և հասարակության մեջ նրանց ինտեգրման հետ: Ներգաղթյալների մղումները, ազգային և հասարակական նպատակների շուրջ նրանց հայացքներն իրենց կնիքն են դրոշմել պետության ընդհանուր նկարագրի վրա: Ընդ որում, ներգաղթյալների բազմահազարանոց խմբերը, պահպանելով հանդերձ հավատարմությունն ընդհանուր կրոնամշակութային ավանդույթին, միևնույն ժամանակ իրենց մեջ կրում էին այն ժողովուրդների կենսակերպի և մշակույթի բազմաթիվ տարրեր, ում մեջ նրանք դարձան նաև ապրել են մինչև հայրենադարձությունը: Հետազոտողների համոզմամբ, չնայած հայրենադարձությունն Բուրայել իրականացվում էր միասնական

ազգային հատկանիշի հենքով, այնուամենայնիվ, «ձուլման կաթսայի» ասիմիլացիոն սկզբունքով բնակչության էթնիկական, լեզվական, մշակութային և դավանական միասեռության հասնելը, մեկ միասնական ազգության կերտումը բավական բարդ խնդիր էր, իսկ որոշ հետազոտողների կարծիքով՝ այն այնպես էլ չկայացավ:

Ի տարբերություն զանգվածային ներգաղթ ունեցող այլ երկրների, որտեղ ներգաղթող փոքրամասնությունը հարմարվում է բնիկ մեծամասնության կենսաձևին, Իսրայելում, փաստորեն, երբեք գոյություն չի ունեցել բնիկ բնակչության կայուն մեծամասնություն: Նման պայմաններում ավելի ճիշտ կլիներ խոսել ոչ թե ներգաղթյալների հարմարմանը մի ինչ-որ ընդհանրական կենսաձևի, այլ մշակութային փոխազդեցության մասին, որի ընթացքում նոր հայրենադարձները ոչ միայն յուրացնում են իրենց՝ երկիր ժամանելու պահին առկա կենսաձևը, այլև իրենց ներգրավմամբ իսրայելական հասարակության մեջ ազդում են վերջինիս բնույթի վրա [1, c. 8-9]:

II

Համառոտ ներկայացնենք հայրենադարձության գործընթացը: Նկատենք, որ «ներգաղթ», «հայրենադարձություն» եզրերին որպես հոմանիշ հրեաներն օգտագործում են «ալիյա» բառը, որը եբրայերեն լեզվում նշանակում է «վերելք», «վեր բարձրանալ» և օգտագործվում է մատնանշելու համար հրեաների ներգաղթը Պաղեստին և Իսրայել: Այն լայն առումով հրեական մշակութային կոնցեպտ է, հայացքների հիմնարար համակարգ է սիոնիզմի տեսության մեջ: Ալիյան այս համատեքստում ունի ինչպես ֆիզիկական, նույնպես և հոգևոր իմաստ. մասնավորապես, բոլոր հրեաները կրթված են այն հավատով, որ այս «վերելքը» հուդաիզմի էական մասն է կազմում: Շատ հրեաներ դիտում են ալիյան իբրև վերադարձ դեպի Ավետյաց երկիր, որպես Աստծո աստվածաշնչային խոստման՝ որ տրվել էր եբրայական նահապետեր Աբրահամին, Իսահակին ու Հակոբին, իրականացում՝ նրանց ժառանգների նկատմամբ¹:

1948թ. մայիսի 14-ին հռչակվեց Իսրայել պետությունը: Հռչակագրում, մասնավորապես, նշվում էր, որ «Իսրայել պետությունը բաց է լինելու հրեական ներգաղթի և բոլոր փախստականների ի մի բերման համար»: Սրան հետևեց 1950թ. ընդունված «Վերադարձի մասին օրենքը», որն ամեն հրեա անհատի ավտոմատ իրավունք էր վերապահում ներգաղթել Իսրայել և դառնալ պետության լիիրավ քաղաքացի²: Հաջորդող զանգվածային ներգաղթի ժամանակ շուրջ 690 հազ. հրեաներ ժամանեցին Իսրայել: Արդյունքում՝ 1951թ.

¹ Մանրամասն տե՛ս, օրինակ, <http://www.jewishagency.org/JewishAgency/English/Aliyah/>:

² Մանրամասն տե՛ս <http://www.sohnut.lv/index.php?mode=sections&id=4>: Տե՛ս նաև [2, c. 104-115]:

ներգաղթողների թիվն ավելի քան կրկնապատկեց երկրի 1948թ. առկա հրեա բնակչության թվաքանակը: Ներգաղթողները հիմնականում Հոլոքոստը վերապրողներն էին, որոնք տեղավորված էին Գերմանիայում, Ավստրիայում և Իտալիայում ստեղծված հատուկ ճամբարներում, Բուլղարիայի և Լեհաստանի հրեական համայնքի մեծամասնությունը, Ռումինիայի հրեաների մեկ երրորդը, Լիբիայի, Եմենի և Իրաքի գրեթե ողջ հրեական համայնքը:

1952-1964թթ. ընթացքում շուրջ 240 հազ. հրեաներ Հյուսիսային Աֆրիկայից ներգաղթեցին Իսրայել: Մեծ քանակությամբ հրեա ներգաղթողներ եկան արաբական և Միջին Արևելքի երկրներից: Այսպես, 1951թ. շուրջ 114 հազ. հրեաներ «Էգրա» և «Նեհեմիա» գործողությունների արդյունքում տեղափոխվեցին Իսրայել միայն Իրաքից: Նույն թվականին 32 հազ. հրեաներ ներգաղթեցին Լիբիայից: 1985թ. օգոստոսին իրականացվեց «Մովսես» գործողությունը, երբ ընդամենը վեց շաբաթվա ընթացքում, 6500-8000 եթովպական հրեաներ տեղափոխվեցին Իսրայել: 1991թ. մայիսին եթովպական ծագմամբ հրեաներին (ֆալաշներ) փրկելու նպատակով իրականացվեց «Մողմոն» գործողությունը: Ընդամենը երեսուն ժամվա մեջ, 41 օդանավային թռիչքների իրականացման շնորհիվ, 14325 հրեաներ Ադիս Աբեբայից տեղափոխվեցին Իսրայել: Այդ ժամանակներից սկսած՝ եթովպական հրեաները շարունակում են ներգաղթել Իսրայել՝ եթովպական ծագմամբ հրեաների թիվը հասցնելով մինչև 100 հազարի:

Շուրջ 30 հազ. իրանյան հրեաներ ներգաղթեցին Իսրայել իսլամական հեղափոխությունից հետո, չնայած այն հանգամանքին, որ նրանց մեծագույն մասն, այնուամենայնիվ, գերադասեց բնակություն հաստատել ԱՄՆ-ում:

Զանգվածային արտագաղթը ցանկալի չէր խորհրդային վարչակարգի համար: «Երկաթե վարագույրից» դուրս գալու գրեթե միակ ընդունելի միջոցն ընտանիքների միավորման թեզն էր և այդ նպատակով ազգականների ուղարկած հրավերի առկայությունը: Հաճախ, սակայն, դա էլ չէր օգնում: 1960-1970թթ. ընթացքում ԽՍՀՄ իշխանությունները թույլ տվեցին արտագաղթել միայն 4000 հրեաների: Արտաքին տարաբնույթ ճնշումներին տեղիք տալով, նաև ժողովրդավարական վերափոխումների արդյունքում, ԽՍՀՄ-ից արտագաղթի քվոտան մեծացվեց, և 1980-ական թթ. երկիրը լքեցին շուրջ 250 հազ. հրեաներ: Սակայն նրանցից շատերը, ում թույլատրված էր գնալ Իսրայել, ընտրեցին այլ երկիր՝ գերազանցապես ԱՄՆ, գնալու հնարավորությունը: Այնուամենայնիվ, շուրջ 140 հազ. հրեաներ արտագաղթեցին Իսրայել: 1989թ. ԽՍՀՄ-ից դուրս գալ թույլատրվեց 71 հազ. հրեայի, որոնցից միայն 12 հազարն արտագաղթեց Իսրայել: 1990թ. Իսրայել արտագաղթեցին շուրջ 190 հազ. հրեաներ, 1991թ.՝ 150 հազ.: Իրավիճակի կայունացումը բերեց արտագաղթի ծավալների նվազեցմանը, և հրեաների տարեկան արտահոսքը նախկին ԽՍՀՄ տարածքից իջավ մինչև 70 հազ. մարդու: Ընդհանուր առմամբ, 1989-

1999թթ. ներառյալ շուրջ 770 հազ. հրեաներ Բուրայել արտագաղթեցին ԽՍՀՄ-ից ու նրա փլուզումից հետո ձևավորված նորանկախ երկրներից:

Եթե զանգվածային ներգաղթը Բուրայել տեղի էր ունենում հիմնականում դժվար կացության մեջ գտնվող պետություններից, ապա «ազատ աշխարհի» երկրներից պարբերաբար ներգաղթում էին անհատ մարդիկ: Նրանց մեծ մասի համար նման քայլի դիմելու դրդապատճառներն ավելի շատ իդեալիստական էին: Այս ալիյան հատկապես ուժեղացավ 1967թ. Վեցօրյա հաղթական պատերազմից հետո, ինչը հրեական սփյուռքում բերեց ինքնագիտակցության մեծ աճի: Միայն հաջորդող երեք տարիների ընթացքում շուրջ 24 հազ. հրեաներ եկան Բուրայել Արևմտյան Եվրոպայից և շուրջ 18 հազար՝ ԱՄՆ-ից (Հյուսիսային Ամերիկայից այսօր շուրջ 110 հազ. ներգաղթողներ կան Բուրայելում): 2000-2005թթ. ավելի քան 11 հազ. հրեաներ կատարեցին ալիյա Ֆրանսիայից, իսկ 2007թ. ընթացքում՝ շուրջ 3000 [3]:

2007թ. սկզբին իսրայելական թերթերից մեկը գրեց, որ 2006թ. միայն 19264 մարդ են ներգաղթել Բուրայել, ինչը 9%-ով ցածր է, քան 2005թ.: Նշվում էր, որ 1988-ից ի վեր դա ներգաղթողների ամենափոքր գրանցված քանակությունն է [4]: Մեկ այլ պարբերական նշում է, որ 2007թ. սպասվում է, որ կներգաղթի շուրջ 14400 մարդ, մինչդեռ ակնկալվում է, որ կարտագաղթի 20000 մարդ: *Jerusalem Post*-ը 2007թ. սեպտեմբերի 17-ի համարում նշում է, որ առաջին անգամ վերջին 20 տարվա մեջ Բուրայելը, թերևս, կունենա բացասական սալդո բնակչության ներգաղթ-արտագաղթի առումով, մի բան, որ գրանցված չէր 1984-ից ի վեր: 2008թ. դեկտեմբերին նշվում էր, որ տարվա ընթացքում Բուրայել է ներգաղթել 16500 հրեա, ինչը 16%-ով ցածր է 2007թ. ցուցանիշից: Սակայն Հրեական գործակալության ալիյայի բաժնի ղեկավար Էլի Քոհենի (*Eli Cohen*) կարծիքով, 2009թ. սպասվում է ներգաղթողների թվաքանակի էական աճ [5]:

III

Զանգվածային ներգաղթի կամ հայրենադարձության կազմակերպումը բարդ խնդիր է ոչ միայն և ոչ այնքան մարդկանց խմբերի տեղափոխման բուն գործընթացի մասշտաբների առումով, այլ նաև այն պատճառով, որ պահանջում է հարցի խոր իմացություն, նախապատրաստական հսկայածավալ աշխատանքների իրականացում, բարձր մակարդակի կազմակերպվածություն, ինչպես նաև տարիների քրտնաջան աշխատանք արդեն բնակչության նոր վայրերում՝ նորեկ բնակչությանը նոր հայրենիքի իրողություններին ծանոթացնելու, ճիշտ խորհուրդներ տալու և ուղղորդելու հարցերում: Արդ, ի՞նչ կառուցվածք, գործառույթներ, աշխատառժ ունեւր վերը նկարագրած գործը ղեկավարող և ուղղորդող կազմակերպությունը կամ կազմակերպությունները: Նկատենք, որ հայրենադարձության և աբսորբցիայի կազմակերպման գործում այսօր առկա

վիճակը ձևավորվել է տասնամյակների ընթացքում, ինչի համառոտ պատմությունն առաջարկվում է ստորև: Նկատենք նաև, որ ներգաղթյալների ընդունման և աբսորբցիայի հարցն այն քիչ քաղաքական հարցերից է, որոնց նկատմամբ Իսրայել պետության ներսում միշտ էլ առկա է եղել կոնսենսուս:

«Սոխնուտ» (*Sohnut*) կամ «Հրեական գործակալություն Իսրայելի համար» (*The Jewish Agency for Israel*) կազմակերպությունն այսօր ոչ պետական, ոչ կառավարական, ոչ առևտրային միջազգային հրեական կազմակերպություն է, որի կենտրոնական նստավայրը տեղակայված է Իսրայելում: Այն գործում է ինչպես անմիջականորեն, նույնպես և աշխարհի 58 երկրներում գտնվող իր ներկայացուցիչների ցանցի միջոցով: Հրեական գործակալության ղեկավար մարմինների կազմում մտնում են ինչպես իսրայելցիներ, այնպես էլ սփյուռքում բնակվող, տարբեր քաղաքական և կրոնական հոսանքների պատկանող հրեաներ:

Հրեական գործակալության անվանումն ու հիմնական գործառույթներն առաջին անգամ հաստատվել են Պաղեստինի բրիտանական մանդատով¹: Կազմակերպության խնդիրների մեջ էր մտնում համագործակցությունը կառավարության հետ բոլոր այն հարցերում, որոնք այս կամ այն կերպ վերաբերելու էին հրեական ազգային օջախի ստեղծմանը, տարածքների՝ հրեաներով բնակեցմանը: Որպես Հրեական գործակալություն՝ Ազգերի լիգայի մանդատով (1922թ.) ճանաչվեց Համաշխարհային սիոնիստական կազմակերպությունը: Սակայն կային զգալի թվով հրեաներ, որոնք չէին ընդունում սիոնիստական գաղափարախոսությունը և, գործի հաջողության ապահովման համար, անհրաժեշտ էր նկատվում նրանց ներկայացուցիչներին ևս ընդգրկել Հրեական գործակալության ղեկավարության մեջ: 1923թ. Համաշխարհային սիոնիստական կազմակերպության ղեկավար Խաիմ Վեյցմանին հանձնարարվեց ստեղծել նման ներկայացուցչական մարմին: Այդ կազմակերպության և հայտնի ոչ սիոնիստ հրեա հասարակական գործիչների միջև բանակցությունները՝ Հրեական գործակալության ծրագրային խնդիրների շուրջ, տևեցին վեց տարի: Հրեական գործակալության հիմնադիր նիստը տեղի ունեցավ 1929թ. Ցյուրիխում: Պատգամավորների կեսն ընտրվել էր 16-րդ Սիոնիստական կոնգրեսի կողմից, մյուս կեսը ներկայացնում էին 26 երկրների ոչ սիոնիստական կազմակերպությունները: Որպես ոչ սիոնիստներ Հրեական գործակալության մեջ մտան այնպիսի հայտնի անձինք, ինչպիսիք էին Ալբերտ Էյնշտեյնը, դրամատուրգ և վիպասան Աշ Շալոմը, հետազայում Ֆրանսիայի վարչապետ, Սոցիալիստական ինտերնացիոնալի առաջնորդներից Լեոն Բլյումը, բրիտանացի պետական և քաղաքական գործիչ, Պաղեստինի առաջին բարձրագույն կոմի-

¹ Մանրամասն տե՛ս <http://www.jewishagency.org/> վեբկայքի տարբեր էջերը:

սար (1920-25) Հերբերտ Լուի Սեմյուելը, բրիտանացի քաղաքական գործիչ և արդյունաբերող, Մեծ Բրիտանիայի ամենահարուստ մարդը՝ Ալֆրեդ Մոնդը և ուրիշներ: Համաձայն Հրեական գործակալության կանոնադրության, սիոնիստներին և ոչ սիոնիստներին ապահովվում էր լիակատար իրավահավասարություն կազմակերպության երեք ղեկավար մարմիններում՝ խորհրդում, վարչական և գործադիր կոմիտեներում: Հրեական գործակալության նախագահը դառնում էր Համաշխարհային սիոնիստական կազմակերպության նախագահ: Գործնականում Հրեական գործակալությունը շուտով դարձավ Համաշխարհային հրեական կազմակերպության գործադիր մարմինը: Հրեական գործակալության կենտրոնական բյուրոն տեղակայված էր Երուսաղեմում, որտեղ էր գտնվում նաև երկու գործադիր կոմիտեներից մեկը, իսկ մյուսը գործում էր Լոնդոնում:

Երուսաղեմում գտնվող կոմիտեի հիմնական խնդիրները կայանում էին դեպի Էրեց-Իսրայել հրեաների ներգաղթ կազմակերպելու, տեղացի բնակչության հետ նրանց ինտեգրման և հրեական ազգային տնտեսության զարգացմանն օժանդակելու մեջ և այլն: Լոնդոնյան գործադիր մարմինը կապեր էր պահում մեծբրիտանական Գաղութների նախարարության և ԱԳՆ-ի հետ: Հրեական գործակալության ներկայացուցիչը ներկա էր լինում Ազգերի լիգայի ենթամանդատային տարածքների գծով մշտական կոմիտեի այն նիստերին, որտեղ քննարկվում էին Պաղեստինին վերաբերող հարցեր: Հիտլերի իշխանության գալուց հետո Հրեական գործակալությունը սկսեց ակտիվորեն պայքարել հանուն այն բանի, որ օրինական ճանապարհով թույլատրվի Գերմանիայի հազարավոր հրեաների ու նրանց ունեցվածքի մուտքը, տեղափոխումը Էրեց-Իսրայել: Սակայն երբ 1942թ. մայիսին Համաշխարհային սիոնիստական կազմակերպությունն ընդունեց Բիլթմորյան ծրագիրը, որտեղ կոչ էր արվում Պաղեստինում ստեղծել հրեական պետություն, ոչ սիոնիստների մասնակցությունը Հրեական գործակալության աշխատանքներին ամբողջովին դադարեցվեց, քանի որ վերջինիս գործունեությունը նույնացվում էր Սիոնիստական կազմակերպության քաղաքականության հետ: Բրիտանական մանդատին հակառակվելու արդյունքում 1946թ. Հրեական գործակալության գործադիր կոմիտեի անդամները ձերբակալվեցին, և գործակալության ակտիվության կենտրոնը տեղափոխվեց Նյու Յորք: Այստեղ նրանց հաջողվեց՝ Պաղեստինի հարցով քննարկումների ժամանակ հասնել նրան, որ 1947թ. նոյեմբերի 29-ին Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեան որոշում ընդունի Պաղեստինի բաժանման մասին: Սրան հաջորդած անցումային շրջանում Հրեական գործակալությունը ձևավորեց մարմիններ, որոնք 1948թ. մայի-

սի 14-ին Իսրայելի անկախության հռչակագրի ընդունումից անմիջապես հետո դարձան նորաստեղծ պետության օրենսդիր մարմինը և ժամանակավոր կառավարությունը, իսկ գործակալության անդամները զբաղեցրին նախարարական աթոռներ, այլ պաշտոններ:

Այդպիսով էր, որ իրականացվեց Հրեական գործակալության քաղաքական գործառույթների փոխանցումը պետությանը: 1948թ. օգոստոսին Համաշխարհային սիոնիստական կազմակերպության գլխավոր խորհուրդը Հրեական գործակալության վրա դրեց այդուհետև ևս զբաղվելու արևելյան և հայրենադարձների ինտեգրման, ինչպես նաև համաշխարհային հրեության՝ Իսրայել պետությանն օժանդակելու հարցերով: 1949թ. Հրեական կոնգրեսում ստեղծվեցին կրթության և մշակույթի բաժիններ սփյուռքում բնակվող հրեաների համար: Մինչ այս, 1940թ. ստեղծվել էր երիտասարդների հարցերով զբաղվող բաժինը: Հրեական գործակալության մասին օրենքն ընդունվեց Իսրայելի Կնեսետի կողմից 1952թ. նոյեմբերի 24-ին: Իսկ 1954թ. հուլիսի 26-ին կնքվեց համաձայնություն Իսրայելի կառավարության և Համաշխարհային հրեական կազմակերպության միջև, որը կարգավորում է այդ կազմակերպության և Հրեական գործակալության գործառույթներն ու տեղը Իսրայել պետությունում:

1967թ. Վեցօրյա պատերազմին հաջորդած ազգային ինքնագիտակցության վերելքը վերստին այժմեական դարձրեց Հրեական գործակալության գործունեության մեջ ոչ սիոնիստների մասնակցության հարցը: 27-րդ Սիոնիստական կոնգրեսը (Երուսաղեմ, 1968թ. հունիս) հավանություն տվեց Հրեական գործակալության վերակազմակերպման ծրագրին: 1970թ. օգոստոսին Երուսաղեմում ստորագրվեց պայմանագիր Հրեական գործակալության կառուցվածքի փոփոխության մասին, իսկ 1971թ. հունիսին կայացավ վերակազմավորված ու ընդլայնված Հրեական գործակալության հիմնադիր նիստը: Նոր կանոնադրությամբ Հրեական գործակալության բարձրագույն մարմինը Ասամբլեան է, որի անդամների 50%-ը ընտրվում է Համաշխարհային սիոնիստական կազմակերպության կողմից, տեղերի 30%-ը տրված է նվիրատվությունների հավաքմամբ զբաղվող «*United Jewish Appeal*» ամերիկյան բարեգործական հասարակական կազմակերպությանը (հիմնվել է 1939թ.), 20%-ը՝ «Կերեն խա-իեսող» կազմակերպությանը, որը Համաշխարհային սիոնիստական կազմակերպության և Հրեական գործակալության գլխավոր ֆինանսավորող մարմինն է (հիմնվել է 1920թ.): Նույն համամասնությամբ Ասամբլեան ընտրում է 40 հոգուց բաղկացած Գործադիր մարմին, որը հավաքվում է տարին մի քանի անգամ և ղեկավարում է Հրեական գործակալության աշխատանքը: Գործադիր մարմինն է որոշում բյուջետային և այլ հանձնաժողովների կազմը, ինչպես նաև ընտրում է Հրեական գործակալության վարչություն ընթացիկ աշխատանքների ղեկավարման համար: Հրեական գործակալության Ասամբ-

լեայում և նրա գործադիր կոմիտեում, որպես Համաշխարհային սիոնիստական կազմակերպության անդամներ, մասնակցում են նրա կազմում գտնվող տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հրեական գործակալության և Իսրայել պետության միջև համագործակցության գործը կարգավորում է Կոորդինացիոն կենտրոնը՝ ստեղծված դեռևս 1955թ. Հրեական գործակալության և կառավարության ներկայացուցիչներից: Վարչության գործունեությունն ստուգվում է Վերահսկիչի կողմից, որն ընտրվում է Ասամբլեայի կողմից: Հրեական գործակալության վարչությունը բաժանված է գանձապահականի, ալիյայի և աբսորբցիայի, գյուղական բնակչության և երիտասարդական ալիյայի բաժինների:

Հրեական գործակալության ալիյայի բաժնում կենտրոնացած են հայրենադարձության կազմակերպման բոլոր ծառայությունները, ինչպես նաև այսպես կոչված աբսորբցիայի կենտրոնները, որոնցով անցել են տասնյակ հազարավոր հայրենադարձներ: Հրեական գործակալության պարտականությունների մեջ է մտնում հայրենադարձներին ու նրանց ուղեբեռը երկիր հասցնելը, իրավաբանական խորհրդատվության, ժամանակավոր կացարանի տրամադրումը, օժանդակությունը իվրիտ սովորելու հարցում և դրամական օգնության տրամադրումը: Երիտասարդական ալիյայի բաժինը բազում տարիներ շարունակ զբաղվում է երեխաների ու երիտասարդների տեղավորման հարցերով: Հրեական գործակալության ներկայացուցիչները գտնվում են աշխարհի բոլոր խոշոր հրեական կենտրոններում, ուր նրանք կազմակերպում են իվրիտի ուսումնասիրման խմբեր, համապատասխան տեղեկատվություն են տրամադրում պոտենցիալ հայրենադարձներին, ինչպես նաև անհրաժեշտ (այդ թվում և դրամական) օգնություն Իսրայել ներգաղթելու համար: Ալիյայի խթանմանն ուղղված գործունեությունը Հրեական գործակալության գործունեության առաջնային ուղղություններից մեկն է [6, c. 72-89]:

1968թ. ձևավորված Աբսորբցիայի նախարարության (*Ministry of Immigrant Absorption*) կենտրոնական ապարատի բաժինները կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինի մեջ են մտնում աբսորբցիայի ծրագրերը մշակող 11 բաժինները, որոնց խնդիրների մեջ է հայրենադարձներին բնակարանով ապահովելը, առաջնային դրամական օգնության տրամադրումը, նրանց և պոտենցիալ աշխատատեղեր ունեցող հաստատությունների հետ կապերի հաստատումը, դրանց գործունեության համակարգումը հայրենադարձների աբսորբցիայի ուղղությամբ և այլն: Նախարարության ղեկավարությունը նախարարի գլխավորությամբ ձևակերպում է աբսորբցիայի իրականացման գլխավոր քաղաքականությունը, որի մանրամասն մշակումն արդեն իրականացվում է պլանավորման ու հետազոտման բաժինների կողմից: Այդ քաղաքականության իրագործումը դրված է նախարարության շրջանային և տեղական բաժանմունքների,

ինչպես նաև բնակարանով ապահովման ու աշխատանքի տեղավորման, սոցիալական աբսորբցիայի, ուսանողների գործերով վարչության, գիտնականների աբսորբցիայի կենտրոնի վրա: Տեղեկատվության բաժինը պատասխանատու է հայրենադարձներին տեղյակ պահելու այն ինֆորմացիայի մասին, որը նրանց անհրաժեշտ է իսրայելական հասարակության մեջ կենցաղային, աշխատանքային և սոցիալ-մշակութային աբսորբցիայի գործընթացի համար¹:

IV

Բուն աբսորբցիայի գործընթացի իրականացման մեջ, ինչպես հուշում է համացանցային տեղեկատվության և որոշ հետազոտությունների վերլուծությունը, առանձնանում են մի քանի հիմնական գործիքներ:

Դրանց թվում կարևորագույնը, թերևս, ամենատարբեր միջոցների, այդ թվում՝ և՛ հրապուրանքի, և՛, փաստորեն, պարտադրանքի կիրառմամբ, հայրենադարձներին իվրիտի սովորեցումն է: Հիշենք, որ ընդամենը 100-120 տարի առաջ այն չունեին ամենօրյա շփման լեզվի կարգավիճակ աշխարհի հրեական և ոչ մի համայնքում [7, c. 182-197]:

Աբսորբցիայի համար կարևորագույն դրական գործոն է Իսրայել ժամանող գրեթե բոլոր երիտասարդ, երկու սեռերի ներգաղթյալների բանակային ծառայությունը, քանի որ բանակը երևի թե միակ ընդհանուր սոցիալական ինստիտուտն է, որի միջով անցնում են երկրի գրեթե բոլոր քաղաքացիները:

Շատ կարևոր գործոն է յուրատեսակ, տարբեր հրեական համայնքների համար ընդհանուր բնույթ կրող «կոլեկտիվ հիշողության պանթեոնի» ստեղծումը: Սրանով է հենց պայմանավորված ներգաղթի գործընթացում քաղաքական և գաղափարախոսական դրդապատճառների գերակշռությունը, գործընթացի զանգվածային լինելու հանգամանքը [1, c. 11-12]:

Աբսորբցիայի մեխը, մեր կարծիքով, մանրամասնորեն մշակված զանազան ծրագրերի իրագործումներն են: Կարող է տարօրինակ թվալ, սակայն պոտենցիալ ներգաղթյալների համար դրանք սկսվում են դեռևս Իսրայել չմտած: Այսպես, հրեական համայնքներ ունեցող բազմաթիվ երկրներում գործում են պատանեկան և ուսանողական ակումբներ, երիտասարդական ամառային և ձմեռային ճամբարներ. Ռուսաստանում, օրինակ, 2001 և 2002թթ. դրանց մասնակցել են ավելի քան 10 հազարական պատանիներ²: Գործում են նաև մեծ քանակությամբ համալսարանական ուլպաններ՝ իվրիտի ուսուցման կենտրոններ, ուր նաև տեղեկատվություն է մատուցվում Իսրայելի ու հու-

¹ Նախարարության կառուցվածքի և գործառնությունների մասին մանրամասն տե՛ս <http://www.moia.gov.il/> կայքէջի համապատասխան բաժինները:

² Հմտ. օրինակ, Ուկրաինայի Օդեսա քաղաքում 1999թ. գործող Սոխնուտի երիտասարդական ճամբարի հետ: Տե՛ս http://www.delphistyle.com/gallery1/slideshow.php?set_albumName=summer_99

դայիզմի մասին նույնպես: Այսպես, 2001թ. Ռուսաստանում դրանցում սովորում էր 15400 մարդ, 2002թ.՝ 14200 մարդ: Հրեական գործակալությունը՝ իսրայելական Բաց համալսարանի հետ համատեղ, ԱՊՀ և Բալթյան երկրներում իրականացնում է հեռակա ուսուցման ծրագիր: 2002թ. այդ ծրագրի շրջանակներում Ռուսաստանում սովորում էր 1500 հոգի, Ուկրաինայում՝ 1600, Բալթյան երկրներում՝ 230, Բելառուսում՝ 220, միջինասիական և անդրկովկասյան պետություններում՝ 650 և այլն: ԱՊՀ տարածքում մեծ քանակությամբ մարդիկ մասնակցում են Հրեական գործակալության կազմակերպած «Հրեական ինքնագիտակցություն» ծրագրի աշխատանքներին¹: Այսպես, 2001թ. Ռուսաստանում այդ ծրագրում ընդգրկված էին 13 հազ. մարդ, 2002թ.՝ 20 հազ. մարդ, Ուկրաինայում 2001թ.՝ շուրջ 9 հազ. մարդ, 2002թ.՝ ավելի քան 10 հազ. հոգի, Բելառուսում 2001թ.՝ 650 հոգի, 2002թ.՝ 2200 և այլն:

Մի շարք ծրագրեր ուղղված են հրեական սփյուռքի երիտասարդությանը հրեական կրթություն ստանալու համար հնարավորությունների ստեղծմանը: Այսպես, ծրագրերից մեկը ԱՊՀ և Բալթյան երկրների հրեա 15-16 տարեկան պատանիներին հնարավորություն է ընձեռում դպրոցի վերջին երեք տարիները (10-12-րդ դասարաններ) սովորել իսրայելական դպրոցում ու այդտեղից էլ ստանալ միջնակարգ կրթության վկայական: Մեկ այլ ուսումնական ծրագիր՝ *СЭАА*, ուղղված է ԱՊՀ և այլ երկրների դպրոցների 16-22 տարեկան շրջանավարտներին վերապատրաստելուն՝ Իսրայելի քոլեջներ և համալսարաններ ընդունվելու համար: Դասընթացներում մեծ տեղ է հատկացվում իվրիտին, անգլերենին, մաթեմատիկային, Իսրայելի մասին դասախոսություններին, հրեից պատմության և հրեա ժողովրդի ավանդույթների շուրջ սեմինարներին, համակարգչային գիտելիքներին: Տնողությունը 1 ակադեմիական տարի է, որից առաջին երեք ամսվա ծախսերը ծրագիրը վերցնում է իր վրա: Երեխաները բնակվում են միասին, մեկ կամ երկու սենյականոց բաժանմունքներում: Ինչպես և մյուս ծրագրերի պարագայում է, սա ևս շարադրված է բավական հստակ, հարցերի տեղիք չի տալիս²:

Իսրայելում գործող մեկ այլ ծրագիր նախապատրաստում է 16-20 տարեկաններին իսրայելական բուհեր ընդունվելու համար: Նշված երկու ծրագրերի շրջանակներում 2001թ. Իսրայելում նախապատրաստվում էին 1670 երիտասարդներ Ռուսաստանից, 2002թ.՝ 1075 հոգի:

Հրեական գործակալությունն իր աշխատանքների կազմակերպման մեջ մեծ տեղ ու դեր է տալիս գործի տեղեկատվական առաջադեմ տեխնոլոգիաների, մասնավորապես համացանցի լայնամասշտաբ կիրառմանը: Գործում են

¹ Մանրամասն տե՛ս http://www.sohnut.md/education/evr_sam.htm

² Մանրամասն տե՛ս <http://www.jafi.ru/JewishAgency/Russian/Aliyah/MOLODEGE+I+STUDENTI/MOLODEGNIE+UCHEBNIE+PROGRAMI/> + + + + + + + + +65.htm

բազմաթիվ ու բազմապիսի վերկայքեր, որոնցից կարելի է ստանալ ցանկացած և մանրամասնորեն մշակված տեղեկատվություն թե՛ ներգաղթի կազմակերպման, թե՛ աբսորբցիայի գործընթացին ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող երևույթների մասին: Այսպես, օրինակ, եթե փորձում ես պարզել, թե որտեղ, ինչ պայմաններում և ինչ հիմունքներով կարող են միջնակարգ կրթությունն ավարտել և հասունության ատեստատ ստանալ սփյուռքի հրեա պատանիներն ու աղջիկները, քեզ առաջարկվում է *NAALE* ծրագիրը¹: Մանրամասնորեն գրված է ամեն ինչ՝ կենցաղի կազմակերպումից մինչև ուսումնական առարկաների թվարկումը, նշված են այդ ծրագրում ընդգրկված բոլոր դպրոցներն իրենց հասցեներով ու վերկայքերով, ուր նշված է հստակ ու մանրամասն տեղեկատվություն դրանց մասին, ընդ որում, առնվազն հինգ լեզուներով²: Նկատենք, որ արդեն իսկ աշխատանքի կազմակերպական նման մակարդակի առկայությունը, դրա ապահովումը մշտապես թարմացվող տեղեկատվությամբ հստակորեն դրված հարցադրումների շուրջ վկայում են գործի հաջողության մեջ շահագրգռվածության բարձր տոկոսի մասին:

Եվ կամ «Միասին տանը» ծրագիրը, որն անմիջականորեն ուղղված է ինտեգրման և աբսորբցիայի գործընթացի իրականացմանը և խնդիր է դնում օժանդակել նորեկներին, որոնք ցանկանում են շփվել իսրայելցի հնաբնակների հետ, ծանոթանալ նրանց փորձառությանը, իմանալ, թե ինչպես են ուրիշները լուծել իրենց առջև ներկայում ծառացող խնդիրները, ցանկանում են ընդլայնել ծանոթությունների շրջանակը և այլն: Կամ էլ թե չէ մարդիկ, որոնք արդեն որոշ ժամանակ բնակվում են Իսրայելում և կուզենային իրենց փորձառությամբ կիսվել նորեկների հետ, ովքեր ցանկանում են այդ կերպ ներագդել Իսրայելում ձևավորվող հասարակական իրավիճակին, կամ ովքեր ուրիշներին օժանդակելը, փոխադարձ օգնությունը դիտում են որպես երկրի, քաղաքի ծաղկման նախադրյալ և այլն, նույնպես առաջարկում են իրենց ծառայությունն այդ ծրագրին: Վերջինիս իրագործումը ներառում է համատեղ ուղևորությունների, խնջույքների, երեկոյանների կազմակերպում, դասախոսությունների ունկնդրում և այլն: Այդ ծրագրին անդամագրվելով՝ մարդիկ ձեռք են բերում նոր ծանոթություններ ու կապեր, այսինքն՝ այն ուղղակիորեն ուղղված է սոցիալացման իրականացմանը: Այս և նման այլ ծրագրերով, փաստորեն, աբսորբցիայի գործընթացի իրականացմանն ուղղակիորեն մասնակցելու

¹ Մանրամասն տե՛ւ http://www.jafi.ru/JewishAgency/Russian/Aliyah/MOLODEGE+I+STUDENTI/MOLODEG-NIE+UCHEBNIE+PROGRAMI/____+____+____+____+____+____+____+____+____+64.htm 2008թ. դեկտեմբերի կեսերի տվյալներով, Հրեական գործակալությունը ժամանակավորապես սառեցրել է *NAALE* ծրագիրը ֆինանսական դժվարությունների պատճառով: *Danny Adino Ababa*. Jewish Agency Freezes Youth Aliyah Program. – Israel Jewish Scene, December 12, 2008, from <http://www.ynet.co.il/english/articles/0,7340,L-3636972,00.html>

² Մանրամասն տե՛ւ <http://www.jafi.ru/JewishAgency/Russian/Aliyah/MOLODEGE+I+STUDENTI/MOLODEG-NIE+UCHEBNIE+PROGRAMI/Naale+Scholls+List.htm>

հնարավորություն է ընձեռվում պետության փոքրից մինչև տարիքով մեծ բոլոր քաղաքացիներին: Նման համատեղ գործունեությունը, հայրենասիրական գործընթացին մասնակցության փաստն ինքնին մեծապես նպաստում է ամուրի հրեական ինքնության ձևավորմանը, տարբեր մարդկանց միջև կապերի ամրապնդմանը¹:

Մեկ այլ ծրագիր: Իսրայելի հրեական գործակալությունը Երուսաղեմում բացել է աշխարհի հրեական համայնքների հետ կապի կենտրոն: Հաստատության աշխատանքը հենված է նորագույն տեխնոլոգիաների կիրառման վրա, աշխատակցում են պրոֆեսիոնալ խորհրդատուներ, որոնք տեղեկատվություն են տրամադրում վեց լեզուներով: Կենտրոնն աշխատում է օրուգիշեր և շաբաթական վեց օր: Այս գլոբալ կենտրոնի նպատակն է Իսրայելը դարձնել ավելի մոտիկ և մատչելի, ապահովել օբյեկտիվ ու հստակ տեղեկատվություն, ամրապնդել ու զարգացնել Իսրայելի կապն աշխարհի հրեական համայնքների հետ: Կենտրոնը տրամադրում է տեղեկատվություն և պարզաբանումներ Իսրայելի հետ կապված խնդիրների լայն շրջանակի շուրջ, մասնավորապես տուրիզմին, տարաբնույթ ծրագրերին, բարձրագույն կրթությանը, Իսրայելում աշխատելու և ապրելու փորձառությանը, հայրենադարձությանն ուղեկցող օժանդակության խնդիրներին, աշխատանքի տեղավորման, բնակարանի հնարավորությունների ու շատ այլ հարցերին առնչվող: Գործում է անվճար հեռախոսային ծառայություն աշխարհի բազմաթիվ երկրներից, էլեկտրոնային փոստ և ֆաքս: Իսկ եթե մի ինչ-որ վայրից անվճար հեռախոսակապը չի գործում, մարդիկ կարող են զանգահարել, թողնել իրենց հեռախոսահամարը, ու նրանց հետ կզանգահարի կենտրոնի աշխատակիցը 24 ժամվա ընթացքում²:

Մեկ այլ ծրագիր՝ «Առաջին տունը Հայրենիքում», արդեն 20 տարի շարունակ ամենահարմարավետ ու հաջողակ ադապտացիոն ծրագրի համարում ունի: Հազարավոր ընտանիքներ, որոնք Իսրայել են եկել ու սկզբից նեթ օգտվել են այս ծրագրից, այսինքն՝ սկսել են իրենց ճանապարհը կիբուցներում, այսօր եթե անգամ այնտեղ չեն բնակվում, դրանք համարում են իրենց տունը: Կիբուցը գյուղական վայրում գտնվող բնակավայր է, ըստ էության՝ կոմունա, որը գործում է տնտեսության համատեղ վարման սկզբունքով, ընդ որում՝ ոչ թե գյուղատնտեսության բնագավառում, ինչպես նախկինում էր, այլ առավելապես արդյունաբերական, տուրիստական և գիտահետազոտական ոլորտներում: Այս ծրագրով Իսրայել եկածներին հնարավորություն է ընձեռվում բնակվել կիբուցում մեկ տարի ու երկարացնել դրանում բնակվելը ևս մեկ տարով: Փորձը ցույց է տալիս, որ ընտանիքների առնվազն 50%-ը գերադասում է ևս

¹ Մանրամասն տե՛ս <http://www.jewishagency.org/JewishAgency/Russian/Aliyah/Babayit+Beyachad>

² Մանրամասն տե՛ս <http://www.jewishagency.org/JewishAgency/Russian/Home/Contacts/GC/>

մեկ տարի մնալը: Հայրենադարձներին տրամադրվում է բնակարան, որտեղ առկա են անհրաժեշտ կահույք, սառնարան, գազօջախ և այլն: Բնակվարձը տատանվում է՝ կախված բնակարանի չափերից, տեղից, ինչպես նաև նրանից, թե ինչ է ընդգրկված ամսական վարձի մեջ (ջուր, գազ, երբեմն նաև էլեկտրականություն): Բոլոր հայրենադարձներին՝ Իսրայել ժամանելուն պես, դիմավորում է Ծրագրի համակարգողը, տեղավորում է նախապատրաստված բնակարանում և օգնում բոլոր ձևակերպումների իրականացման մեջ: Հայրենադարձները Աբսորբցիայի նախարարությունից ստանում են որոշակի գումարներ, որից վճարում են բնակարանի, կոմունալ ծառայությունների, լվացքատան, մանկապարտեզի և դպրոցահասակ երեխաների արտադասարանային խմբակների վարձը: Ծախսերի խելամիտ պլանավորման պարագայում հայրենադարձների մոտ մնում են որոշակի խնայողություններ: Այսպիսով, ծրագիրը հայրենադարձների ուսերի վրայից հանում է կենցաղային հոգսերի զգալի մասը, հնարավորություն ստեղծելով ավելի շատ ժամանակ հատկացնել իվրիտ սովորելուն և աղապտացմանը: Ընդ որում, իվրիտի սովորելը տեղի է ունենում ոչ միայն դասարաններում, այլ նաև ամբողջ օրվա ընթացքում լեզվական միջավայրի մեջ խորասուզվելու ճանապարհով: Կիբուցների մանկական հաստատությունները գործում են մինչև ժամը 16-ը, այդ թվում նաև արձակուրդների օրերին, դրանք նույնպես սուբսիդավորվում են պետության կողմից: Ծրագրին մասնակցությամբ 14 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաներին հնարավորություն է տրվում ապրել ու սովորել գիշերօթիկ դպրոցներում պետության հաշվին: Եվ ամենակարևորը՝ ծրագիրը եզակի հնարավորություն է ընձեռում նորեկներին նոր երկրում իրենց միայնակ չզգալու և նոր ծանոթներ ու բարեկամներ ձեռք բերելու գործում: Ուղականներում համապատասխան կուրսեր անցնելուց հետո ծրագրի մասնակիցներին առաջարկվում է կամ մասնակցել մասնագիտական կուրսերին, կամ աշխատանքի ընդունվել: Կիբուցների մեծամասնությունում կան արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք աշխատանք են առաջարկում հայրենադարձներին: Բացի այդ, համակարգողներն օգնում են հայրենադարձներին աշխատանք գտնել տվյալ շրջանի տարածքում: Բոլոր կիբուցներում կան փոքր շուկաներ, որտեղից կարելի է ձեռք բերել ամենօրյա կյանքի համար անհրաժեշտ բոլոր մթերքները: Որոշ կիբուցներում կան նաև ճաշարաններ: Կիբուցներում կան նաև բուժհիմնարկներ, ուր ընդունում են տնային բժիշկներ ու բուժքույրեր: Մասնագիտական բժշկական ընդունելությունն իրականացվում է տարածաշրջանային կամ քաղաքային պոլիկլինիկաներում: Առաջին տարվա ընթացքում բուժսպասարկումն անվճար է¹:

¹ Մանրամասն տե՛ս <http://www.jafi.ru/JewishAgency/Russian/Aliyah/Kibbutzim/1/bait1+prog+gnrl>

Այսպիսով, ինչպես տեսանք, հայրենադարձության և արտաբնակների գործնականորեն գտնվում է բարձր մակարդակի վրա, և տասնամյակներ շարունակ արվում է ամեն ինչ այդ նշանակալի պահպանելու համար: Դրա վկայություններից մեկն էլ, ի պատիվ Իսրայել պետության գոյության 60 տարիների ընթացքում ավելի քան 3 մլն հայրենադարձների արտաբնակների, 2008թ. մայիսի 5-ը Ալիյայի (հայրենադարձության) միջազգային օր (*International Aliyah Day*) հռչակելն ու մեծ շուքով տոնելն էր¹: Կարծում ենք, որ նման օրվա հռչակումը հայոց պարագայում թույլ կտա ոչ միայն գնահատել քսաներորդ դարի ընթացքում շուրջ քառորդ միլիոն հայրենադարձների ներդրումը հայաստանյան տնտեսության և մշակույթի մեջ, այլ նաև հնարավորություն կընձեռի պարբերաբար անդրադառնալ հայրենադարձության տարաբնույթ խնդիրներին:

Դեկտեմբեր, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Эпштейн А., Казакова Н., Томилин А.*, Социологический анализ интеграции различных волн иммигрантов в израильском обществе: от прошлого – к настоящему. – В сб.: «Миграционные процессы и их влияние на израильское общество» (под ред. Эпштейна А. Д. и Федорченко А. В.), М., 2000.
2. *Масюкова И.*, Закон о возвращении: израильское общество и русскоязычная иммиграция в 90-х годах. – В сб.: «Миграционные процессы и их влияние на израильское общество», М., 2000.
3. *Մարության Հ.*, Հրեական հայրենադարձության փորձից. Ալիյա. 1., «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր, 2007, թիվ 13, էջ 31-34, նաև <http://www.noravank.am/am/?page=analitics&nid=821>: *Մարության Հ.*, Հրեական հայրենադարձության փորձից. Ալիյա. 2., «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր, 2007, թիվ 14, էջ 27-29:
4. *Moti Bassok*, Aliyah sees 9% dip from 2005. <http://www.haaretz.com/hasen/spages/828415.html>
5. Aliyah down 16 percent. – JTA The Global News Service of the Jewish People, December 22, 2008. <http://jta.org/news/article/2008/12/22/1001745/2008-aliyah-down-16>: Տե՛ս նաև Recent Aliyah Statistics and Trends: Director General Reports, <http://www.60israel.org/JewishAgency/English/Aliyah/About+Us/Aliyah+Statistics+and+Trends/>:
6. *Семенченко Н.*, Некоторые аспекты израильской политики абсорбции: от прошлого – к настоящему. – В сб.: «Миграционные процессы и их влияние на израильское общество», М., 2000.
7. *Котик-Фридгут Б.*, Динамика языковой ситуации и языковой политики в Израиле. – В сб.: «Миграционные процессы и их влияние на израильское общество», М., 2000.

¹ Ezra HaLevi. Monday Declared “International Aliyah Day”. <http://www.israelnationalnews.com/News/News.aspx/126054> Տե՛ս նաև Jewish Agency, Israel Immigrant Ministry Celebrate Aliyah Day 2008. <http://www.israelnewsagency.com/jewishagencyisraelaliyahday2008immigrationisrael60birthdayjcnfesh48050408.html>

ИЗ ИЗРАИЛЬСКОГО ОПЫТА РЕПАТРИАЦИИ И АБСОРБЦИИ

Арутюн Марутян

Резюме

В настоящее время в Армении в разных форматах обсуждаются проблемы репатриации. В этом смысле весьма важное значение придается опыту других народов. Особенно ценен опыт Государства Израиль, имеющего многолетнюю традицию организации репатриации и абсорбции. В статье подробно рассматриваются формирование, структура, образ действий, основные результаты деятельности Еврейского агентства (Сохнут), занимающегося организацией репатриации. Исследуются также направленные на абсорбцию различные программы образовательной, информационной, финансовой, экономической, психологической помощи и содействия, их эффективность.

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Վաչե Քալաշյան

Հողվածում փորձ է արվել հանրային հարաբերություններում ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների ներդաշնակման էությունը հիմնավորել էթիկայի կանոնների և օրենսդրության հավասարակշռության միջոցով: Անդրադարձ է կատարվել Հայաստանի Հանրապետության միջազգային հանձնառությունների շրջանակներում, մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի (ԵԽ) Նախարարների կոմիտեի կողմից առաջադրված հանրային ծառայողների մոդելային վարքականոնի տեղայնացման պարտավորությանը, պետական կառավարման համակարգում միասնական վարքականոնի ընդունման հնարավոր ուղիներին և կիրարկման մեխանիզմներին: Առաջարկվել է ՀՀ Հանրային ծառայողի օրինակելի վարքականոնի տարբերակ, որը խարսխված է մի կողմից՝ ՀՀ պետական կառավարման համակարգի յուրահատկությունների և մյուս կողմից՝ ԵԽ կողմից առաջադրված հանրային ծառայողի մոդելային վարքականոնում ամրագրված դրույթների վրա:

Ներածություն

ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության տեխնիկական առաջադրանքի 3-րդ գլխի 3.1 ենթակետի՝ «Կոռուպցիայի կանխարգելման միջոցները» բաժնում էթիկայի կանոնները և դրանց կիրարկման մեխանիզմները համարվում են ինքնահսկման միջոցներ և այդպիսով անուղղակիորեն կազմում են մոնիթորինգի համակարգի մի մասը: Ներկա դրությամբ, Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայողների համար էթիկայի կանոնները մշակվել և ընդունվել են ապակենտրոն սկզբունքին համաձայն՝ բաշխված լինելով ըստ տարաբնույթ հանրային ծառայությունների: Գոյություն ունեցող էթիկայի կանոններն ընդհանուր առմամբ ունեն քարոզչական բնույթ, իսկ որոշ դրույթներով էլ առնչվում են կարգապահական կանոնակարգմանը ենթակա նորմերին: Առկա էթիկայի կանոնակարգերը չեն շոշափում կոռուպցիոն ռիսկերին առնչվող պետական պաշտոնյաների վարքաբանությունը և չեն լրացնում օրենսդրությամբ կարգավորվող նորմատիվ, ֆորմալ, դաշտից դուրս գտնվող ոչ ֆորմալ փոխհարաբերություններն ինչպես հանրային ծառայությունների ներ-

սում, այնպես էլ քաղաքացիների հետ ունեցած շփումներում: Այս փաստաթղթի հավելված 1-ում ներկայացվել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայություններում էթիկայի կանոնների և շահերի բախման առկա իրավիճակը: Նույն հավելվածում ներկայացված են հանրային ծառայողների վարքագծի կանոնների կիրարկման նպատակով էթիկայի հանձնաժողովների ստեղծման հետ կապված որոշակի նկատառումներ, որոնց համար իբրև մոդելային տարբերակ է ընդունվել ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից ամրագրված էթիկայի հանձնաժողովների օրինակելի կանոնադրությունն ու նախկինում տեղ գտած փորձը:

Ամփոփելով տարաբնույթ պետական ծառայություններում ընդունված պետական պաշտոնյաների վարքագծի կամ էթիկայի կանոնների բովանդակային և կառուցվածքային վերլուծությունը, մասնավորապես՝ քաղաքացիական ծառայողի, դիվանագետի, համայնքային ծառայողի էթիկայի կանոնները և դատական ծառայողի, աուդիտի ու հարկային ծառայողի վարքագծի կանոնները, եզրակացվել է, որ անհրաժեշտ է մշակել և ներդնել նոր կանոնագրքեր (բացառությամբ դիվանագիտական ծառայության)՝ ապահովելու համար դրանց համադրելիությունը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված և GRECO մասնակից երկրներին առաջադրված «Հանրային ծառայողների վարքագծի կանոնների»¹ մոդելային տարբերակի հետ: Այդ նպատակով այս փաստաթղթում պարզաբանվել են ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից ընդունված փաստաթղթի բովանդակային դրույթներն ու ինստիտուցիոնալ առաջադրանքները և դրանց հիման վրա ներկայացվել է «ՀՀ Հանրային ծառայողի էթիկայի մոդելային կանոնների» նախագիծ (*Հավելված 2*): Փորձագիտական եզրակացության երկրորդ բաժնում պարզաբանվել է ՀՀ Հանրային ծառայողի մոդելային վարքականոնի բովանդակային էությունը:

1. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից առաջադրված Հանրային ծառայողների վարքագծի մոդելային կանոններն ու դրա կիրարկման երաշխավորությունները

Գիտակցելով, որ արդյունավետ գործող պետության հիմքը հուսալի պետական կառույցների ստեղծումն է, Հայաստանը 2004թ. հունվարին միացավ Եվրոպական «Անցումային տնտեսության հակակոռուպցիոն խումբ» կառույցին (GRECO): Չնայած գոյություն ունեին էթիկայի կանոնների եվրոպական մոդելներ, հասարակական գիտակցության բարձրացմանը զուգընթաց՝ էթիկական վարքի արժևորումը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման կարևորագույն միջոց, և եվրոպական պետությունների կողմից ընդունված պետական վար-

¹ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի H. R (2000) 10 որոշման հավելված:

չական օրենքի բոլոր օրինակները վկայում էին, որ պետական մարմինների տարաբնույթ կատեգորիաների համար անհրաժեշտ է էթիկայի համընդհանուր կանոնների ամրագրում: Ելնելով այդ անհրաժեշտությունից՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, նկատի ունենալով Հ. R (97) 24 որոշման՝ կոռուպցիայի դեմ պայքարի քսան ղեկավարող սկզբունքները, 2000թ. ընդունեց և իր որոշմամբ երաշխավորեց, որ անդամ պետությունների իշխանությունները ներքին օրենսդրությանը և հանրային ծառայողների սկզբունքներին համապատասխան, ընդունեն հանրային ծառայողների վարքագծի ազգային կանոններ՝ հիմնված այդ որոշմանը կցված պետական ծառայողների օրինակելի վարքականոնի վրա, իսկ որոշման կատարման վերահսկումը հանձնարարվեց Կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խմբին (*GRECO*):

Հարկ է նշել, որ 2000թ. Եվրոպական խորհրդի ներկայացրած «Պետական պաշտոնյաների վարքի օրինակելի կանոնները» փաստաթուղթը, որը ՀՀ կառավարության կողմից ընդունվել է *GRECO*-ի առաջարկությունների շրջանակներում, միևնույն ժամանակ Եվրոպական հարևանության ծրագրի դրույթներով նույնպես կարևորում է ՀՀ քաղաքացիական ծառայությունում էթիկայի կանոնների խթանումը, իբրև հակակոռուպցիոն միջոցառում¹:

Առաջադրված որոշումը կազմված է երեք մասից: Առաջին մասը կրում է հոչակագրային բնույթ և նկարագրում է ընդհանրական էթիկական չափորոշիչներ ամրագրելու եվրոպական երկրների ձգտումները: Երկրորդ մասում ներկայացված են հանրային ծառայողների վարքագծի մոդելային կանոնները, իսկ երրորդ մասում, որ կոչվում է «Բացատրական հուշագիր», ներկայացված են ինչպես մոդելային վարքականոնի կիրարկման երաշխավորությունները, այնպես էլ դրա բովանդակային մեկնաբանությունները: Ելնելով այն հանգամանքից, որ երրորդ մասը կրում է խորհրդատվական բնույթ, առաջարկում ենք այն պաշտոնապես ընդունել իբրև ուղեցույց ու տեղական հանրային ծառայություններում պետական պաշտոնյաների վարքագծի կանոնները վերահսկող և ուղղորդող մարմինների (օր. էթիկայի հանձնաժողովներ կամ Ոստիկանական ծառայության պարագայում՝ պատվո դատարաններ)² խորհրդատվական գործառնության ապահովմանն անհրաժեշտ գործիք: Չնայած ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից առաջադրված երաշխավորություններում ուղղակիորեն չի արձարծվում կանոնագրքի իրականացման ու վերահսկման նպատակով առանձնացված ստորաբաժանման ստեղծումը, սակայն էթիկայի կանոնների կիրարկումն ապահովող մարմինների առկայությունն ինքնին բխում է ԵԽ մոդելային վարքականոնի պահանջների կատարումն ու պատժամիջոց-

¹ Եվրոպական հարևանության ծրագրի 5.5 դրույթ. ՀՀ կառավարությունը ստանձնել է ծրագրով նախատեսված երաշխավորությունները:

² ՀՀ ՔՕԽ թիվ 1050-Ն որոշմամբ հաստատված էթիկայի հանձնաժողովների կանոնադրությունը («Ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 6-9 հ.):

ներն ամրագրող 22-րդ հոդվածի դրույթներից, մասնավորապես՝ «Սույն Կանոնագիրքն ընդունվում է հանրային ծառայության համար պատասխանատու նախարարի կամ դեկավարի հրամանով: Հանրային պաշտոնյան պարտավոր է իր գործունեության ընթացքում պահպանել սույն Կանոնագիրքը և տեղեկացված մնալ վերջինիս դրույթներին և դրանցում կատարվող բոլոր փոփոխություններին: Եթե հանրային ծառայողը վստահ չէ, թե ինչպես վարվել, նա պարտավոր է խորհուրդ ստանալու նպատակով դիմել համապատասխան անձանց» (հոդված 22, 1-ին կետ): Բացի նշված դրույթից, ԵՄ մոդելային կանոնագրքում առկա են մի շարք հոդվածներ, որոնք չեն կրում նորմատիվային բնույթ և որպես խորհրդատվական ուղենիշեր, մեր կողմից առանձնացվելով, ներառվել են սույն փաստաթղթի հավելված 1-ում ներկայացված էթիկայի հանձնաժողովների գործառույթներում:

Քանի որ, մնացած մասով, ԵՄ Նախարարների կոմիտեի կողմից ընդունված՝ հանրային ծառայողների մոդելային վարքականոնի հոդվածների բովանդակային բաշխվածությունը կրում է հախուռն (սպոնտան) բնույթ, մեր կողմից առաջարկվել է դրանք դասակարգել ըստ նորմատիվային երեք ուղղությունների՝ պատվիրակող, կանխարգելող ու խրախուսող, այնուհետև խմբավորելով ըստ գործառության նույնական հատկանիշների ներկայացվել է «ՀՀ հանրային ծառայողների մոդելային վարքականոնի» նախագիծ (*Հավելված 2*): Նմանօրինակ մոտեցումը պայմանավորված է եղել նաև նրանով, որ *GRECO-ի* երաշխավորություններով անդամ պետությունների իշխանությունները պարտավորվում են ներքին օրենսդրությանը և հանրային ծառայողների սկզբունքներին համապատասխան ընդունել հանրային ծառայողների վարքագծի ազգային կանոններ՝ հիմնված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի H. R (2000) 10 որոշմանը կցված հանրային ծառայողների օրինակելի վարքականոնի վրա:

Առաջարկվել է, որ պետական ծառայողների էթիկայի կանոնների մեծ մասը ներառեն հետևյալ յոթ կատեգորիաները՝

1. Ֆունդամենտալ, հասկանալի սահմանափակումներ, օր.՝ շահերի բախում կամ պաշտոնեական դիրքով պայմանավորված արտոնությունների և ռեսուրսների՝ անձնական նպատակներով օգտագործելու անթույլատրելիություն: Ընդ որում՝ «Պաշտոնական դիրքի չարաշահումը անձնական շահերի ազդեցությունն է այն պարտականությունների վրա, որոնք հանրային ծառայողը պետք է կատարի օբյեկտիվ և նվիրվածությամբ»¹:
2. Շահերի և ֆինանսական կարգավիճակի հայտարարագրում՝ «Հանրային ծառայողը, որն այնպիսի դիրք է գրավում, որտեղ իր անձնական

¹ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի H. R (2000) 10 որոշմանը կից «Հանրային ծառայողների օրինակելի վարքականոն», հոդված 13, կետ 1:

շահերը հնարավոր է, որ բախվեն իր պաշտոնական պարտականություններին, պետք է օրենքով նախատեսված կարգով հայտարարի մինչև նշանակումը և յուրաքանչյուր անգամ, երբ դրան նպաստող փոփոխություններ տեղի ունենան»¹:

3. Խախտումների/անհամապատասխանության չափորոշիչների առաջացում, օր.՝ Հանրային ծառայողը չպետք է ներգրավված լինի որևէ գործունեության կամ պայմանավորվածության մեջ կամ ձեռք բերի որևէ դիրք կամ գործառույթ, լինի դա վճարովի թե ոչ, որն անհամատեղելի է իր պարտականությունների բարեխիղճ կատարման հետ: Երբ պարզ չէ, թե արդյոք գործողությունը համատեղելի է թե ոչ, հանրային ծառայողը պետք է խորհուրդ հարցնի իր վերադասից (մեր կողմից՝ կամ վարքականոնի կիրարկումը վերահսկող մարմնից, օր.՝ Էթիկայի հանձնաժողովից)²:
4. Հետազոտական և խորհրդատվական իրավասություններով օժտված անաչառ հանձնաժողով:
5. Լրացուցիչ սահմանափակումներ (եկամտից դուրս, հետաշխատանքային գործունեություն):
6. Քրեական պատժամիջոցներ և վարչական տույժեր:
7. Տուժողի/բողոքարկողի և աշխատողի ընթացակարգային պաշտպանություն:

2. ՀՀ Հանրային ծառայողի մոդելային վարքականոնի բովանդակային մեկնաբանությունները

Ստորև ներկայացված են հանրային ծառայողների էթիկայի կանոնները, որոնք մշակվել են Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից առաջադրված հանրային ծառայողների մոդելային վարքականոնի հիման վրա: Այս կանոնները կրում են մոդելային բնույթ, և ուժի մեջ մտնելուց առաջ կառավարությունը պարտավոր է հանրային ծառայողներին տեղեկացնել դրանց պայմանների մասին³:

Վարքականոնը պետք է հանրային ծառայողի գործունեությունը կարգավորող պայմանների մաս կազմի այն պահից սկսած, երբ հաստատվում է, որ նա տեղեկացվել է Վարքականոնի մասին: Յուրաքանչյուր հանրային ծառայող պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները վարքագծի պայմանները կյանքի կոչելու համար:

«ՀՀ Հանրային ծառայողի էթիկայի մոդելային կանոնները» ուղենիշային փաստաթուղթ է, որը հնարավորություն է ընձեռում աշխատակցին և քաղաքացուն կողմնորոշվել այնպիսի բարդ իրավիճակներում, որոնք չեն կարգավորվում օրենսդրական նորմերով: Հետևաբար, այդ կանոններն անընդհատ գտնվե-

¹ Նույն տեղում, հոդված 14:

² Նույն տեղում, հոդված 13:

³ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի H. R (2000) 10 որոշման դեկլարացիա:

լու են աշխատակազմերի ուշադրության ներքո: Կյանքով թելադրված նոր իրավիճակները նույնպես պետք է ներառվեն այդ փաստաթղթում: Այնպես որ, էթիկայի կանոններն անընդհատ լրամշակման և հղկման կարիք են ունենալու: Այդ գործընթացին մասնակից դարձնելով ողջ անձնակազմին՝ էթիկայի հանձնաժողովները կյանքի են կոչելու էթիկական վարքագիծը թե՛ պետական ծառայողների և թե՛ քաղաքացիների հետ նրանց փոխհարաբերություններում:

Ընդհանուր առմամբ, ներկայացված վարքականոնը բաղկացած է յոթ բաժիններից, որոնք թույլ են տալիս դասակարգել երեք հիմնական փոխհարաբերություններում առկա էթիկական նրբերանգները, դրանք են՝ քաղծառայող-քաղծառայող (հորիզոնական), քաղծառայող-վերադաս (ուղղահայաց) և պետական մարմին-քաղաքացի փոխհարաբերությունները:

Առաջին բաժինը *նախաբանն է*, որտեղ հիմնավորվում է էթիկայի կանոնների գոյությունն ընդհանրապես և ցույց է տրվում, որ էթիկայի կանոնների պահպանման հիմնական գրավականը քաղաքացիական ծառայողի ընդունած երդումն է:

Երկրորդ բաժինը կոչվում է *ծառայություն պետական շահերին*, այն նախնական պատկերացում է տալիս պետություն-քաղաքացիական ծառայող փոխհարաբերության արժեքային բովանդակության մասին՝ հիմք ընդունելով պետական շահի առկայությունն ու գերակայությունը: Այս բաժինը կարևորվում է նաև նրանով, որ նույնիսկ համընդհանուր պետական շահի բացակայության դեպքում պետաձառայական համակարգում նշված վարքագծի առկայությունը կարող է հանգեցնել պետական շահերի ձևավորմանը:

Երրորդ բաժինը կոչվում է *ծառայություն հանրային շահերին*, այն նկարագրում է հասարակության տարբեր խմբերի և քաղաքացիների հետ հարաբերության մեջ գտնվող պետական պաշտոնյաների վարքագծի ուղենիշերը՝ որպես հիմք ընդունելով արդարության և իրավահավասարության սկզբունքները: Հատկապես ընդգծված է պետության հանդեպ քաղաքացիների հավատի և վստահության կախվածությունը քաղաքացիական ծառայողների հոգատարության և նրբանկատության աստիճանից:

Չորրորդ բաժինը՝ *բարոյական ընդհանուր սկզբունքների պահպանումը*, ներկայացված է քաղաքացիական ծառայության մասնագիտական յուրահատկությունների լույսի ներքո: Ընդգծված է, որ քաղաքացիական ծառայողը, ղեկավարվելով հումանիզմի և արդարության սկզբունքներով, պետք է օժտված լինի պարտքի զգացումով և սեփական պարտականությունների կատարման պատասխանատվությամբ:

Հինգերորդ բաժինն արձանագրում է *շահախնդիր գործողությունների անթույլատրելիությունը*: Այստեղ նշվում են այն հնարավոր դեպքերը, որոնք կարող են հանգեցնել կոռուպցիայի և շահախնդիր հովանավորչության, ինչպես նաև ընդգծվում է նմանօրինակ վարքագծի անթույլատրելիությունը: Այս բաժնի արժեքային բովանդակությունը խարսխված է քաղաքացիական ծառայողի

արտոնությունների և պարտավորությունների հավասարակշռության վրա:

Վեցերորդ բաժինը *ծառայողական պարտականությունների կատարումը* բնորոշող էթիկական նորմերի հավաքածու է: Այն անդրադառնում է պետական պաշտոնյայի պաշտոնի անձնագրից բխող պարտավորությունների կատարման անհրաժեշտությանը, այդ պարտականությունների կատարմանը աշխատանքային ժամանակի անմնացորդ նվիրաբերմանը, գործընկերների մասնագիտական կատարելագործմանը նպաստելուն և պաշտոնեական առաջխաղացումը բարոյական միջոցներով ապահովելուն: Այս բաժնի արժեքային հիմնախարիսիւրը *փոխօգնության և մրցակցության միջև հավասարակշռվածության ապահովումն է:*

Յոթերորդ բաժինը կոչվում է *կոլեգիալ վարք*, այստեղ ներկայացված են քաղաքացիական ծառայողի վարքագծի այն էթիկական նորմերը, որոնք օժանդակում են տվյալ պետական կառավարչական հիմնարկում կորպորատիվ շահի ձևավորմանը: Ընդգծված են աշխատակիցների հետ հնարավոր փոխշփումների կոռեկտությունը և կոլեկտիվի ավանդույթների պահպանումը: Այս բաժնի արժեքային բովանդակությունը խարսխված է *մասի և ամբողջի միջև գոյություն ունեցող անքակտելի կապերի վրա:*

Հոկտեմբեր, 2008թ.

ЭТИЧЕСКИЕ КАНОНЫ ГОССЛУЖАЩИХ РА И ИХ ПРИМЕНЕНИЕ В ПРОЦЕССЕ ПРЕДОТВРАЩЕНИЯ КОРРУПЦИИ

Ваче Калашян

Резюме

В предлагаемой статье обоснование сущности гармонизации формальных и неформальных аспектов общественных отношений сводится к установлению баланса между этическими нормами и законодательством. Обращаясь к международным обязательствам Республики Армения – в частности, к локализации образцовой модели этических норм государственных служащих, предложенного комитетом министров при Совете Европы (СЕ), рассмотрены возможные пути принятия и имплементации единых норм поведения в сфере системы государственного управления. В конечном итоге, предлагается образцовый вариант этических норм поведения государственных служащих, основанный, с одной стороны, на специфике системы государственного управления РА и основополагающих принципах модельных норм поведения предложенного со стороны СЕ – с другой.

Հավելված 1**Նկատառումներ Պետական ծառայության համակարգում
Էթիկայի հանձնաժողովների վերաբերյալ*****Առկա իրավիճակը***

1. Ինչպիսի՞ դեր է վերապահված էթիկայի հանձնաժողովներին քաղաքացիական ծառայողի վարքականոնի պահպանմանն ուղղված մոնիթորինգի կազմակերպման գործում:

Հանձնաժողովների հիմնական խնդիրն է՝

- Քննության առնել իրեն ուղղված հարցերը
- Քննարկվող հարցերի վերաբերյալ ընդունել որոշումներ
- Համապատասխան մարմնում պարբերաբար անցկացնել սոցիոլոգիական հետազոտություններ և կատարել վերլուծություններ
- Խորհրդի և համապատասխան մարմնի աջակցությամբ անցկացնել ուսումնասիրություններ և ներկայացնել առաջարկություններ
- Ընդունել շահերի հայտարարագրերը և հետևել դրանց պահպանմանը:

2. Ովքե՞ր են նախարարություններում ստեղծված էթիկայի հանձնաժողովների անդամները:

Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝

- Խորհրդի երկու ներկայացուցիչներ
- Համապատասխան մարմնի երկու ներկայացուցիչ, որոնցից մեկը՝ քաղաքացիական ծառայող
- Տվյալ բնագավառի հասարակական միավորումների մեկ ներկայացուցիչ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով
- Հայ Առաքելական եկեղեցու մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ):

3. Ովքե՞ր և ինչպե՞ս կարող են դիմել էթիկայի հանձնաժողովներին այս կամ այն կոնկրետ դիպվածը քննարկելու համար:

Հանձնաժողովի քննարկմանը հարցեր կարող են ներկայացնել՝

- Քաղաքացիական ծառայության խորհուրդը
- Համապատասխան մարմնի ղեկավարը
- Համապատասխան մարմնի աշխատողները
- Հանձնաժողովի անդամները
- Հասարակական միավորումները
- Այլ ֆիզիկական և իրավաբանական անձինք

Հանձնաժողովի քննարկմանը հարցերը ներկայացվում են գրավոր դիմումով: Հանձնաժողովում գրավոր դիմումը պարտադիր ենթակա է քննության:

Հանձնաժողովում հարցերը ենթակա են քննարկման և որոշումների կայացման

15-օրյա ժամկետում: Անհրաժեշտության դեպքում այդ ժամկետը Հանձնաժողովը կարող է երկարաձգել, բայց ոչ ավելի, քան մեկ շաբաթ:

4. Ո՞րն է Էթիկայի հանձնաժողովի մանդատը, ինչպիսի՞ որոշումներ այն կարող է կայացնել և արդյո՞ք կան ոլորտներ, որոնք գտնվում են հանձնաժողովի իրավասությունից դուրս:

Հանձնաժողովի որոշումները՝

- Հանձնաժողովի որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ: Այդ որոշումները կարող են բովանդակել խրախուսող և կամ պարսավող գնահատական:
- Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց կամ փակ գաղտնի քվեարկությամբ՝ Հանձնաժողովի նիստին մասնակցած Հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:
- Հանձնաժողովի որոշումները, դրանք կայացնելուց հետո եռօրյա ժամկետում, տրամադրվում են այն անձին, ում ներկայացմամբ քննարկվել է հարցը և ում հետ կապված է հարցի քննությունը, շահագրգիռ այլ անձանց, համապատասխան մարմին, Խորհրդին:
- Համապատասխան մարմինը և Խորհուրդը Հանձնաժողովի որոշումները քննարկելու և միջոցներ ձեռնարկելու մասին տեղեկացնում են հանձնաժողովին:
- Հանձնաժողովի որոշումները հրապարակվում են համապատասխան մարմնում:
- Հանձնաժողովը կարող է որոշումները հրապարակել մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով:
- Հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Հանձնաժողովի իրավասությունից դուրս է քրեական, վարչական, կարգապահական և այլ իրավական պատասխանատվություն առաջացնող հարցերի քննարկումը:

***Էթիկայի հանձնաժողովների զարգացման ուղենիշերը
հակակոռուպցիոն ռազմավարության տեսանկյունից***

Հայաստանի Հանրապետության պետական ծառայության համակարգում Էթիկայի հանձնաժողովների (ԷՀ) գործառնությունը ԵՖ Նախարարների կոմիտեի առաջադրած պահանջներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ կազմակերպական միջոցառումները պետք է կատարվեն ՀՀ օրենսդրության շրջանակներում և ներդաշնակ լինեն ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական դաշտի հետ¹, որոնք պայմանավորված են, մասնավորապես, «Քաղաքացիական ծառայության մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին», այլ ծառայությունների մասին ՀՀ օրենքներով, «Քաղաքացիական ծառայությունում Էթիկայի հանձնաժողովների օրինակելի կանոնադրությամբ» և այլն:

Ելնելով այն հանգամանքից, որ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի (ը) ենթակետով Քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հաս-

¹ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի H. R (2000) 10 որոշման դեկլարացիա:

Էթիկայի հանձնաժողովի գործառնությունները

1. Հանձնաժողովի որոշումներին պետք է տալ պարտադիր կատարման և պարտավորեցնող բնույթ, որը կպարունակի նաև խրախուսող և/կամ պարսավող գնահատական, ինչը կարող է հիմք հանդիսանալ հանրային ծառայողի նկատմամբ սանկցիաներ կիրառելիս:
2. Հանձնաժողովին պետք է հնարավորություն տալ կայացված որոշումները հրապարակելու մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով:
3. Հանձնաժողովը պետք է իրավասու լինի նաև պարբերաբար անցկացնելու սոցիոլոգիական հետազոտություններ/մոնիթորինգ, մասնավորապես՝ հանրային ծառայողների շահերի հայտարարությունների վերահսկման իմաստով, և քաղաքացիական ծառայության կազմակերպման, ու ղեկավարման մարմիններին ներկայացնի համապատասխան առաջարկություններ:
4. Հանձնաժողովը պետք է խորհրդատվություններ ներկայացնի հանրային ծառայողներին իրենց ամենօրյա աշխատանքում էթիկական ու մասնագիտական չափորոշիչների պահպանմանն ուղղված և ԵՄ Նախարարների կոմիտեի երաշխավորությունների¹ կիրարկման նպատակով, մասնավորապես՝
 - ա) եթե հանրային ծառայողը կասկածում է՝ ընդունել նվերը կամ հյուրընկալությունը, դիմում է ԷՀ խորհրդին,
 - բ) եթե հանրային ծառայողը ստանում է անհարկի օգուտ ձեռք բերելու առաջարկ, նրան պետք է ԷՀ-ի կողմից խորհրդատվության կարգով ներկայացվեն ձեռնարկվելիք հետևյալ գործողությունները՝
 - մերժել անհարկի օգուտը, ընդ որում՝ անհրաժեշտ չէ այն ընդունել հետագայում որպես ապացույց օգտագործելու նպատակով,
 - փորձել պարզել առաջարկ ներկայացնողի ինքնությունը,
 - խուսափել տևական շփումներից, սակայն հաշվի առնել, որ առաջարկի պատճառն իմանալը կարող է օգտակար լինել որպես ապացույց,
 - եթե նվերը չի կարող մերժվել կամ վերադարձվել ուղարկողին, ապա այն պետք է պահպանել՝ հնարավորին չափ քիչ դիպչել դրան,
 - հնարավորության դեպքում ապահովել վկաներ, ինչպիսիք են, օրինակ, մոտակայքում աշխատող գործընկերները,
 - հնարավորին չափ շուտ կազմել փորձի վերաբերյալ գրավոր արձանագրություն, ցանկալի է՝ պաշտոնական գրառումների մատյանում,
 - փորձի մասին հնարավորին չափ շուտ զեկուցել ղեկավարին կամ ուղղակիորեն՝ համապատասխան իրավապահ մարմնին,
 - շարունակել բնականոն աշխատանքը, հատկապես այն խնդրի ուղղությամբ, որի առնչությամբ առաջարկվել է անհարկի օգուտը,
 - գ) եթե հանրային ծառայողը տատանվում է այնպիսի տեղեկատվության տրամադրման հարցում, որը նրան հայտնի տեղեկություններով կամ հավաստի հիմքերով կասկածի տեղիք է տալիս, կեղծ է կամ ապակողմնորոշող,

¹ Ներկայացված խորհրդատվությունները համապատասխանում են ԵՄ Նախարարների կոմիտեի կողմից առաջադրված հանրային ծառայողի օրինակելի վարքականոնի 18, 19, 22-ի 4-րդ կետի երկրորդ մաս, 25-ի 2-րդ կետ և 28-ի 4-րդ կետով ամրագրված հոդվածներին:

դ) եթե այլ հանրային ծառայողներին վերահսկող կամ կառավարող պաշտոնյան չի ձեռնարկում ողջամիտ քայլեր՝ իր հիմնարկի աշխատանքներում կանխելու կոռուպցիան: Այդ քայլերը կարող են ներառել կանոնների և կանոնագրքերի կարևորության ընդգծումը և կիրարկումը, համապատասխան կրթության կամ վերապատրաստման իրականացումը, իր աշխատակիցների ֆինանսական կամ այլ ղեկավարություններին տեղեկացված լինելը և իր վարքով որպես անաչառության և ազնվության օրինակ ծառայելը,

ե) եթե այլ հանրային ծառայողների վերահսկող կամ կառավարող պաշտոնյան չի ապահովում նրանց կողմից հանրային ծառայողի վարքականոնի պահանջների կատարումը և խախտումների դեպքում համապատասխան կարգապահական վարույթի հարուցումը:

Էթիկայի հանձնաժողովի ձևավորման և աշխատանքի ընթացակարգերը

1. Հանձնաժողովի կազմավորումը, կրելով պարտադիր բնույթ, թողնվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մարմինների հայեցողությանը:
2. Հանձնաժողովում կարող են ընդգրկվել խորհրդի, համապատասխան մարմնի, տվյալ բնագավառի հասարակական միավորումների և գիտական հաստատությունների հավասար թվով ներկայացուցիչներ, տվյալ պետական կառավարչական մարմնի անձնակազմի կողմից ուղիղ ընտրությունների ճանապարհով:
3. Հանձնաժողովի գործունեության ժամկետը կարելի է սահմանել մեկ տարի, իսկ նրա անդամների մասնակցությունը՝ հասարակական հիմունքներով:
4. Հանձնաժողովի ծախսերի կատարումը կարող է իրականացվել օրենքով չարգելված միջոցներով:
5. Հանձնաժողովի քննարկմանը հարցեր ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը կարելի է չսահմանափակել:
6. Հանձնաժողովի անհատական կազմը և կանոնադրությունը հաստատվում են ՀՀ կառավարության կողմից, տվյալ մարմնի ներկայացմամբ:

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայողի օրինակելի վարքականոն (նախագիծ)

Նախաբան

Պետական ծառայողների վարքականոնը համընդհանուր բարոյական սկզբունքների և դրանց վրա հիմնված պարտավորությունների ու պահանջների համակարգ է:

Բարոյական վարքականոնը սահմանում է հանրապետական, տեղական կառավարման, ինչպես նաև ինքնակառավարման մարմինների համակարգում պետական պաշտոններ զբաղեցնող անձանց բարոյական վարքի նորմերը: Վարքականոնի պայմանները չեն տարածվում հասարակության կողմից ընտրված ներկայացուցիչների, կառավարության անդամների և դատական գրասենյակների ղեկավարների վրա:

Պետական ծառայողի վարքականոնը կոչված է նպաստելու պետական հաստատությունների հանդեպ քաղաքացիների վստահության և պետության հեղինակության ամրապնդմանը, ապահովելու պետական կառուցվածքների համաձայնեցված և արդյունավետ գործողությունները՝ նպատակ ունենալով հասարակությունում բարոյական մշակույթի անկմանը հակազդող միասնական բարոյաիրավական հիմքի ստեղծումը:

Հանրային ծառայողն օբյեկտիվորեն հանդես է գալիս թե՛ իբրև պաշտոնատար անձ, որը զբաղեցնում է որոշակի տեղ ծառայողական հիերարխիայում, թե՛ իբրև հասարակական գործիչ, որը ներագրում է սոցիալական և տնտեսական գործընթացների զարգացման վրա, թե՛ իբրև անձնակազմի ղեկավար, ինչպես նաև մասնավոր անձ: Տվյալ դերերը կարող են հակասել իրար՝ որպես հետևանք առաջացնելով այնպիսի բարոյական երկրնորանքներ և բախումներ, որոնք ոչ միշտ են գտնում իրենց պարզ ու միանշանակ լուծումները:

Վարքականոնում հնարավոր չէ կանխատեսել պետական ծառայողի պրակտիկ գործունեության ընթացքում առաջացող բոլոր ելևէջները: Վարքականոնի նորմերը չեն փոխարինում անձնական բարոյական ընտրությանը, մարդու կողմնորոշումներին և համոզմունքներին, խղճին և պատասխանատվությանը:

Պետական ծառայությունն արտոնություն չէ: Հանրային ծառայողը, անցնելով պետական ծառայության, կամովին սահմանափակում է իր ազատության աստիճանը, մասնավորապես՝ քննադատության, ձեռնբերելության, ընտրական և այլն:

Դա պայմանավորված է նրանով, որ պետական ծառայողի բարոյական նորմերն ավելի խիստ են, քանի որ պետական պաշտոնյաները, պետական մարմինների անձնակազմի և այլ կարգի պետական ծառայողներն օբյեկտիվորեն օժտված են ավելի մեծ իշխանությամբ և լիազորություններով: Ինստիտուցիոնալ իշխանությունը վճռական գործոն է հասարակության գործնական նպատակների և բարոյական իդեալների իրականացման մեջ: Պետական ծառայողի կարգավիճակի բարձրացմանը զուգահեռ՝ բարոյական պահանջները և պատասխանատվությունը խստանում ու մեծանում են:

1. Ծառայություն պետական շահերին

1.1. Պետական ծառայությունը լիազորությունների իրականացում է, որի միջոցով պաշտոնատար անձը պետության անունից իրացնում է նրա գործառնությունները:

Հասարակության, հայրենիքի և պետության շահերը պետական ծառայության պրոֆեսիոնալ գործունեության բարձրագույն չափանիշն ու վերջնական նպատակն են:

Պետական ծառայողի բարոյական, քաղաքացիական և պրոֆեսիոնալ պարտքն է՝ ղեկավարվել պետական շահերով, պաշտպանել դրանք գործնական որոշումների ընդունման և իրացման գործընթացում:

1.2. Հանրային ծառայողը պարտավոր է իր գործերով պահպանել և պաշտպանել երկրի Սահմանադրությունը և Հայաստանի Հանրապետության այլ օրենքները, անհրաժեշտության դեպքում նպաստել դրանց կատարելագործմանը:

Հանրային ծառայողն իր առաջարկություններով, գործողություններով և որոշումներով պետք է ամրապնդի պետական իշխանության հեղինակությունը:

1.3. Հանրային ծառայողը պարտավոր է պահպանել լոյալության սկզբունքը՝

- իշխանության բոլոր ճյուղերի,
- պետական ինստիտուտների,
- իշխանության գլուխ կանգնած քաղաքական մեծամասնության,
- օրենքի շրջանակներում գործող այլ քաղաքական և հասարակական միավորումների,
- այլ պետական ծառայողների նկատմամբ:

1.4. Հանրային ծառայողը պետք է խուսափի պետական իշխանության հետ բախումների մեջ մտած անձանց հետ գործնական շփումներից:

1.5. Հանրային ծառայողը չպետք է ելույթ ունենա զանգվածային լրատվության միջոցներով, մասնակցի հարցազրույցների և ցանկացած այլ եղանակներով արտահայտի կարծիք, որը սկզբունքորեն կարող է տարբերվել պետական քաղաքականությունից ամբողջությամբ կամ այն պետական մարմնի քաղաքականությունից, որի շահերը նա ներկայացնում է իբրև պաշտոնատար անձ:

Հանրային ծառայողը պարտավոր է բանավիճել կոռեկտ ձևով՝ առանց հեղինակագրկելու պետական ծառայությունը:

Հանրային ծառայողն իրավունք չունի՝

- պետական շահերը ստորադասել անհատների կամ խմբերի մասնավոր շահերին,
- գործել ի վնաս պետության՝ ելնելով մասնավոր շահերից,
- կախվածության մեջ դնել ծառայողական պարտավորությունների իրականացումն անձնական շահագրգռությունից:

1.6. Հանրային ծառայողը պետք է ձգտի պետական մարմիններում ազգային ոգու հաստատմանը և անձամբ չգործի քաղաքացիական զգացմունքները վիրավորող,

պետական քաղաքականության մասին պատկերացումներն աղավաղող անազնիվ և անպատասխանատու արարքներ:

2. Ծառայություն հանրային շահերին

2.1. Հանրային ծառայողը պարտավոր է գործել՝ ելնելով ազգային շահերից՝ ի բարօրություն Հայ պետականության:

2.2. Հանրային ծառայողը չպետք է օգտագործի իր ազդեցությունն ու իշխանությունը՝ ի նպաստ միայն բարեկեցիկ սոցիալական խմբերի և նրանց մոտակա շրջապատի:

2.3. Պետական ծառայողի գործողությունները չեն կարող ուղղվել բնակչության սոցիալապես անպաշտպան խմբերի դեմ. նրանք ոչ մի պարագայում չպետք է ենթարկվեն խտրականության:

2.4. Տարբեր սոցիալական խմբերի շահերի բախումները պետական ծառայողի կողմից պետք է դիտարկվեն օրինական իրավունքների, սոցիալ-քաղաքական և տնտեսական նպատակահարմարության, հասարակական պատկերացումների ու արդարության և բարոյական արժեքների տեսանկյունից:

Առանձին դեպքերում անհրաժեշտ և արդարացված են պակաս բարեկեցիկ սոցիալ-տնտեսական սուբյեկտների և բնակչության կատեգորիաների օգտին կատարվող բախումների լուծումները, եթե դրանք չեն հակասում գործող օրենքներին:

2.5. Հանրային ծառայողը պետք է հարգի մարդու արժանապատվությունը, աջակցի սոցիալ-իրավական հավասարությանը:

3. Բարոյական ընդհանուր սկզբունքների պահպանում

3.1. Հանրային ծառայողն իր գործունեության մեջ պետք է ղեկավարվի հումանիզմի, արդարության և ազնվության սկզբունքների վրա հիմնված բարոյական նորմերով:

3.2. Ազնվությունը և անշահախնդրությունը պետական ծառայությունում վարքի պարտադիր կանոններ են:

Պաշտոնատար անձի անկաշառությունը նրա ծառայողական գործունեության պարտադիր պայման է: Կոռումպացված պետական ծառայողը չի կարող շարունակել իր ծառայողական պարտականությունների կատարումը:

3.3. Պետական պաշտոնի ստանձնումը և պաշտոնի վարումը ենթադրում են պատասխանատվության և պարտքի բարձր զգացում: Հանրային ծառայողը պետք է կատարի հասարակության և օրենքի կողմից նրա վրա դրված պարտքը՝ անձնական պատասխանատվության գերագույն զգացումով:

4. Շահախնդիր գործողությունների անթույլատրելիությունը

4.1. Հանրային ծառայողն իր գործունեության մեջ չպետք է առաջնորդվի անձնական և շահախնդրական հետաքրքրություններով:

4.2. Հանրային ծառայողն իր ծառայողական գործունեության ընթացքում չի կարող տալ իր պաշտոնական պարտականություններից գատ ոչ մի անձնական խոստում:

4.3. Հանրային ծառայողն իրավունք չունի անձամբ իր և իր ընտանիքի անդամների համար օգտագործելու որևէ բարիք կամ առավելություն, որոնք կարող են տրամադրված լինել իր ծառայողական պարտականությունների կատարմանը խոչընդոտելու նպատակով: Պաշտոնական դիրքի չարաշահումը ներառում է իր կամ իր ընտանիքի անդամներին, հարազատներին, ընկերներին կամ երբևէ քաղաքական կամ գործնական հարաբերություններ ունեցած կազմակերպության անդամներին առավելություններ տալը: Այն ներառում է նաև ֆինանսական կամ քաղաքացիական պարտավորվածությունները:

4.4. Հանրային ծառայողն իրավունք չունի անձնական ծախսումների ծածկման նպատակով օգտագործել պաշտոնական պարտականությունների համար նախատեսված միջոցները: Հանրային ծառայողը, որն այնպիսի դիրք է գրավում, որտեղ իր անձնական շահերը հնարավոր է, որ բախվեն իր պաշտոնական պարտականություններին, պետք է օրենքով նախատեսված կարգով հայտարարի մինչև նշանակումը և յուրաքանչյուր անգամ, երբ դրան նպաստող փոփոխություններ տեղի ունենան:

4.5. Հանրային ծառայողը չպետք է օգտագործի ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում խորհրդապահորեն ստացված որևէ տեղեկատվություն՝ իբրև անձնական օգուտի աղբյուր:

- Հաշվի առնելով հանրային մարմիններին հասանելի տեղեկատվության մատչելիության վերաբերյալ ներպետական օրենսդրության պահանջները՝ հանրային ծառայողը պետք է տեղեկատվությունը բացահայտի միայն այն մարմնի նկատմամբ տարածվող կանոններին և պահանջներին համապատասխան, որտեղ ինքն աշխատում է:
- Հանրային ծառայողը պետք է համապատասխան քայլեր ձեռնարկի՝ պաշտպանելու իր պատասխանատվության տակ գտնվող կամ իրեն հասանելի դարձած տեղեկատվության անվտանգությունը և գաղտնիությունը:

4.6. Անձնական ձեռքբերումների օրինականության նկատմամբ ցանկացած կասկած դիտվում է պետական ծառայողի դեմ բարոյական մեղադրանք և չպետք է անուշադրության մատնվի:

4.7. Պետական ծառայողի ստեղծագործական գործունեությունը չպետք է ազդի նրա առաջնահերթ և հիմնական պարտականությունների կատարման վրա:

Հայրենիքում դասավանդման համար վարձատրությունը չպետք է գերազանցի պե-

տական ծառայողի պետական տարեկան աշխատավարձի սահմանված մակարդակը:

4.8. Հանրային ծառայողը կարող է ընդունել ընծաներ, վարձահատուցումներ և պարգևներ միայն հետևյալ պայմանների պահպանման դեպքում.

- վարձահատուցումն իրականացվում է պաշտոնապես և բացահայտ,
- պարգևատրությունը և խրախուսանքները պատշաճ ձևով հիմնավորված և բացատրված են,
- վերադաս ղեկավարությանը տեղյակ է պահվել ընծայի և վարձահատուցման փաստի վերաբերյալ:

4.9. Բարոյապես անթույլատրելի է վերցնել ընծաներ՝ իբրև շնորհակալություն պաշտոնական գործողությունների կատարման համար: Տվյալ դեպքում «ընծա» բառը պետք է հասկանալ ոչ միայն բուն իմաստով, այլև՝ որևէ բանի համար վարձ, նվիրատվություն, փոխատվություն, դրամի փոխանցում, ծառայությունների մատուցում, ինչպեսև տրանսպորտային ծախսերի, հանգստի, զվարճությունների վճար:

4.10. Հանրային ծառայողը չի կարող ընդունել ընծաներ անձանցից, ովքեր ձգտում են հասնել պետական մարմնի աշխատակցի հետ պաշտոնական գործողությունների կամ գործնական հարաբերությունների հաստատմանը, անձանցից, որոնց շահերը կարող են մեծապես կախված լինել ընծա ստացող ծառայողի՝ պաշտոնական պարտականությունների կատարումից կամ չկատարումից:

4.11. Հանրային ծառայողը ոչ ուղղակիորեն, ոչ էլ անուղղակիորեն չպետք է ներգրավված լինի որևէ գործարարության մեջ, քանզի դա անհամատեղելի է ծառայողական պարտականությունների բարեխիղճ կատարման հետ:

Դա նշանակում է, որ պետական ծառայողն անձամբ չպետք է անդամակցի որևէ կոմերցիոն կազմակերպության (կորպորացիա, ֆիրմա և այլն), մատուցել նրանց մասնագիտական ծառայություններ, որոնց համար նախատեսված է դրամային փոխհատուցում, թույլ տա օգտագործել իր անունը մասնավոր կազմակերպություններին, զբաղվի գործունեությամբ, որը ենթադրում է վճարային խնամակալություն, չպետք է դրամական վարձահատուցման համար անդամակցի որևէ ասոցիացիայի, կորպորացիայի և այլնի վարչությանը:

4.12. Պետական ծառայողին արտոնությունների տրամադրումն արդարացի է, եթե դրանք հստակորեն սահմանված են նորմատիվային դրույթներով, հրահանգներով:

4.13. Հանրային ծառայողը պարտավոր է խուսափել ցանկացած տեսակի հովանավորչությունից: Նա կարող է, պահանջել ըստ դատական կարգի կամ զանգվածային լրատվության միջոցներով կոռուպցիայի դեպքերի բացահայտ ճանաչումը:

Կոռուպցիայի դեպքերի բացահայտման գործում պետական ծառայողը չպետք է հաշվի առնի ծառայողական հիերարխիայի կամ կոլեգիալության սկզբունքները:

5. Ծառայողական պարտականությունների կատարում

5.1. Հանրային ծառայողը պետք է ամբողջ աշխատանքային ժամանակը նվիրի բացառապես ծառայողական պարտականությունների կատարմանը, բոլոր ջանքերը գործադրի հստակ և արդյունավետ աշխատանքի համար:

5.2. Հանրային ծառայողը պարտավոր է գործերը տանել պրոֆեսիոնալ իրավասությամբ, արդյունավետությամբ, ձգտել մասնագիտական բարձրագույն մակարդակի և խթանել աշխատակիցների կատարելագործումը:

5.3. Հանրային ծառայողը կարող է և պարտավոր է պահանջել իր իրավասության տակ գտնվող հարցերի լուծման վերաբերյալ ամբողջական և ճշմարտացի տեղեկությունների տրամադրում: Նա պատասխանատվություն է կրում տվյալները թաքցնելու կամ կեղծարարության համար նաև այն դեպքում, եթե չի պնդել ամբողջական տեղեկատվություն ստանալու համար:

Հանրային ծառայողը պետք է հարգի և պահպանի պաշտոնական պարտականությունների իրականացման ընթացքում ստացած մասնագիտական տեղեկատվությունը:

5.4. Հանրային ծառայողը պետք է իր իրավասության շրջանակներում ժամանակին ընդունի հիմնավոր լուծումներ և դրանց համար անձնական պատասխանատվություն կրի:

Առաջացած նորմատիվային բախման դեպքում որոշման մշակման և ընդունման ընթացքում անհրաժեշտ է դիմել վերադաս ղեկավարին, ներկայացնել հայցը կոլեգիայի քննարկմանը, անցկացնել լրացուցիչ խորհրդատվություններ:

5.5. Հանրային ծառայողը պարտավոր է կատարել ղեկավարության կարգադրությունները, ծառայողական հրահանգները, ենթակաների և պետերի հարաբերություններում պահպանել հիերարխիայի սկզբունքը, ինչպես նաև այլ ձևական և նորմատիվային կանոնները:

5.6. Հանրային ծառայողը պետք է օգտագործի միայն օրինական և բարոյական միջոցներ՝ ծառայողական առաջխաղացման համար:

Նա իրավունք ունի իմանալ, թե ինչ չափանիշերով է գնահատվելու նրա պրոֆեսիոնալ գործունեությունը:

Նա իրավունք ունի իր արդյունավետ և բարեխիղճ աշխատանքի համար արդարացի վարձատրվելու:

6. Կոլեգիալ վարք

6.1. Հանրային ծառայողը պետք է պահպանի հավասար և լավ կոլեգիալ հարաբերություններ, ձգտի համագործակցության, զարգացնի իր մեջ շփման կարողությունները և հմտությունները, մարդկանց հանդեպ բարյացակամությունն ու հարգանքը: Որոշակի անձանց կամ գործողությունների նկատմամբ անհանդուրժողականությունը

պետք է արտահայտվի պատշաճ ձևով և լուրջ հիմքերի առկայության դեպքում: Անթույլատրելի են կոպտություն, մարդկային արժանապատվության ստորացում, անտակտություն կամ որևէ մեկի հանդեպ գիտակցված խտրականացում:

6.2. Հանրային ծառայողը պահպանում է էթիկայի կանոնները: Նա հարգում է պաշտոնական վարքի կանոնները և կոլեկտիվի ավանդույթները, մասնակցում է կոլեկտիվ աշխատանքներին, ձգտում է ազնիվ և արդյունավետ համագործակցության:

6.3. Հանրային ծառայողը չպետք է որևէ ձևով և չափով իր իրավագորտնոտեսական, նյութական և այլ պետական հնարավորությունները, աջակցություն ցուցաբերելու նպատակով, տրամադրի քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին և ցանկացած այլ քաղաքական ուժի՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

6.4. Բարոյական նորմերը թելադրում են, որ պետական ծառայողն իր քաղաքական կարիերան իրականացնի միայն զբաղեցրած պաշտոնից ազատվելուց հետո:

Հուշագիր հեղինակին

«21-րդ դար» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ դար» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից պատվիրված նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ դար» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով):
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը (*CV*):
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա համառոտագիր (հոդվածի լեզվով) և ամփոփագիր (բնագրից տարբեր լեզուներով):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), շ. (ռուսերեն), ք. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, շ. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝
 1. *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
 2. *Շարիպովա Ք.*, Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
 3. *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>, Sept. 28, 1998.
5. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ԴԴ ԴԱՐ ՆՈՐԱՎԱՆԹ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՀԱՆԴԵՍ
Խմբագրական խորհուրդ

Հայաստանի Հանրապետություն, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Հանձնված է տպարան 02.02.2009թ.
Հիմնադիր՝ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 15 մամուլ: Տպաքանակը՝ 300:
Տառատեսակը՝ Sylfaen
Վկայականը՝ 01Մ 000234
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում